

# Հանրային իրազեկում

## *Տեղեկատվական հաղորդում*

*2008 թվականի մարտի 1-2-ին մայրաքաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների դեպքերի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող քրեական գործով նախաքննության արդյունքների մասին*

## Դեպքերի նկարագիր

2008թ. մարտի 1-ի և 2-ի դեպքերի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննող քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներով՝ դեպքի վայրերի, դիկաների, շինությունների, ավտոմեքենաների, տարբեր իրերի ու առարկաների զննման, առգրավումներ, խուզարկություններ, քննչական փորձարարություններ, ճանաչումներ, առերեսումներ կատարելու վերաբերյալ արձանագրություններով, վկաների, տուժողների ցուցմունքներով, կասկածյալների, մեղադրյալների, դատապարտյալների խոստովանական ցուցմունքներով, բազմաթիվ փորձաքննությունների եզրակացություններով, զանգվածային անկարգությունները և դրանց նախորդող դեպքերը պատկերող տեսանյութերով, դատարանի թույլտվությամբ կատարված գաղտնալսումների վերձանումներով, քրեական գործերով օրինական ուժի մեջ մտած դատավճիռներով պարզվել և հիմնավորվել է հետևյալը.

2008թ. փետրվարի 20-ից սկսած՝ Երևանի Ազատության հրապարակում կազմակերպվել և 10 օր տևողությամբ անընդմեջ, օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվել են մայրաքաղաքի կենսագործունեությունը, ճանապարհատրանսպորտային երթևեկությունը, պետական հիմնարկների բնականոն գործունեությունն ու ազգաբնակչության հանգիստն ու անդորրը

խանգարող զանգվածային հրապարակային միջոցառումներ, երթեր, շուրջօրյա հանրահավաքներ:

Երևանի քաղաքապետարանն իրազեկվել է միայն 2008թ. փետրվարի 20-ին՝ ժամը 17<sup>00</sup>-ից 22<sup>00</sup>-ը, Ազատության հրապարակում անցկացվող հանրահավաքի մասին: Այսինքն՝ այն եղել է արտոնված միայն փետրվարի 20-ին՝ մինչև ժամը 22<sup>00</sup>-ը: Դրան հաջորդող օրերին, այն է՝ փետրվարի 21-ից մինչև մարտի 1-ն Ազատության հրապարակում կամ որևէ այլ վայրում զանգվածային հրապարակային միջոցառում անցկացնելու մասին քաղաքապետարանում որևէ իրազեկում չի ստացվել:

Միջոցառման կազմակերպիչներին և մասնակիցներին ոստիկանությունը բազմիցս, մի քանի օր շարունակ բարձրախոսով դիմել և տեղեկացրել է, որ նրանց գործողություններն անօրինական են՝ պահանջելով դադարեցնել զանգվածային միջոցառումը և ազատել հրապարակը: Ընդ որում, զանգվածային միջոցառման անցկացման անօրինականության մասին օրեր շարունակ նախազգուշացնելուց և զանգվածային միջոցառումները դադարեցնել պահանջելուց զատ ոստիկանությունը որևէ այլ գործողություն չի ձեռնարկել այն հարկադրաբար դադարեցնելու համար, սակայն, ոստիկանության հնչեցրած կոչերն արձագանք չեն գտել, անտեսվել են կազմակերպիչների և մասնակիցների կողմից:

Երկրում ներքաղաքական վիճակն ապակայունացնելու և զանգվածային անկարգություններ հրահրելու դիտավորությամբ կազմակերպվել ու իրականացվել են հանցավոր մտադրությունն ի կատար ածելուն ուղղված գործողություններ:

Հասարակության լայն շրջանակներում դժգոհություն առաջացնելու, մարդկանց նոր զանգվածներ ներգրավելու մղումով, ինչպես նաև՝ որպես պետական իշխանության ներկայացուցիչների՝ ոստիկանության նկատմամբ ուժ գործադրելու պատրաստակամություն ձեւավորելու նպատակով, տարբեր միջոցներով՝ անձնական և ծառայողական ազդեցություն գործադրելով, խոստումների և որոշակի վարձատրության դիմաց հավաքագրվել է մարդկանց հոծ բազմություն, որը ներգրավվել է 2008թ. փետրվարի 20-ից Երևան քաղաքում անցկացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին:

Համաժողովրդական բողոքի պատրանք ստեղծելու, միևնույն ժամանակ անընդմեջ շուրջօրյա զանգվածային միջոցառումները, պարբերաբար կրկնվող երթերը միջազգային հանրությանը «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան ներկայացնելու նպատակով փորձել են մեկնաբանել՝ իբրև թե ոչ զանգվածային միջոցառումը՝ նստացույցը, վերաճել է բազմահազարանոց հանրահավաքի, այնինչ՝ փաստացի մարդկանց մասնակցությունն ապահովվել է տարբեր միջոցներով, այդ թվում՝ հրապարակային կոչերով (ինչի մասին են վկայում նաև տարբեր ՋԼՄ-ների միջոցով արվող հայտարարությունները՝ Ազատության հրապարակում ամենօրյա հանրահավաքներ անցկացնելու վերաբերյալ):

Մարդկանց հոծ զանգվածների ներկայությունն ապահովելու համար կատարվել են նախապատրաստական աշխատանքներ: Իրականացվել է բոլոր այն կենցաղային անհրաժեշտ պարագաների մատակարարումը, ինչը կնպաստի Ազատության հրապարակում մարդկանց հնարավորինս երկար պահելուն: Գիշերելու, ինչպես նաև զենք, ռազմամթերք և հանրավտանգ այլ առարկաներ պահելու համար տեղադրվել են վրաններ : Անվճար սնունդ, ոգելից խմիչք և ծխախոտ բաժանելով՝ միջացառմանը ներգրավել են մշտական զբաղմունք չունեցող մեծ թվով մարդկանց, նրանց մի մասին ցերեկվա ժամերին հրապարակում գտնվելու համար վճարվել է 1000-ից 3000 դրամ, իսկ գիշերելու համար՝ 5000-ից 10000 դրամ՝ կախված մասնակցության ակտիվությունից:

Հրապարակային այդ շուրջօրյա տևական միջոցառումները խաթարել են հասարակական կարգը, մասնակիցները կազմակերպիչների դրոմամբ չեն ենթարկվել հրապարակային միջոցառումներն օրենքով սահմանված կարգով անցկացնելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ոստիկանության որոշումների պահանջներին, վնասել են Ազատության հրապարակում գտնվող գույքը, խոչընդոտել Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի, դրան հարող շենքերի ազատ մուտքն ու ելքը, մարդկանց անդորրը, կազմալուծել մայրաքաղաքի բնականոն կենսագործունեությունը, իսկ

հարակից բնակելի և վարչական շենքերի շքամուտքերը վերածվել են հասարակական զուգարանների:

Մարդկանց որոշ խմբերի համար Ազատության հրապարակը դարձել է թմրանյութեր ձեռք բերելու և օգտագործելու՝ իրավապահ մարմինների հսկողությունից դուրս գտնվող «սպահով» վայր:

Չանգվածային միջոցառումների ժամանակ կազմակերպիչները սադրիչ հրահանգներով, ամբոխավարական կրքեր բորբոքելով բազմությանը տրամադրել և նախապատրաստել են զանգվածային բռնարարքների և անհնազանդության:

Հավաքված բազմությանը պահելով մշտական լարվածության մեջ՝ կազմակերպվել է հիշյալ միջոցառումներին մարդկանց խմբերի անընդմեջ ներկայությունն ապահովող կենցաղային անհրաժեշտ պարագաների մատակարարումը: Տրվել են բռնություն կիրառելու հրահանգներ՝ ցանկացած պահի պատրաստ լինելու վճռական քայլերի և պայքարի:

2008թ. մարտի 1-ին Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ հրահրելու և իրագործելու մտադրությամբ կազմավորվել են զանգվածային բռնարարքների կատարմանը պատրաստ անձանց խմբեր և կազմակերպվել նրանց շրջանում ապօրինի կերպով ձեռք բերված հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի, սառը զենքի, ինչպես նաև մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների բաշխում:

2008թ. փետրվարի 26-ից 29-ն ընկած ժամանակահատվածում իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու նպատակով Ազատության հրապարակ են փոխադրվել մետաղյա ձողեր, փայտե և երկաթե մահակներ, ամրաններ, դյուրավառ հեղուկով տարաներ, որոնք թաքցվել են հրապարակում տեղակայված վրաններում:

Բացի այդ, Վրեժ Նիկոլյանը, սատարելով ու աջակցելով 2008թ. մարտի 1-ին Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ հրահրելու ու կազմակերպելու դիտավորությամբ գործողություններ իրականացնող կազմակերպիչներին, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների

նկատմամբ բռնություն գործադրելու, մարմնական վնասվածքներ պատճառելու, նրանց օրինական գործողություններին խոչընդոտելու նպատակով 2008թ. փետրվարի 29-ին պատվիրել է մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված նետողական սառը զենք հանդիսացող «ոզնի» կոչվող 80 մետաղական կոնստրուկցիա: Ընդ որում, կոնստրուկցիաները պատրաստող վարպետներին պարտավորեցրել է պատվերը կատարել շտապ և նույն օրը կազմակերպել է դրանց տեղափոխումն Ազատության հրապարակում տեղակայված «Հատուկ գունդ» ցուցանակը կրող վրան:

Ազատության հրապարակում հավաքված բազմությանն առավել գրգռելու, զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով 2008թ. փետրվարի 29-ի երեկոյան հավաքվածներին հորդորել են տուն չգնալ, գիշերել հրապարակի տարածքում, քանզի այդ գիշերը կարևոր է բոլորի համար, շատ մարդ է պետք լինելու, ինչի դիմաց տրվել և խոստացվել է նյութական փոխհատուցում, իսկ առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար պարգևատրումներ են խոստացվել՝ անգամ պաշտոնների նշանակման ձևով:

2008թ. փետրվարի 28-ին և 29-ին Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում և ազգային անվտանգության ծառայությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ նախապատրաստվում են սադրիչ գործողությունների իրականացմամբ մարտի 1-ին մայրաքաղաքում հրահրել զանգվածային անկարգություններ, և այդ նպատակով Ազատության հրապարակում ընթացող զանգվածային միջոցառման մասնակիցներին պետք է բաժանվեն մեծ քանակությամբ մահակներ, մետաղյա ձողեր, պայթուցիկ նյութեր, ինչպես նաև՝ հրազեն և նռնակներ:

Նշված տեղեկատվության հիման վրա, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ և 19-րդ հոդվածների, «Օպերատիվ – հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 24-րդ և 36-38-րդ հոդվածների պահանջների համաձայն՝ 2008թ. փետրվարի 29-ին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալը վարչության պետին ներկայացրել է միջնորդություն՝ «տեղանքի

հետագոտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու վերաբերյալ՝ նպատակ ունենալով ստանալ տեղեկություն պայթուցիկ նյութերի, գենքի, երկաթյա ձողերի, դյուրավառ հեղուկներով լցված շշերի և մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված այլ առարկաների առկայության վերաբերյալ:

Քրեական հետախուզության գլխավոր վարչության պետը նույն օրը կայացրել է որոշում՝ 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 7-ին, Ազատության հրապարակում «տեղանքի հետագոտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելը թույլատրելու մասին:

Միջոցառումն իրականացնելու նպատակով, նույն օրը, ՀՀ ոստիկանության պետի տեղակալի մոտ անցկացվել է օպերատիվ խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել, հաստատվել է Ազատության հրապարակում 2008թ. մարտի 1-ին իրականացվելիք միջոցառման պլանն ու այդ ընթացքում օգտագործվող հիմնական և օժանդակ ուժերի հաշվարկը:

Ազատության հրապարակում տեղանքի հետագոտում իրականացնելը հանձնարարվել է 133 ոստիկաններից բաղկացած խմբին, որում ընդգրկված են եղել ոստիկանության օպերատիվ ծառայությունների աշխատակիցներ: Միևնույն ժամանակ, համաձայն միջոցառման ընթացքում օգտագործվող ոստիկանական ուժերի հաշվարկի, իրավիճակի սրման դեպքում ազգաբնակչության անվտանգությունն ապահովելու և հասարակական կարգը պահպանելու նպատակով Ազատության հրապարակին հարակից տարածքներում տեղակայվել են ոստիկանության օժանդակ ուժեր՝ ոստիկանության 602 ծառայողներ: Ոստիկանության զորքերի հասարակական կարգի պահպանության գնդի ուժերն իրականացվող միջոցառմանը ներգրավված չեն եղել, նրանք տեղակայված են եղել Մաշտոց-Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում՝ Ֆրանսիայի հրապարակում, և գտնվել են ռեզերվում:

Տեղանքի հետագոտում իրականացնելու նպատակով Ազատության հրապարակ ժամանած ոստիկանության ծառայողները եղել են անզեն և առանց անհատական պաշտպանության միջոցների: Ոստիկանության օժանդակ ուժերը

նույնպես եղել են անգեն, իսկ հատուկ պաշտպանիչ միջոցներ՝ վահան, մահակ և սաղավարտ, ունեցել են միայն պարեկապահակային ծառայության գնդի ծառայողները:

2008թ. մարտի 1-ի առավոտյան Ազատության հրապարակում ՀՀ ոստիկանության գործողությունների ղեկավար է հանդիսացել ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Սաշիկ Աֆյանը, իսկ օպերատիվ-հետախուզական գործողությունները ղեկավարել է ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Հովիկ Թամամյանը:

2008թ. մարտի 1-ի վաղ առավոտյան, երբ ոստիկանության աշխատակիցները, իրացնելով Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով հրագենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի, մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված այլ առարկաների ապօրինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկությունը, փորձել են Ազատության հրապարակում ստուգել, հաստատվելու դեպքում առգրավել և կանխել դրանց հետագա պահելը, շրջանառությունն ու գործածումը: Չանգվածային միջոցառման կազմակերպիչները, տեղեկանալով որ ոստիկանության ստորաբաժանումները պատրաստվում են օպերատիվ միջոցառում իրականացնել Ազատության հրապարակում, նախապես արթնացրել են տեղակայված վրաններում գիշերող բազմությանը, կոչ արել նրանց զինվել նախապես բերված հանրավտանգ առարկաներով և դիմադրություն ցույց տալ ոստիկաններին: Օպերատիվ միջոցառում իրականացնելու ոստիկանության մտադրության մասին զանգվածային միջոցառման կազմակերպիչների նախապես տեղեկացված լինելու հանգամանքը հրապարակային ելույթներում հաստատել են նաև զանգվածային միջոցառման կազմակերպիչները, ինչը հիմնավորվել է նաև այդ թվում Ալեքսանդր Արզումանյանի եւ Արարատ Ջուրաբյանի միջեւ կայացած հեռախոսազրույցների գաղտնալսումների վերծանությամբ. (01.03.08թ.՝ ժամը 01:57, Ալեքսանդր Արզումանյան- 6 անց կես ներքին գորքերի տրիվոգա է, ապեր.

Արարատ Ձուրաբյան- Եղավ, ապեր), օրինական ուժի մեջ մտած դատավճիռներով):

Իսկ երբ ոստիկանության ստորաբաժանումները կոչ են արել հնարավորություն ընձեռել հետազոտել տարածքը, կազմակերպիչների հրահանգով, դրոմամբ և անմիջական ղեկավարմամբ, զինված ամբոխը, որոնց թվում՝ ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Մյասնիկ Մալխասյանի վարորդ Արման Շահինյանը, ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Հակոբ Հակոբյանի վարորդ Մելիք Գրիգորյանը, ինչպես նաև Մուշեղ Սաղաթելյանը, Դավիթ Աղայանը, Մեսրոպ Ջաբարյանը, Արմեն Ավագյանը, Սարգիս Պարունակյանը, Ռաջո Պետրոսյանը, Դավիթ Մաթևոսյանը, Ռուբեն Ոսկանյանը, Դավիթ Համբարձումյանը, Հովհաննես Ղազարյանը, Վարտգեզ Գասպարին, Դավիթ Առաքելյանը, Լևիկ Խաչատրյանը, Յաշա Մելքոնյանը, Սողոմոն Երիցյանը, Խաչիկ Գասպարյանը, Արամ Բարեղամյանը, Մասիս Այվազյանը, Սամվել Հարությունյանը, Տիգրան Բաղդասարյանը, Գրիշա Սիմոնյանը, Հրայր Փենինյանը, Աշոտ Մանուկյանը, Վարդգես Հայոցյանը և ուրիշներ, հարձակում են գործել, հանրավտանգ հիշյալ պարագաների օգտագործմամբ դիմադրություն ցույց տվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրել վերջիններիս նկատմամբ:

Ստեղծված իրավիճակից և իրավախախտումների բնույթից ելնելով՝ օպերատիվ որոշում է կայացվել անհապաղ սկսել խմբակային անհնազանդությունը կանխելու միջոցառումներ՝ դրանում ներգրավելով իրավիճակի սրման դեպքում ազգաբնակչության անվտանգությունն ապահովելու և հասարակական կարգը պահպանելու նպատակով Ազատության հրապարակի հարակից տարածքներում տեղակայված ոստիկանության օժանդակ ուժերը՝ ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումները՝ թվով 215, ՊՊԾ գունդը՝ 250, ոստիկանության Երեւան քաղաքի վարչության կենտրոնական ապարատը՝ 43, ինչպես նաև ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատը՝ 34 եւ ԿՀԴՊ ԳՎ՝ 60 ծառայողներով:



Ընդ որում, միջոցառումն իրականացվել է այնպես, որ հնարավորություն տրվի ցուցարարներին Տերյան և Թումանյան փողոցների ուղղությամբ հեռանալու:

Դիմադրության արդյունքում ՀՀ ոստիկանության 34 աշխատակիցներ՝ Կարեն Բարակեխյանը, Տիգրան Հովհաննիսյանը, Սահրադ Դավթյանը, Արշակ Ջոզանյանը, Սամվել Ասատրյանը, Սարգիս Մակարյանը, Արտավազդ Պետրոսյանը, Արթուր Տեր-Պողոսյանը, Արմեն Մուրադյանը, Վարուժան Էլիզբարյանը, Վասիլի Խաչատրյանը, Մհեր Կոստանդյանը, Հարություն Գալստյանը, Տիգրան Հայրապետյանը, Վարդան Գրիգորյանը, Քաջիկ Երեմյանը, Սամվել Պետրոսյանը, Արտյոմ Հակոբյանը, Գեղամ Հարությունյանը, Արմեն Գրիգորյանը, Արթուր Երեմյանը, Ալեքսանդր Մանուկյանը, Սերգեյ Մանուկյանը, Արսեն Արշակյանը, Լևոն Շամիլյանը, Արսեն Չաքարյանը, Արթուր Խաչատրյանը, Էրիկ Պողոսյանը, Վարդան Հարությունյանը, Գևորգ Ամրախյանը, Էդուարդ Ավետիսյանը, Իգոր Մեսրոպյանը, Գարեգին Քամալյանը, Վրույր Գաբրիելյանը ստացել են ծանրության տարբեր աստիճանի, այդ թվում նաև՝ ծանր մարմնական վնասվածքներ:

Իրականացված միջոցառման արդյունքում Ազատության հրապարակում հայտնաբերվել են ծրագրված զանգվածային անկարգությունների համար հրապարակ բերված.

- 6,35մմ տրամաչափի չեխական արտադրության «Z» մոդելի «B 274141» համարի ատրճանակ՝ պահունակում 4 փամփուշտ,
- 7,62մմ տրամաչափի «TT» տեսակի ատրճանակ՝ պահունակում 5 փամփուշտ,
- 9մմ տրամաչափի «Astra A-75L» մոդելի «23589-95A» համարի ատրճանակ՝ պահունակում 5 փամփուշտ,
- 2 հատ «Заря 2» տեսակի լուսաձայնային նռնակ,
- 2 հատ «Ռ-Գ-Գ-5» տեսակի ձեռքի նռնակ,
- 7 հատ «Ֆ-1» տեսակի ձեռքի նռնակ,
- 2 հատ ինքնաշեն «ԱՏԵ-92» տեսակի ձեռքի նռնակ,
- 2 հատ «Ռ-Գ-42» տեսակի ձեռքի նռնակ,

- 200 գրամանոց տրոտիլային պայթադուս,
- 1 հատ «ՄՈՒՎ-2» տեսակի հարվածային մեխանիզմ,
- գործարանային արտադրության 1 հատ 5,45մմ տրամաչափի ինքնաձիգի (ԱԿ-74, ԱԿՍ, ԱԿՍՈՒ) և 1 հատ 5,45մմ տրամաչափի զնդացրի (ՌՊԿ-74) պահունակ,
- 76 հատ 5,45մմ տրամաչափի մարտական փամփուշտ,
- 25 հատ 7,62մմ տրամաչափի հրացանային մարտական փամփուշտ, 30 հատ 5,45մմ տրամաչափի և 27 հատ 7,62մմ տրամաչափի ինքնաձիգի մարտական փամփուշտ,
- 1 հատ 5,45մմ տրամաչափի փամփուշտ,
- 5 հատ թեք տաշվածքով փայտյա ձող,
- 2 ռետինե մահակ,
- 72 հատ տարբեր երկարության և տրամագծի մետաղական ձող, ամրան և խողովակ,
- 38 հատ «ոզնի» կոչվող մետաղական կոնստրուկցիա,
- դյուրավառ հեղուկով լցված 3 շիշ (Մոլոտովի կոկտեյլ),
- 3 պլաստմասսե տարա՝ դյուրավառ հեղուկով,
- քլորդիֆտորմեթան պարունակող բաց կանաչ մետաղյա բալոն,
- 18 հակազագ և մեկ կոնտեյներ,
- պլաստմասսե և փայտե բռնակներով 2 դանակ,
- 48 հատ դեղահաբ, որոնք պարունակում են «տրիֆլուպերազին» տեսակի հոգեներգործուն բաղադրատարրեր,
- 10 հատ դեղահաբ, որոնք պարունակում են «տրիհեքսիֆենիդիլ» տեսակի հոգեներգործուն բաղադրատարրեր,
- 4 բժշկական բռնիչ-մկրատ,
- 2 դատարկ ներարկիչ:

Հայտնաբերված իրեղեն ապացույցներն ուղարկվել են համապատասխան փորձաքննությունների: Փորձաքննությունների եզրակացություններով՝ 3

ատրճանակները հանդիսանում են հրազեն, 172 փամփուշտներն ու 12 նռնակները՝ ռազմամթերք, 38 «ոզնի» կոչվող մետաղական կոնստրուկցիաները՝ նետողական սառը զենք, 48 դեղահաբերը՝ հոգեմետ նյութեր:

Իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր և վտանգավոր բռնություն գործադրելու համար դատի են տրվել Արման Շահինյանը, Մելիք Գրիգորյանը, ինչպես նաև Մուշեղ Սաղաթելյանը, Գավիթ Աղայանը, Մեսրոպ Ջաքարյանը, Արմեն Ավագյանը, Սարգիս Պարունակյանը, Ռաջու Պետրոսյանը, Գավիթ Մաթևոսյանը, Ռուբեն Ոսկանյանը, Գավիթ Համբարձումյանը, Հովհաննես Դազարյանը, Վարտգեզ Գասպարին, Գավիթ Առաքելյանը, Լևիկ Խաչատրյանը, Յաշա Մելքոնյանը, Սողոմոն Երիցյանը, Խաչիկ Գասպարյանը, Արամ Բարեղամյանը, Մասիս Այվագյանը, Սամվել Հարությունյանը, Տիգրան Բաղդասարյանը, Գրիշա Սիմոնյանը, Հրայր Փենինյանը, Աշոտ Մանուկյանը, Վարդգես Հայոցյանը, նրանց նկատմամբ կայացվել են մեղադրական դատավճիռներ:

Խաչիկ Ստեփանյանը, Գրիգոր Հակոբյանը, Հովհաննես Սիմոնյանը, Կարեն Մարտիրոսյանը, Ստեփան Սարգսյանը, Գրիշա Սիմոնյանը, մասնակցելով Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքներին, հանրահավաքի այլ մասնակիցներից պարբերաբար ձեռք են բերել և առանց բժշկի թույլտվության գործածել «Կանաբիս» խմբի թմրամիջոցներ:

Պարզվել է նաև, որ Ազատության հրապարակում հավաքված անձինք, տարբեր խմբերի բաժանված, Երևան քաղաքի Մաշտոցի և Հյուսիսային պողոտաներով, Աբովյան փողոցով շարժվել են դեպի Գրիգոր Լուսավորչի փողոցում տեղակայված ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան հարակից տարածք, որի ընթացքում պարբերաբար խախտելով հասարակական կարգը՝ շարունակել են քարերով և տարատեսակ առարկաներով հարվածել ոստիկանության աշխատակիցներին, հայիոյանքներ տալ նրանց հասցեին:

Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի ոստիկանները հետևել են կարգազանց քաղաքացիներին՝ վերջիններիս կողմից իրավա-

խախտումները կանխելու և հասարակական կարգը պահպանելու նպատակով: Չնայած այն բանի, որ քարերով և այլ առարկաներով զինված անձանց պարբերաբար կրկնվող հարձակումներից ոստիկանության աշխատակիցները փորձել են պաշտպանվել վահաններով, նրանցից մի քանիսն ստացել են մարմնական վնասվածքներ:

Հանրապետության հրապարակի մատույցներում՝ Ազգային պատկերասրահի շենքի դիմաց, Գեղամ Հարությունյանը, Հովհաննես Դուկասյանը և ոստիկանության այլ աշխատակիցներ փորձել են կանխել իրենց նկատմամբ իրականացվող բռնությունը, սպահովել հասարակական կարգի պահպանությունը: Ինքնությունը չպարզված մի տղամարդ, չենթարկվելով ոստիկանների ուղղությամբ քարեր նետելը դադարեցնելու բազմաթիվ բանավոր պահանջներին և զգուշացումներին, ընդհուպ մոտենալով ոստիկանների շարքերին, շարունակել է քարերով հարվածել և հայիոյել վերջիններիս, որից հետո վազքով մոտենալով Հանրապետության հրապարակի շատրվանների մոտ կայանված տաքսի ավտոմեքենային՝ փորձել է փախուստի դիմել, սակայն մոտակայքում գտնվող ոստիկանության աշխատակիցները բռնել են նրան և իջեցրել ավտոմեքենայից:

Գեղամ Հարությունյանը և Հովհաննես Դուկասյանը, հասնելով արդեն վնասագերծված իրավախախտ քաղաքացուն, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-31-րդ հոդվածներով սահմանված ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ կիրառելու հիմքերի բացակայության պայմաններում, նշված քաղաքացուն բերման ենթարկելու փոխարեն, արատավորելով ոստիկանության հեղինակությունը, դիտավորությամբ կատարել են տվյալ իրադրությունում իրենց լիազորությունների շրջանակից ակնհայտորեն դուրս եկող, բռնությամբ զուգորդված գործողություններ՝ ի պաշտոնե իրենց հատկացված հատուկ միջոց հանդիսացող ռետինե մահակով մի քանի անգամ հարվածելով հիշյալ քաղաքացուն:

Ոստիկանական հատուկ միջոց հանդիսացող ռետինե մահակի գործադրմամբ, բռնությամբ զուգորդված, դիտավորությամբ իրենց լիազորությունների շրջանակից ակնհայտ դուրս եկող գործողություններ կատարելու համար Գեղամ Հարությունյանը և Հովհաննես Դուկասյանը մեղադրվել

են ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով, նրանց նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ:

Այնուհետև, զանգվածային միջոցառման մասնակիցները զանգվածային անկարգությունների կազմակերպիչների ուղղորդմամբ և հրահանգով տեղափոխվել, հավաքվել են Երևան քաղաքի մի շարք փողոցների կարևոր տրանսպորտային հանգույց հանդիսացող Մյասնիկյանի արձանի հարակից տարածքում, հատուկ պահպանվող օբյեկտներ հանդիսացող` ՀՀ-ում Ֆրանսիայի, Իտալիայի և Ռուսաստանի Դաշնության դեսպանատների հարևանությամբ:

Ժամը 11-ի սահմաններում հավաքվածների թիվը բազմապատկվել է` հասնելով մոտ 2000-ի, որը շարունակել է ինտենսիվորեն աճել, իչին զուգահեռ ստեղծվել են բարիկադներ ու արգելապատնեշներ, լիովին կազմալուծվել են հասարակական կարգը, տրանսպորտի և տարածքին հարակից կազմակերպությունների աշխատանքները:

Ստեղծված իրավիճակում ՀՀ ոստիկանությունում, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետի դրույթների համաձայն, որոշվել է խափանել անվերահսկելի դարձող ամբոխի հակաօրինական գործողությունները: Սակայն վերջիններս հարձակվել են ոստիկանների վրա, նրանց ուղղությամբ նետել քարեր, տարբեր առարկաներ: Փոքրածավալ ոստիկանական ուժերով չի հաջողվել վերահսկել հասարակական կարգը, այդ պատճառով, ՀՀ ոստիկանության պետի տեղակալների գլխավորությամբ, իրադրության վայրում գտնվող ոստիկանության և ոստիկանության զորքերի ուժերով ժամը 12.00-ի սահմաններում փակվել են Գր. Լուսավորչի փողոցի տարբեր հատվածները, և ավելորդ առճակատումից խուսափելու նպատակով որոշվել է գնալ բանակցային ճանապարհով:

Ֆրանսիայի դեսպանատան հարակից տարածքում ՀՀ ոստիկանության պետի տեղակալներ Սաշիկ Աֆյանը, Հովիկ Հունանյանը և ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի գլխավոր վարչության պետ Աշոտ Գիզիրյանն սկսել են բանակցել ընդդիմադիր պատգամավորներ Վարդան Խաչատրյանի, Զարուհի Փոստանջյանի, Անահիտ Բախչյանի, Արմեն

Մարտիրոսյանի, ինչպես նաև ընդդիմադիր այլ ակտիվիստներ՝ Երջանիկ Աբգարյանի և Սամվել Գևորգյանի հետ: Բանակցություններին մասնակցել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը: Միջոցառման մասնակիցներին առաջարկվել է Արշակունյաց պողոտայով տեղափոխվել դեպի կայարանամերձ հրապարակ, ինչին նրանք չեն համաձայնել՝ կենտրոնից հեռու լինելու պատճառաբանությամբ: Այնուհետև առաջարկվել է զանգվածային միջոցառման համար ընտրել Հանրապետական մարզադաշտի հարակից տարածքը, ինչը միջոցառման մասնակիցներին ներկայացնող բանակցողների կողմից նույնպես մերժվել է:

Ժամը 13.45-ին բանակցողներին են միացել ընդդիմության առաջնորդներից՝ Լևոն Զուրաբյանը և Գավիթ Շահնազարյանը: Վերջինս առաջարկել է զանգվածային միջոցառման համար տրամադրել Մատենադարանին հարակից տարածքը: Լարվածությունը թուլացնելու համար ոստիկանությունը համաձայնել է՝ միաժամանակ տալով երթի և զանգվածային միջոցառման ընթացքում անվտանգության երաշխիքներ: Այդ նպատակով, համաձայն ձեռք բերված պայմանավորվածության, միջոցառման մասնակիցներին բաժանող ոստիկանության ուժերի շղթան հանվել է և մյուս ուժերի հետ մեկտեղ վերատեղակայվել է Գր. Լուսավորչի փողոցի երկու կողմերով դեպի Մաշտոցի պողոտա՝ ապահովելու համար միջոցառման մասնակիցների երթի ուղեկցումը դեպի Մատենադարան: Ավելին, ոստիկանությունը Լևոն Զուրաբյանին ավտոմեքենա է տրամադրել՝ Լևոն Տեր-Պետրոսյանի նստավայր մեկնելու և վերջինիս հետ հավաքի հնարավոր նոր տեղը քննարկելու նպատակով:

Բանակցությունների արդյունքում՝ միջոցառման մասնակիցներին բաժանող ոստիկանության ուժերի շղթան հանելուց հետո, չնայած ձեռք բերված պայմանավորվածությանը, Նիկոլ Փաշինյանը և մյուսները հրաժարվել են ընդունել հասարակական կարգի պահպանման և զանգվածային միջոցառման մասնակիցների անվտանգությունն ապահովելու նպատակով հանրահավաքն այլ վայրում իրականացնելու՝ իշխանությունների առաջարկը: Ավելին, իրենց ելույթներով և հրահանգներով արել են ամեն ինչ հավաքված բազմությանը տեղում

հնարավորինս երկար պահելու, այլ վայր տեղափոխելը ձախողելու, ինչպես նաև մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված և ձեռքի տակ եղած այլ միջոցներով զինվելու, հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանության աշխատակիցների նկատմամբ բռնություն գործադրելու, վերջիններիս օրինական պահանջներին ակտիվորեն չենթարկվելու ուղղությամբ: Ջանգվածային անկարգությունների կազմակերպիչների անմիջական ցուցումներով նոր տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև այլ գույք վնասելով՝ ամրացվել են ստեղծված արգելապատնեշները, որին զուգահեռ՝ Նիկոլ Փաշինյանը կոչեր է արել զինվել և պատրաստ լինել դիմակայության, ինչպես նաև ցանկացած եղանակով նոր մարդիկ ներգրավել:

Ջանգվածային անկարգությունների մասնակիցներն աղբատար ավտոմեքենայի վարորդին մարմնական վնասվածքներ պատճառելու սպառնալիքներով կանգնեցրել, Գր.Լուսավորչի և Ջաքիյան փողոցների խաչմերուկի մեջտեղում դատարկել են բեռնախցիկը, որից հետո, հավաքված բազմությանը բռնարարքների մղելու դիտավորությամբ, սադրիչ եւ ստահող լուրեր են տարածել, թե իբր Ազատության հրապարակում ոստիկանները մանկահասակ երեխայի են սպանել, իսկ Լաուրա Մելքոնյանը, աղբի միջից գտնելով երեխայի կոշիկ, տարածվող լուրերի ազդեցության տակ հայտարարել է, թե դա սպանված երեխայի կոշիկն է: Հետագայում, կրքերն ավելի բորբոքելու նպատակով, Մյասնիկյանի արձանի հարևանությամբ՝ քննությամբ դեռևս չպարզված անձինք մոմեր են վառել՝ ի հիշատակ գոհված երեխայի:

Այդ ընթացքում ամբոխը հարձակվել է հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանության ծառայողների վրա, որից հետո զանգվածային անկարգության մասնակիցները պարբերաբար ծեծի են ենթարկել ոստիկանության մի շարք աշխատակիցների, այդ թվում՝ ՀՀ ոստիկանության Գուգարքի բաժնի պետ Գրիշա Այվազյանին, ում ծեծի ենթարկելու ընթացքում Արա Հովհաննիսյանը հափշտակել է վերջինիս հաշվեցուցակային ատրճանակը:

Ոգեշնչվելով կազմակերպիչների ռազմաշունչ, ոստիկանների նկատմամբ կիրառված բռնությունները փառաբանող ելույթներից՝ վերջիններիս անմիջական

կազմակերպմամբ ու ուղղորդմամբ զանգվածային անկարգությունների մասնակիցները զինվել են մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված առարկաներով՝ քարեր, ձողեր, փայտեր և այլն, այնպես էլ նախապես պատրաստված և անկարգությունների վայր բերված պայթուցիկ նյութերով, պայթուցիկ սարքերով, հրազենով և «Մոլոտովի կոկտեյլ» կոչվող դյուրավառ հեղուկով լցված շշերով: Ընդ որում, շշերը դյուրավառ հեղուկով լցվել են անմիջապես Մյասնիկյանի արձանի հարթակի հետևի հատվածում և հարակից այգում:

2008թ. մարտի 1-ին՝ ժամը 14<sup>00</sup>-ի սահմաններում, նակիմում ավազակային հարձակում կատարելու համար դատապարտված «Ճտեմ» մականունով Արմեն Ֆարմանյանը, Հակոբ Հակոբյանի ֆինանսավորմամբ, յուրաքանչյուրին վճարելով 5000-ական դրամ, Մալաթիա թաղամասից հավաքագրել է մի խումբ երիտասարդների և ուղեկցել սկզբում վերջինիս տան մոտ, ապա՝ Մյասնիկյանի արձանի հարակից տարածք: Ժամը 16-ի սահմաններում Արմեն Ֆարմանյանն իր հավաքագրած անձանց բաժանել է մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված փայտե մահակներ և երկաթե ձողեր, իսկ ավելի ուշ բաժանել է նաև բենզոլինով լցված շշեր՝ վառելու համար ծայրերին հարմարեցված լաթերով, լրացուցիչ երկաթե ձողեր՝ հրահանգելով, որ պատրաստ լինեն ոստիկանների վրա հարձակվելուն: Որոշ ժամանակ անց, Արմեն Ֆարմանյանի առաջնորդությամբ, զանգվածային անկարգությունների այլ մասնակիցների հետ երիտասարդների հիշյալ խումբը՝ մահակների, ձողերի և դյուրավառ հեղուկներով լի շշերի գործադրմամբ հարձակում է գործել ոստիկանների վրա:

Հակոբ Հակոբյանի կարգադրությամբ, աշխատանքից ազատելու սպառնալիքով, վերջինիս պատկանող «Անուշ» ՏԱՄ ՍՊԸ-ի և Մալաթիայի գյուղմթերքների շուկայի 200-ից ավելի աշխատակիցների՝ Ամատունի Սարգսյանին, Մակար Սահակյանին, Սերոբ Սերոբյանին, Մարտուն Շուշանյանին, Վլադիմիր Եսայանին, Արամ Գրիգորյանին և ուրիշներին, 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 11-ի սահմաններում, պարտավորեցրել են ավարտել աշխատանքը, հավաքվել նրա տան մոտ և արդեն այդտեղ հավաքված թաղամասի բնակիչների



հետ գնալ քաղաքապետարանի հարակից տարածք՝ միանալու հավաքված բազմությանը՝ իշխանափոխություն իրականացնելու նպատակով:

Բացի այդ, Հակոբ Հակոբյանի ազգական Գաբրիել Գաբրիելյանը, վարձակալության հիմունքներով աշխատելով Մալաթիայի գյուղմթերքի շուկային կից, Հակոբ Հակոբյանին պատկանող «Անուշ» ՏԱՄ ՍՊԸ՝-ի թիվ 12 պահեստում, անձնական շահագրգռվածությունից ելնելով, վերջինիս դրդմամբ և հրահրմամբ, 2008թ. մարտի 1-ի առավոտյան, աշխատանքից ազատելու կամ նշված շուկայի տարածքում առևտրով զբաղվելն արգելելու սպառնալիքի տակ, շուկայի բեռնակիր բանվորներ Լավրենտ Գասպարյանին, Աշոտ Մելքոնյանին և քրեական գործով դեռևս ինքնությունը չպարզված Էրիկին, Գարիկին, Դավիթին, ինչպես նաև այլ բեռնակիրների ու առևտրով զբաղվող մի խումբ անձանց կարգադրել է դադարեցնել աշխատանքը, որից հետո կազմակերպված խմբով նրանց ուղեկցել է Հակոբ Հակոբյանի՝ Երևան քաղաքի Ոսկանյան փողոցի թիվ 10 տան մոտ, ապա՝ Երևանի քաղաքապետարանի հարակից տարածք: ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան և քաղաքապետարանի շենքի հարակից տարածքներում ղեկավարել, կանոնակարգել է իր հավաքագրած անձանց գործողությունները, որի ընթացքում նրանց ու ամբոխի մեջ գտնվողներին հորդորել է չցրվել, չենթարկվել իշխանության ներկայացուցիչների պահանջներին, բռնություն կիրառել նրանց նկատմամբ: Նույն օրը՝ ժամը 15-ի սահմաններում, երբ ոստիկանները ցուցարարների հարձակումից փորձել են պատսպարվել քաղաքապետարանի շենքի մոտ, Գաբրիել Գաբրիելյանը նրանց վրա հարձակվող այլ անձանց հետ, բռնություն գործադրելու դիտավորությամբ, հետապնդել է ոստիկանության Լոռու մարզային վարչության աշխատակիցներին, որի ընթացքում, շենքերի միջնամասում գտնվող խոտածածկ տարածքից վերցնելով քարեր, նետել է փախչող ոստիկանների ուղղությամբ և մասնակցել ՀՀ ոստիկանության Գուգարքի բաժնի պետ Գրիշա Այվազյանին ծեծի ենթարկելուն: Այնուհետև միացել է իր կողմից անմիջականորեն ղեկավարվող անձանց, հանդիմանել նրանց ժամանակավորապես իր կողքին չգտնվելու համար,

կարգադրել է զինվել մահակներով և բռնություն գործադրել իրավապահների նկատմամբ:

Նիկոլ Փաշինյանը պարբերաբար շրջել է զանգվածային անկարգությունների մասնակիցների շարքերում, սադրիչ բնույթի կոչերով ամբոխին դրդել անհնազանդության, բռնությունների կատարման:

Ժամը 15-ի սահմաններում ՀՀ ոստիկանությունում որոշում է կայացվել ուժեղացնել ծառայությունը ՀՀ Նախագահի նստավայրի, ՀՀ կառավարության և հանրային հեռուստատեսության շենքերի հարակից տարածքներում, ինչին ներգրավվել են ՀՀ ոստիկանության ՊՊՎ ԿՕՊ գնդի 200 ծառայող և ՌԶ 300 զինծառայող, իսկ մնացած ուժերը տեղափոխվել են Ազատության հրապարակ: Բացի այդ, ՊՊՎ 150 զինծառայողներից բաղկացած ռեզերվը փակել է Շահումյան հրապարակը՝ թույլ չտալով ամբոխին շարժվելու դեպի Հանրապետության հրապարակ:

Աստիճանաբար նկատվել է ամբոխի ագրեսիվ հատվածի տեղաշարժ դեպի Մաշտոցի պողոտա և Հանրապետության հրապարակ:

Ժամը 18.00-ից Շահումյան հրապարակում և հարակից տարածքներում գտնվող ոստիկանության ուժերի ղեկավարումը հանձնարարվել է ոստիկանության պետի տեղակալ Սաշիկ Աֆյանին:

Մաշտոցի պողոտա-Գր. Լուսավորչի փողոցի խաչմերուկում եղած ոստիկանական ուժերի ղեկավարումը հանձնարարվել է Արմեն Երիցյանին, իսկ ոստիկանության զորքերինը՝ Գրիգոր Գրիգորյանին:

ՀՀ ոստիկանության պետ Հայկ Հարությունյանի հրահանգով հանձնարարվել է Սաշիկ Աֆյանին՝ Ազատության հրապարակում գտնվող ոստիկանական ուժերի մի մասի հետ տեղափոխվել Շահումյան հրապարակի տարածք, թույլ չտալ ամբոխի շարժը դեպի Հանրապետության հրապարակ, իսկ Արմեն Երիցյանին, Գրիգոր Գրիգորյանին՝ Ազատության հրապարակում գտնվող մնացած ուժերով տեղափոխվել Մաշտոցի պողոտա և Գր. Լուսավորչի փողոցի խաչմերուկ՝ չթույլատրելով ամբոխի շարժը դեպի Պարոնյան փողոց, Ազգային ժողով և ՀՀ Նախագահի նստավայր:

Ժամը 20-ից 23-ն ընկած ժամանակահատվածում զանգվածային անկարգությունների մասնակիցները հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանության ծառայողների վրա պարբերաբար կրկնվող զինված հարձակումներով փորձել են Գր. Լուսավորիչ, ապա Պարոնյան փողոցներով առաջ շարժվել դեպի Պռոշյան փողոց, ուր Չորափի 77«ա» հասցեում են գտնվում ՀՀ Նախագահի անձնակազմի կառավարման առանձնատները, և Պռոշյան փողոցով դեպի Մարշալ Բաղրամյան փողոց, ուր գտնվում է ՀՀ Նախագահի նստավայրը և ՀՀ Ազգային ժողովը: Ընդ որում, Մյասնիկյանի արձանին հարող մյուս փողոցների ուղղություններով մարդկանց տեղաշարժը որևէ կերպ սահմանափակված չի եղել և գտնվել է զանգվածային միջոցառման մասնակիցների տիրապետման տակ:

Ամբոխի միջից տարբեր հրազեններից կատարվել են առաջին կրակոցները և միաժամանակ նետվել առաջին նռնակներն ու այլ պայթուցիչ սարքեր, որոնց հետևանքով ՀՀ ոստիկանության զորքերի բազմաթիվ զինծառայողներ ստացան բեկորային, հրազենային և այլ բնույթի վնասվածքներ, իսկ հերթական պայթյունի հետևանքով բազմաթիվ բեկորային վնասվածքներ ստացած՝ ոստիկանության զորքերի սպա Համլետ Թադևոսյանը, հիվանդանոց տեղափոխվելուց հետո մահացել է: Անձնակազմի շրջանում վիրավորների քանակի ավելացումը կանխելու համար ՈԶ հրամանատարի կողմից որոշվել է անձնակազմը հետ քաշել, հարձակումները կանխելու նպատակով կիրառել հատուկ միջոցներ, իսկ հոգեբանական ազդեցություն գործելու նպատակով՝ կրակ բացել անգնդակ փամփուշտներով:

Չինված հարձակումները կանխելու նպատակով փորձ է արվել փշալարե արգելափակոց տեղադրել, սակայն զանգվածային անկարգությունների մասնակիցների հարձակման արդյունքում ձախողվել է նաև փշալար անցկացնելու երկրորդ փորձը՝ այս անգամ Մաշտոցի պողոտայի և Գր. Լուսավորչի փողոցի խաչմերուկում:

Ազդեսիվ ամբոխի մի մասին հաջողվել է խլել ոստիկանության տրանսպորտային միջոցներից մի քանիսը, այդ թվում՝ արգելափակոց փռող երկու

ՈՒԱԶ ավտոմեքենաները և այլ մեքենաներ, որոնցից մի մասը նրանք այրել են տեղում, իսկ մնացածն օգտագործվել է ոստիկանության շարքերի վրա գրոհելիս և հրկիզվել են հետագայում՝ Լեո-Պարոնյան փողոցների խաչմերուկի մոտ: Ելնելով իրադրությունից՝ ամբոխին սաստելու և հարձակումները կանխելու նպատակով որոշում է կայացվել հատուկ միջոցների և անգնդակ փամփուշտներով կրակող ինքնաձիգների կիրառումից բացի, թույլատրել ինքնաձիգներով զինված ոստիկանության զորքերի սպաներին և ենթասպաներին կրակ բացել օդ՝ օգտագործելով հարձակվողների վրա հոգեբանական ազդեցություն ունեցող լուսածիր փամփուշտներ:

Գործողության մեջ են դրվել 3 ջրանետ մեքենաներ: Ջանգվածային անկարգությունների մասնակիցները կրկին շարժվել են Գ. Լուսավորչի փողոցով դեպի Պարոնյան փողոց՝ հարձակվելով ջրանետ մեքենաների վրա, ոստիկանության ծառայողների և ոստիկանության զորքերի զինծառայողների վրա նետելով մետաղյա ձողեր, քարեր, «Մոլոտովի կոկտեյլ» կոչվող դյուրավառ հեղուկով լցված շշեր, նռնակներ, պայթուցիկ սարքեր: Հաշվի առնելով ամբոխի հետ բախումների ժամանակ անձնակազմի կորուստների հնարավորությունը՝ ոստիկանական ուժերը նահանջել են դեպի Լեոյի փողոց: Լեոյի փողոցում, «Սվին» խանութի մոտ զանգվածային անկարգությունների մասնակիցների կողմից ՈԶ ծառայողների ուղղությամբ նետվել են նռնակներ, իսկ ինքնաձիգի կրակոցից մահացու վիրավորվել է ծանկետային զինծառայող Տիգրան Աբգարյանը: ՈԶ դիպուկահարը, նկատելով Լեո-Պարոնյան փողոցների խաչմերուկի շենքի անկյունում դիրքավորված, հրազենով զինված և Լեոյի փողոցում տեղակայված ոստիկանության ուժերի ուղղությամբ կրակող անձին, նրան վնասազերծելու և ոստիկանության զորքերի զինծառայողների կյանքին ու առողջության սպառնացող վտանգը կանխելու նպատակով կրակ է բացել հանցագործի ուղղությամբ և վիրավորել նրան՝ ոտքի հատվածում: Վերջինիս անձը պարզելու ուղղությամբ նախաքննությունը շարունակվում է:

Ջանգվածային անկարգությունների կազմակերպիչները վերահսկել են ջարդերի, հրկիզումների, գույքի դիտավորյալ ոչնչացման, վնասելու և թալանելու

գործողությունները, ուղղորդել և հրահանգավորել անկարգություններ կատարողներին ու ոգետրել նրանց: Դա են վկայում նաեւ հրապարակային ելույթները, Ալեքսանդր Արզումանյանի եւ Սուրեն Սիրունյանի միջեւ 01.03.08թ.՝ ժամը 23 :27-ին կայացած հեռախոսագրույցի բովանդակությունը : Հատված նշված հեռախոսագրույցից՝

«Սուրեն Սիրունյան – Ուրեմն, ժողովուրդը մինչև Պրոսպեկտը գրավել և ամբողջությամբ, ամբողջ Պարոնյան փողոցը՝ մինչև Պռոշյան, ժողովուրդը գրավել և, «Առաջ Հայաստան» և անում:

Ալեքսանդր Արզումանյան - Լսի, իսկ բան-ման են՞ վառում, ավտո-մավտո, բան:

Սուրեն Սիրունյան – Միլիցեքի ավտոները:

Ալեքսանդր Արզումանյան - Միլիցեքի մենակ՞:

Սուրեն Սիրունյան – Միլիցեքի ավտոները մենակ, մեկ էլ Լֆիկի խանութն են թալանում:

Ալեքսանդր Արզումանյան - Վորշեմ, լավ և:

Սուրեն Սիրունյան – Մեկ էլ Նազարյան Ներսիկի ավտոն են վառել, քաղաքի վարչության պետի:

Ալեքսանդր Արզումանյան - Ա-ա, եղ լավ բան ասեցիր: Վորշեմ, լավ և, վերահսկվում և ամեն ինչ:

Սուրեն Սիրունյան – Հա, հա»:

Պարբերաբար հնչող ելույթներով ու հրահանգներով արդեն իսկ հավասարակշռությունից դուրս եկած բազմությանը մղել են մարտական գործողությունների, ավերումների, տարաբնույթ բռնարարքների, միաժամանակ, ուղղորդելով անկարգությունների մասնակիցներին, տեղեկություններ են հրապարակել գրավված նոր տարածքների մասին, հրապարակային ուղղորդումներ են տվել նաև գրավված փողոցների վերահսկողությունն ամրացնելու և նոր տարածքներ գրավելու

նպատակով այլ մարդկանց ներգրավելու համար, զանազան հնարքներով քաջալերել են կիրառվող բռնությունները, ավերումներն ու թալանը: Հատված Լեոն Տեր-Պետրոսյանի եւ Ալեքսանդր Արզումանյանի միջեւ 2008 թվականի մարտի 2-ին՝ ժամը 16 :32-ին կայացած հեռախոսազրույցից:

«Լեոն Տեր-Պետրոսյան – Դուխդ տեղն ա՞:»

Ալեքսանդր Արզումանյան – Հա, շեֆ ջան, ամեն ինչ նորմալ ա:

Լեոն Տեր-Պետրոսյան – Դե, ըտենց, լավ ա: Դուխտ հելել, ինձ ասում են՝ գլուխդ ուտու՞մ ա:

Ալեքսանդր Արզումանյան (ծիծաղում է) – Հա

Լեոն Տեր-Պետրոսյան – Մալադեց, Ալիկ ջան: Ամեն ինչ լավ ա, իսկապես»:

Այդ ամենի արդյունքում՝ 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Մյասնիկյանի արձանի և Երևանի քաղաքապետարանի հարակից տարածքում, Երևանի Գր.Լուսավորչի, Մաշտոցի, Լեոյի և Պարոնյանի փողոցներում հրազեն, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր և սարքեր գործադրելով կատարվել են զանգվածային անկարգություններ, որոնց ընթացքում զինված դիմադրություն է ցույց տրվել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին, ՀՀ ոստիկանության զորքերի զինձառայողներին, տարբեր ծանրության աստիճանների մարմնական վնասվածքներ են ստացել 187 ՀՀ ոստիկանության զորքերի զինձառայող ու ոստիկանության աշխատակից, 32 քաղաքացիական անձ, ջարդերի, գույքի դիտավորյալ ոչնչացման, վնասելու և թալանելու (գույքի գաղտնի և բացահայտ հափշտակություններ, գույքի ոչնչացում և վնասում) հետևանքով ՀՀ ոստիկանությանը պատճառվել է 25.980.093 դրամի վնաս, Երևան քաղաքին և Կենտրոն քաղաքին համայնքին՝ 69.288.760 դրամի վնաս, իրավաբանական անձանց՝ 339.954.866 դրամի վնաս, հրկիզվել և վնասվել է 92 տրանսպորտային միջոց, որի հետևանքով ՀՀ ոստիկանությանը, քաղաքացիներին

և ուղևորափոխադրող ընկերություններին պատճառվել է ընդհանուր առմամբ 70.854.525 դրամի վնաս:

Տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ընթացքում ստացած մարմնական վնասվածքներից մահացել է 10 անձ:

Մարտի 1-ին՝ ժամը 23-ին, հրապարակվել է ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանագիրը՝ սահմանադրական կարգին սպառնացող վտանգները կանխելու և բնակչության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով Երևան քաղաքում արտակարգ դրություն հայտարարելու մասին: Չնայած դրան, զանգվածային անկարգությունները՝ իշխանության ներկայացուցիչներին դիմադրությունը, խանութների, հասարակական օբյեկտների, ջարդն ու ավերումը, ավտոմեքենաների վնասումն ու հրկիզումը, գույքերի հափշտակությունները շարունակվել են:

Չանգվածային անկարգությունները կանխելուն ուղղված միջոցառումներն իրականացնելիս ոստիկանության զորքերի սպառազինությունում եղել է 16 միավոր ԱԿ-74 տեսակի ինքնաձիգ՝ 1920 հատ 5,45մմ տրամաչափի լուսաձիգ փամփուշտներով, 8 միավոր ԱԿ-74 տեսակի ինքնաձիգ՝ 480 հատ 5,45մմ տրամաչափի անգնդակ փամփուշտներով, 10 հատ «Կոռնետ» տեսակի ատրճանակ՝ 130 ռետինե փամփուշտներով, 4 հատ «ԿՇ-23» հրացան, որոնք նախատեսված են «Չերյոմուխա-7», «Սիրեն-7» և «Վոլնա Ռ» տեսակի փամփուշտներ կրակելու համար, 7 հատ «ՍՊՇ» տեսակի ատրճանակ, որոնք նախատեսված են «Չերյոմուխա-4» տեսակի փամփուշտներ կրակելու համար, 15 հատ «Չերյոմուխա-1», 15 հատ «Չերյոմուխա-5», 80 հատ «Սիրեն-6» և 16 հատ «Դրեյֆ» տեսակի արցունքաբեր նռնակներ, 7 հատ «Չարյա» և 5 հատ «Կասետ» տեսակի լուսաձայնային նռնակներ, 154 հատ «Չերյոմուխա», 89 հատ «Չերյոմուխա-7» և 5 հատ «Սիրեն-7» տեսակի արցունքաբեր փամփուշտներ, 180 հատ «Վոլնա Ռ» տեսակի ռետինե փամփուշտներ : Նշված հատուկ միջոցներից և անգնդակ փամփուշտներից օգտագործվել են 79 հատ «Չերյոմուխա-4», 56 հատ «Չերյոմուխա-7», 129 հատ «Վոլնա Ռ», 29 հատ «Սիրեն-6», 4 հատ «Դրեյֆ», 4 հատ «Չարյա», 2 հատ «Կասետ», 280 հատ 5,45 մմ տրամաչափի անգնդակ

փամփուշտներ և 62 հատ «Կոռնետ» ռետինե փամփուշտներ : Մարտական 5,45 մմ տրամաչափի 1920 փամփուշտներից օգտագործվել է 1405-ը, իսկ մնացած 515-ը՝ վերադարձվել զինանոց : Բացի այդ, ոստիկանության զորքերի դիպուկահարը զինված է եղել 1 միավոր «ՍՎԳ» տեսակի դիպուկահար հրացանով՝ 7,62մմ տրամաչափի 20 հատ փամփուշտներով, որոնցից օգտագործվել է 1-ը, 19-ը՝ վերադարձվել զինանոց :

2008թ. մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների կանխմանն ու հասարակական կարգի վերականգնմանն ուղղված միջոցառումներն անմիջականորեն իրականացրել են ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ստորաբաժանումները, դրանց իրականացմանը ՀՀ պաշտպանության նախարարության ստորաբաժանումներն անմիջականորեն ներգրավված չեն եղել :

ՀՀ սահմանադրական կարգին սպառնացող վտանգը կանխելու և բնակչության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով Երևան քաղաքում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ Նախագահի հրամանագրի 3-րդ կետի համաձայն՝ արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումները տեղակայվել են Երևան քաղաքի տարբեր հատվածներում :

Զանգվածային անկարգությունների կատարման վայրերում ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումները տեղակայված են եղել Լեո փողոցի խորքում՝ դեպի Սարյան փողոց, Շահումյան հրապարակում, Մաշտոց-Խորենացի փողոցների խաչմերուկում : Վերջին ստորաբաժանումն ավելի ուշ տեղափոխվել է Մաշտոց-Ամիրյան փողոցների խաչմերուկ : Ընդ որում, երեք դեպքերում էլ ՀՀ ՊՆ ստորաբաժանումները մշտապես գտնվել են ոստիկանության զորքերի և ոստիկանության ստորաբաժանումների թիկունքում և զանգվածային անկարգությունների մասնակիցների հետ անմիջական շփումներ չեն ունեցել :



Նիկոլ Փաշինյանի, Ալեքսանդր Արզումանյանի, Մյասնիկ Մալխասյանի, Սասուն Միքայելյանի, Հակոբ Հակոբյանի, Շանթ Հարությունյանի, Գրիգոր Ոսկերչյանի, Սուրեն Սիրունյանի և մյուսների կազմակերպմամբ տեղի ունեցած զանգվածային անկարգությունների կատարմանը մասնակցություն են ունեցել, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին զինված դիմադրություն են ցույց տվել, բռնություն գործադրել, ջարդեր, հրկիզումներ իրականացրել, գույք ոչնչացրել և վնասել են Արտաշես Մաթևոսյանը, Հարություն Սկրտչյանը, Արմեն Մովսիսյանը, Գրիգոր Աղամալյանը, Վահե Ղազարյանը, Սկրտիչ Աբրահամյանը, Նվեր Ստեփանյանը, Ռոման Մնացականյանը, Նորիկ Հարությունյանը, Վարդան Ղավալբաբունցը, Արթուր Նազանյանը, Տիգրան Սկրտչյանը, Ալեքսանդր Կիտեսովը, Եղիշե Գրիգորյանը, Տիգրան Սուքիասյանը, Էդվարդ Աշուղյանը, Արմեն Սարգսյանը, Արմենակ Աբրահամյանը, Վարդան Գասպարյանը, Գևորգ Մանուկյանը, Քրիստափոր Էլազյանը, Գևորգ Ղազարյանը, Վահագն Հարեյանը, Դավիթ Աղայանը, Հովհաննես Մնացականյանը, Գրիգոր Բարսեղյանը, Գարեգին Պետրոսյանը, Արման Մարգարյանը, Տիգրան Հակոբյանը, Սկրտիչ Արմենակյանը, Ահարոն Անտոնյանը, Կառլեն Մանուչարյանը, Ստեփան Սարգսյանը, Արա Հովհաննիսյանը, Լավրենտ Գասպարյանը, Հարություն Ղարիբյանը, Սևակ Ստեփանյանը, իսկ Ֆելիքս Գրիգորյանը զանգվածային անկարգությունների ընթացքում իր մոտ ապօրինի պահվող ինքնաձիգից օդ կրակոցներ է արձակել՝ անկարգությունների մասնակիցներին ոգեշնչելու և ոստիկանների օրինական գործողություններին խոչընդոտելու դիտավորությամբ:

Կարեն Թարխանյանը, Գաբրիել Գաբրիելյանը և Գևորգ Ղազարյանը, մասնակցելով 2008 թվականի մարտի 1-ին Երևանի կենտրոնական փողոցներում զանգվածային անկարգություններին, կատարել են կազմակերպչական գործողություններ, Ալբերտ Ներսիսյանը, Ասլան Ավետիսյանը իշխանության ներկայացուցիչների օրինական պահանջներին ակտիվորեն չենթարկվելու և նրանց նկատմամբ բռնություն կիրառելու կոչեր են արել:

Հովհաննես Մնացականյանը, Գրիգոր Բարսեղյանը, Գարեգին Պետրոսյանը, Արման Մարգարյանը, Տիգրան Հակոբյանը, Սկրտիչ Արմենակյանը,

Ահարոն Անտոնյանը, Լավրենտ Գասպարյանը, մասնակցելով զանգվածային անկարգություններին, կատարել են ուրիշի գույքի գաղտնի և բացահայտ հափշտակություններ:

Արմեն Գրիգորյանը, Յուրիկ Ղուկասյանը, Արայիկ Բագրատյանը, Սիեր Սարգսյանը, Սարգիս Մկրտչյանը, Խաչատուր Ստեփանյանը, Արման Մարգարյանը, Արտակ Նահապետյանը, Ստյոպա Սարգսյանը, Սիբայել Սերոբյանը, Սուրեն Մինասյանը, Անդրանիկ Ղազարյանը, Էդիկ Գրիգորյանը, Կարեն Ավագյանը, Ավագ Պողոսյանը, Ալիկ Խաչատրյանը, Արման Կարապետյանը, Հարություն Վարդապետյանը, Արթուր Մարգարյանը, Արման Գեղամյանը և Աղվան Գրիգորյանը, օգտվելով տիրող համընդհանուր անվերահսկելի վիճակից, անկարգությունների ընթացքում կատարել են ուրիշի գույքի գաղտնի և բացահայտ հափշտակություններ:

Թվարկված անձանց վերաբերյալ քրեական գործերն անջատվել են առանձին վարույթ և տարբեր ժամանակներում ուղարկվել են դատարան: Նրանց նկատմամբ կայացվել են մեղադրական դատավճիռներ, իսկ Արման Մարգարյանի վերաբերյալ քրեական գործը կարճվել է՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով:

Բացի այդ, զանգվածային անկարգությունների ընթացքում հասարակական կարգը պահպանելու, ինչպես նաև զանգվածային անկարգությունների ընթացքում վնասված ավտոմեքենաներից և շրջակա խանութներից դեռևս շարունակվող թալանի դեպքերը կանխելու նպատակով 2008թ. մարտի 2-ին՝ ժամը 03-ից 05-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի 5-րդ վաշտի 1-ին դասակի ոստիկան Գեղամ Գրիգորյանը, ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի 5-րդ վաշտի 1-ին դասակի հրամանատար Արթուր Խաչատրյանը և վերջինիս օգնական Անդրանիկ Մանուկյանը նույն վարչության ՊՊԾ գնդի ավագ տեսուչ Վրույր Գաբրիելյանին պատկանող ՎԱԶ 2121 մակնիշի, 13 ԼՍ 213 պետհամարանիշի ավտոմեքենայով շրջագայել են Երևանի կենտրոնական փողոցներում:

Մաշտոցի պողոտայի գյուղմթերքների շուկայի մոտ նկատելով հավաքված անձանց՝ կանգ են առել, հավաքվածների մեծ մասը դիմել է փախուստի, իսկ երեք՝

քննությամբ ինքնությունները չպարզված անձինք մնացել տեղում: Գողություն կատարելու կասկածանքով, ինչպես նաև ինքնությունը պարզելու համար վերջիններիս ոստիկանության բաժին բերման ենթարկելու նպատակով Արթուր Խաչատրյանը, Գեղամ Գրիգորյանը և Անդրանիկ Մանուկյանը մոտեցել են նրանց և առաջարկել նստել մեքենան: Ներկաներից մեկը կատարել է ոստիկանության աշխատակիցների պահանջը, իսկ մյուս երկուսը հրաժարվել են՝ տարբեր պատճառաբանություններով, ու վիճել ոստիկանների հետ: Անդրանիկ Մանուկյանը և Գեղամ Գրիգորյանը նույն վայրում, իսկ վերջինս՝ նաև այդ անձանց ՎԱԶ 2121 մակնիշի, 13 LU 213 պետհամարանիշի ավտոմեքենան նստեցնելու պահին, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված ֆիզիկական ուժ կիրառելու հիմքերի բացակայության պայմաններում ակնհայտ դուրս գալով իրենց լիազորությունների սահմաններից, բռնություն են գործադրել հիշյալ երկու անձանց նկատմամբ՝ ոտքերով և ձեռքերով մի քանի անգամ հարվածել նրանց:

Գեղամ Գրիգորյանը և Անդրանիկ Մանուկյանն իրավախախտում թույլ տալու կասկածանքով անձանց բերման ենթարկելու ընթացքում, արատավորելով ոստիկանության հեղինակությունը, դիտավորությամբ կատարել են տվյալ իրադրությունում իրենց լիազորությունների շրջանակից ակնհայտ դուրս եկող բռնի գործողություններ, որով էական վնաս են պատճառել անձանց և պետության օրինական շահերին:

Գեղամ Գրիգորյանը և Անդրանիկ Մանուկյանը մեղադրվել են ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով, նրանց նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ:

**Տասն անձանց մահվան հանգամանքները**

(ստորև ներկայացված են բացառապես 10 անձանց մահվան հանգամանքներին առնչվող քննչական, դատավարական գործողությունները, բացահայտելու ուղղությամբ կատարված աշխատանքները )

2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ընթացքում մահացել է 10 անձ:

**1. ՖԱՐՄԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ ՎԱՉԱԳԱՆԻ**

(ծնված՝ 25.11.1974 թվականին, Երևան քաղաքում,

ճախկինում դատված՝ ավազակային հարձակում կատարելու

համար, չի աշխատել, անկուսակցական)

2008թ. մարտի 1-ին՝ ժամը 22-ի սահմաններում, ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիահերձարան է տեղափոխվել Արմեն Ֆարմանյանի դիակը՝ գլխի շրջանում հրազենային վնասվածքներով:

ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիահերձարանում՝ դատական բժիշկի մասնակցությամբ կատարվել է Արմեն Ֆարմանյանի դիակի զննում, որից հետո դիահերձարանից առգրավվել են դեպքի պահին վերջինիս հագին եղած հագուստները:

Դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Արմեն Ֆարմանյանի դիակի վրա հայտնաբերվել է գլխի ճախ կեսի կողմնա-քունքային

շրջանի սալջարդ վերք՝ ոսկրա-հյուսվածքային դեֆեկտով, գլխի մազածածկ հատվածի ներսային մակերեսի, քունքամկանների, գլխուղեղի կարծր և փափուկ թաղանթների, գլխուղեղի, գլխուղեղի կողային փորոքների և ձախից վերին ու ստորին կոպերի ներսային հատվածի արյունազեղումներ, գանգաթաղի և հիմի ոսկորների բաց կոտրվածքներ, գլխուղեղի ջնջխում՝ մասնակի արտաթափումով, որոնք էլ անմիջական պատճառական կապի մեջ են գտնվում նրա մահվան հետ:

Դիահերձման ժամանակ գանգից հանվել են օտար մարմիններ, որոնք առգրավվել են:

Դատաձգաբանական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Արմեն Ֆարմանյանի դիակից հանված պլաստմասսե և մետաղյա մեկական կտորները գործարանային արտադրության «Չերյոմուխա - 7» տեսակի կրակված փամփուշտի գազային նոնակ է՝ առանձնացած մեկ խցանով: Խցանի վրայի կրակման հետքերը բնորոշ են հատուկ միջոց հանդիսացող «ԿՍ-23» կարաբիններին: Խցանի գլխային մասի վրա առկա դեֆորմացիան և պատռվածքները կարող էին առաջանալ որևէ պինդ մարմնի հետ բախման կամ որևէ արգելքի միջով անցնելու հետևանքով:

Դատարանի համապատասխան որոշման հիման վրա ստացվել և ուսումնասիրվել են Արմեն Ֆարմանյանի բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային գանգերի վերծանումները:

Կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Արմեն Ֆարմանյանը ՀՀ ԱԺ պատգամավոր Հակոբ Հակոբյանի ներգրավմամբ և ֆինանսավորմամբ որոշակի վարձատրության դիմաց հավաքագրել է մարդկանց խմբեր, ապահովել նրանց մասնակցությունն օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հրապարակային միջոցառումներին, ինչպես նաև՝ զանգվածային անկարգություններին, որի ընթացքում մետաղյա ձողեր և վառելիքով լցված շշեր է բերել դեպքի վայր ու բաժանել զանգվածային անկարգությունների մասնակիցներին՝ ղեկավարելով նրանց գործողությունները: Ժամը 21-ի սահմաններում Պարոնյան փողոցի թիվ 24 դպրոցի դիմաց Արմեն Ֆարմանյանն ստացել է հրազենային վնասվածք և տեղում մահացել: Արմեն Ֆարմանյանի մտերիմ Աշոտ Վարդանյանը

և գործով չպարզված մի խումբ անձինք նրա դիակը տեղադրել են Բագրատ Ուզունյանին պատկանող ՎԱԶ-2109 մակնիշի, 09 OL 237 պետհամարանիշի ավտոմեքենայի տանիքին և պահանջել՝ տեղափոխել հիվանդանոց: Բագրատ Ուզունյանն, Աշոտ Վարդանյանի եւ մյուսների ուղեկցությամբ դիակը տեղափոխել է մինչև Լեռյի 7 շենքի դիմաց, որտեղ հիշյալ անձինք Արմեն Ֆարմանյանի դիակը տեղադրել են «Շտապ բուժօգնություն» ՊՓԲԸ թիվ 003 բրիգադի շտապօգնության ավտոմեքենան, որն էլ տեղափոխել է դիակերձարան:

Նշված հանգամանքը պարզվել է հարցաքննված շուրջ 15 անձանց, այդ թվում՝ Աշոտ Վարդանյանի, Բագրատ Ուզունյանի, թիվ 003 բրիգադի շտապօգնության ավտոմեքենայի վարորդ Լյովա Խոջոյանի, բժշկուհի Մարիաննա Ալիխանովայի, բուժքույր Աննա Մխիթարյանի ցուցմունքներով, լուսանկարով Աննա Մխիթարյանին ճանաչման ներկայացնելու արձանագրությունով, Լյովա Խոջոյանի մասնակցությամբ՝ Արմեն Ֆարմանյանի դիակը շտապօգնության մեքենան տեղադրելու վայրի զննության արձանագրությամբ:

Արմեն Ֆարմանյանի հայրը՝ Վաչագան Ֆարմանյանը, ճանաչվել է տուժողի իրավահաջորդ և ցուցմունք տվել այն մասին, որ որդու մահից հետո վերջինիս հետ փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնված Աննա Էլոյանից տեղեկացել է, որ Արմեն Ֆարմանյանը պարբերաբար մասնակցել է օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հրապարակային միջոցառումներին, սակայն զանգվածային անկարգությունների կատարման վայրում նրա հայտնվելու, այնտեղ վնասվածքներ ստանալու ու մահանալու հանգամանքների մասին ոչինչ չի հայտնել:

Վաչագան Ֆարմանյանը ծանոթացել է նշանակված փորձաքննությունների եզրակացություններին, որի կապակցությամբ որևէ միջնորդություն չի արել:

ՀՀ ոստիկանությանը և ազգային անվտանգության ծառայությանը տրվել են հանձնարարություններ՝ Արմեն Ֆարմանյանի վիրավորվելուն ակնաատես անձանց հայտնաբերելու, մեղավորի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

**2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՐԻՔԻ**  
**(Ծնված 13.03.61 թվականին Երևան քաղաքում,**  
**նախկինում չդատված, անկուսակցական, մշտական**  
**աշխատանք չի ունեցել՝ զբաղվել է սանտեխնիկայի**  
**վերանորոգմամբ)**

2008թ. մարտի 1-ին՝ ժամը 21.40-ի սահմաններում, անհայտ անձանց կողմից Երևանի թիվ 2 բժշկական կենտրոն է տեղափոխվել Հովհաննես Հովհաննիսյանի դիակը՝ կրծքավանդակի հրազենային վնասվածքով, որտեղից էլ «Շտապ բուժօգնություն» ՊՓԲԸ թիվ 011 բրիգադի շտապօգնության ավտոմեքենայով տեղափոխվել է ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիահերձարան:

ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիահերձարանում դատական բժիշկի մասնակցությամբ կատարվել է Հովհաննես Հովհաննիսյանի դիակի զննում, որից հետո դիահերձարանից առգրավվել են դեպքի պահին վերջինիս հագին եղած հագուստները:

Դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Հովհաննես Հովհաննիսյանի դիակի վրա հայտնաբերվել է հրազենային գնդակային կույր վնասվածք՝ կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսին: Մահը վրա է հասել կրծքավանդակի հրազենային գնդակային կույր վիրավորումից առաջացած սուր ներքին արյունահոսությունից:

Դիահերձման ժամանակ Հ.Հովհաննիսյանի մարմնից հանվել է 5,45մմ տրամաչափի 1 գնդակ:

Գատաձգաբանական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Հովհաննես Հովհաննիսյանի դիակից հանված գնդակը գործարանային արտադրության, 5,45մմ տրամաչափի մարտական փամփուշտի մաս կազմող կրակված գնդակ է: Այս տեսակի փամփուշտները նախատեսված են «ԱԿ-74» ինքնաձիգների և դրանց մոդիֆիկացիաների համար: Գնդակն իր վրայի կրակման

հետքերով բնորոշ է 5.45 մմ տրամաչափի «ԱԿ-74» ինքնաձիգներից և դրանց մոդիֆիկացիաներից կրակված գնդակներին:

Գատաձգաբանական և դատաքիմիական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ Հովհաննես Հովհաննիսյանի հագուստների վրա հայտնաբերված վնասվածքները հանդիսանում են միմյանց շարունակությունը կազմող հրազենային-գնդակային մուտքի կույր վնասվածքներ, պատճառվել են զենքից մեկ կրակոցով արձակված պղինձ պարունակող 5,45մմ տրամաչափի գնդակով:

Գատարանի համապատասխան որոշման հիման վրա ստացվել և ուսումնասիրվել են Հովհաննես Հովհաննիսյանի բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային զանգերի վերծանումները:

Կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Հովհաննես Հովհաննիսյանը ժամը 20-ի սահմաններում ալկոհոլ օգտագործած վիճակում, գարեջրի շիշը ձեռքին գտնվել է Մյասնիկյանի արձանի մոտ: Ժամը 21-ի սահմաններում զանգվածային անկարգությունների մասնակիցների հետ, փայտը ձեռքին օդում թափահարելով, գնացել է դեպի Մաշտոցի պողոտայի և Գր. Լուսավորչի փողոցի խաչմերուկ, որտեղ ստանալով հրազենային վնասվածք՝ մահացել է: Էջմիածին քաղաքի բնակիչ Հրանտ Հակոբյանը, քննությամբ անձը չպարզված կնոջ հետ, իրեն պատկանող ՎԱԶ-2106 մակնիշի, 12 ՏՏ 664 պետհամարանիշի ավտոմեքենայով Հովհաննես Հովհաննիսյանի դիակը տեղափոխել է Երևանի թիվ 2 բժշկական կենտրոն:

Նշված հանգամանքները պարզվել են հարցաքննված շուրջ 20 անձանց, այդ թվում՝ Հրանտ Հակոբյանի, Հովհաննես Հովհաննիսյանի վիրավորումը ստացած ականատես վկաներ Գեղամ Պետրոսյանի և Կարապետ Հովհաննիսյանի ցուցմունքներով, Հովհաննես Հովհաննիսյանի մարմնական վնասվածք ստանալու տեղանքի գնման արձանագրությունով:

Հովհաննես Հովհաննիսյանի կինը՝ Լիլյա Մինասյանը, ճանաչվել է տուժողի իրավահաջորդ և ցուցմունք տվել այն մասին, որ Հովհաննես Հովհաննիսյանը 2008 թվականի մարտի 1-ին՝ ժամը 19-ի սահմաններում, տնից դուրս է եկել, որից հետո չի



զանգահարել և տուն չի վերադարձել: Առավոտյան տեղեկացել է, որ ամուսինը մահացել է:

Լիլյա Մինասյանը ծանոթացել է նշանակված փորձաքննությունների եզրակացություններին, որից հետո որևէ միջնորդություն չի արել:

ՀՀ ոստիկանությանը և ազգային անվտանգության ծառայությանը տրվել են հանձնարարություններ՝ Հովհանես Հովհաննիսյանի վիրավորվելուն ակնատես ալլ անձանց հայտնաբերելու, մեղավորի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

### **3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՀՈՎՍԵՓԻ**

**(ծնված 30.01.1985 թվականին Երևան քաղաքում,  
նախկինում չդատված, անկուսակցական, չի աշխատել)**

2008թ. մարտի 1-ին՝ ժամը 22-ի սահմաններում, «Շտապ բուժօգնություն» ՊՓԲԸ թիվ 43 բրիգադի շտապօգնության ավտոմեքենայով ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիահերձարան է տեղափոխվել Տիգրան Խաչատրյանի դիակը:

ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիահերձարանում դատական բժշկի մասնակցությամբ կատարվել է Տիգրան Խաչատրյանի դիակի զննում, որից հետո դիահերձարանից առգրավվել են Տիգրան Խաչատրյանի բջջային հեռախոսն ու դեպքի պահին վերջինիս հագին եղած հագուստները:

Դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Տիգրան Խաչատրյանի դիակի վրա հայտնաբերվել է գլխի ձախից ծոծրակային շրջանի սալջարդ վերք՝ ոսկրյա-հյուսվածքային դեֆեկտով, աջ աջքի վերին կոպի, աջ աջքի ակնագնդի սպիտակուցաթաղանթի, գլխի փափուկ հյուսվածքների ներսային մակերեսի, ձախ քունքամկանի, գլխուղեղի կարծր և փափուկ թաղանթների, գլխուղեղանյութի, գլխուղեղի կողմնային փորոքների արյունազեղումներ, զանգաթաղի և հիմի ոսկորների բաց կոտրվածքներ, գլխուղեղի ջնջխում, որոնք էլ անմիջական

պատճառական կապի մեջ են գտնվում նրա մահվան հետ: Մահը վրա է հասել գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների սուր խանգարումից, որը հետևանք է ստացած զանգուղեղային բաց վնասվածքի:

Դիախերձման ժամանակ Տիգրան Խաչատրյանի զանգից հանվել է մետաղի կտոր:

Դատաձգաբանական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Տիգրան Խաչատրյանի դիակից հանված մետաղյա կտորը գործարանային արտադրության «Չերյոմուխա - 7» տեսակի կրակված փամփուշտի գազային նռնակ է: Գազային նռնակի պլաստմասսե խցանները, հավանաբար, անջատվել են որևէ պինդ մարմնի հետ բախման կամ որևէ արգելքի միջով անցնելու հետևանքով:

Դատարանի համապատասխան որոշման հիման վրա ստացվել և ուսումնասիրվել են Տիգրան Խաչատրյանի բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային զանգերի վերծանումները:

Կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Տիգրան Խաչատրյանը զանգվածային անկարգությունների վայր է գնացել ժամը 19-ի սահմաններում ընկերոջ՝ Արտյոմ Աբովյանի հետ: Ժամը 20-ի սահմաններում խառնաշփոթի պատճառով բաժանվել են միմյանցից, ինչից հետո Տիգրան Խաչատրյանը զանգվածային անկարգությունների մի խումբ մասնակիցների հետ գնացել է Պարոնյան և Լեոյի փողոցների խաչմերուկում գտնվող դալանի մոտ, որտեղ էլ վիրավորվել ու մահացել է:

Հիշյալ հանգամանքները պարզվել են հարցաքննված շուրջ 20 անձի, այդ թվում՝ Արտյոմ Աբովյանի, Ստելլա Կարապետյանի, թիվ 43 բրիգադի շտապօգնության ավտոմեքենայի վարորդ Նվեր Սահակյանի, բժշկուհի Լիլիթ Նազարյանի, բուժքույր Աննա Մովսիսյանի ցուցմունքներով, լուսանկարով ճանաչման ներկայացնելու արձանագրություններով, Լիլիթ Նազարյանի մասնակցությամբ՝ Տիգրան Խաչատրյանի դիակը շտապօգնության մեքենան տեղադրելու վայրի զննության արձանագրությամբ և քրեական գործի այլ նյութերով:

Տիգրան Խաչատրյանի մայրը՝ Ալլա Հովհաննիսյանը, ճանաչվել է տուժողի իրավահաջորդ և ցուցմունք տվել այն մասին, որ 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 17.30-ի սահմաններում, գնացել է Արտյոմ Աբովյանի տուն և այլևս չի վերադարձել: Ժամը 21-ի սահմաններում զանգահարել է որդուն, սակայն վերջինս զանգերին չի պատասխանել: Սկսել են փնտրել նրան և ժամը 04-ի սահմաններում դիակը գտել են դիահերձարանում: Տիգրան Խաչատրյանի մահվան հանգամանքների մասին տեղեկություններ չունի:

Ալլա Հովհաննիսյանը ծանոթացել է նշանակված փորձաքննությունների եզրակացություններին, որից հետո որևէ միջնորդություն չի արել:

ՀՀ ոստիկանությանը և ազգային անվտանգության ծառայությանը տրվել են հանձնարարություններ՝ Տիգրան Խաչատրյանի վիրավորվելուն ակնատես անձանց հայտնաբերելու, մեղավորի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

#### **4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՉԱՔԱՐ ՍԱՐԻՔԵԿԻ**

**(ծնված 30.08.1977 թվականին Երևան քաղաքում,**

**նախկինում չդատված, անկուսակցական, չի աշխատել)**

2008թ. մարտի 2-ին՝ ժամը 02-ին, անհայտ անձինք անգիտակից վիճակում Երևանի թիվ 3 կլինիկական հիվանդանոց են տեղափոխել Չաքար Հովհաննիսյանին՝ որովայնի հրազենային վնասվածքով: Վիրահատության ընթացքում Չաքար Հովհաննիսյանը մահացել է, ժամը 02.55-ին «Շտապ բուժօգնություն» ՊՓԲԸ թիվ 16 բրիգադի շտապօգնության ավտոմեքենայով տեղափոխվել է ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիահերձարան:

ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիահերձարանում դատական բժշկի մասնակցությամբ կատարվել է

Չաքար Հովհաննիսյանի դիակի գնում, որից հետո դիահերձարանից առգրավվել են դեպքի պահին վերջինիս հագին եղած հագուստները:

Դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն Չաքար Հովհաննիսյանի դիակի վրա հայտնաբերվել է հրազենային մուտքի անցք որովայնի առաջնային մակերեսին՝ էպիգաստրալ շրջանում, լյարդի, ստոծանու և ձախ թոքի ստորին բլթի, գոտկային մկանի միջանցիկ վնասվածքներ, գոտկային ձախ կեսի հետին մակերեսի արյունազեղում, որոնք հետևանք են գնդակով լիցքավորված հրազենից արձակված կրակոցի ներգործության: Չաքար Հովհաննիսյանի մահվան պատճառ է հանդիսացել արյան սուր կորուստը:

Դիահերձման ժամանակ Չաքար Հովհաննիսյանի մարմնից հանվել է 9մմ տրամաչափի 1 գնդակ:

Դատաձգաբանական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Չաքար Հովհաննիսյանի դիակից հանված գնդակը գործարանային արտադրության 9մմ տրամաչափի փամփուշտի մաս կազմող կրակված գնդակ է: Այս տեսակի փամփուշտները նախատեսված են «ՊՄ» և «ԱՊՄ» ատրճանակների համար: Գնդակի վրայի կրակման հետքերը բնորոշ են «ՊՄ» ատրճանակից կրակված հետքերին:

Դատաձգաբանական և դատաքիմիական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ Չաքար Հովհաննիսյանի հագուստների վրա առկա վնասվածքները հանդիսանում են իրար շարունակությունը կազմող հրազենային-գնդակային մուտքի կույր վնասվածքներ, պատճառվել են զենքից մեկ կրակոցով արձակված պղինձ պարունակող 9մմ տրամաչափի գնդակով:

Դատարանի համապատասխան որոշման հիման վրա ստացվել և ուսումնասիրվել են Չաքար Հովհաննիսյանի բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային զանգերի վերձանումները:

Կատարված նախաքննությամբ պարզվել է, որ 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 23-ի սահմաններում, Չաքար Հովհաննիսյանը և վերջինիս ընկեր, «գույնի» մականունով Արմեն Ավետիսյանն ակոհով օգտագործած վիճակում գնացել են զանգվածային անկարգությունների կատարման վայր: Ժամը 00-ից 01-ի

սահմաններում զանգվածային անկարգության մասնակիցների հետ Չաքար Հովհաննիսյանը գտնվել է Մաշտոցի պողոտայի մոտակայքում, որտեղ էլ ստացել է հրագենային վնասվածքը, իսկ Արմեն Ավետիսյանը, նրան թողնելով անօգնական վիճակում, դեպքի վայրից դիմել է փախուստի, իսկ Չաքար Հովհաննիսյանը քննությանը չպարզված անձանց կողմից տեղափոխվել է հիվանդանոց:

Չնայած Արմեն Ավետիսյանը, ով մեկ ու կես տարի խուսափում էր նախաքննական մարմնին ներկայանալուց, հերքել է Չաքար Հովհաննիսյանի հետ զանգվածային անկարգությունների կատարման վայր գնալու և վերջինիս վնասվածքներ ստանալուն ակնատես լինելու հանգամանքը, վերոգրյալը հիմնավորվել է հարցաքննված շուրջ 15 անձանց, այդ թվում՝ Չաքար Հովհաննիսյանի քրոջ ամուսնու՝ Վարդան Մոսյանի, նրա ընկերներ՝ Նորայր Մելքոնյանի, Վաչագան Եղիազարյանի, վերջինիս հոր՝ Ազատ Եղիազարյանի, և հենց իր՝ Արմեն Ավետիսյանի ընկերոջ՝ Գրիգոր Մովսիսյանի ցուցմունքներով, քրեական գործի այլ նյութերով:

Չաքար Հովհաննիսյանի քույրը՝ Մարիամ Հովհաննիսյանը, ճանաչվել է տուժողի իրավահաջորդ և ցուցմունք է տվել այն մասին, որ եղբոր մահվան հանգամանքների մասին որևէ տեղեկություն չունի:

Մարիամ Հովհաննիսյանը ծանոթացել է քրեական գործով նշանակված փորձաքննությունների եզրակացություններին, որից հետո որևէ միջնորդություն չի արել:

ՀՀ ոստիկանությանը և ազգային անվտանգության ծառայությանը տրվել են հանձնարարություններ՝ Չաքար Հովհաննիսյանի վիրավորվելուն ակնատես անձանց հայտնաբերելու, մեղավորի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

Ըստ օպերատիվ-հետախուզական տվյալների՝ Չաքար Հովհաննիսյանը զանգվածային անկարգությունների կատարմանը ներգրավվել է Արմեն Ֆարմանյանի կողմից:

## 5. ՔԼՈՅԱՆ ԳՈՌ ՍԱՐԳՍԻ

(ծնված 15.12.1979 թվականին Երևան քաղաքում,  
նախկինում չդատված, անկուսակցական, չի աշխատել)

2008թ. մարտի 1-ին՝ ժամը 21.30-ի սահմաններում, անհայտ անձանց կողմից Երևանի «թիվ 3 կլինիկական հիվանդանոց» ՓԲ ընկերություն է տեղափոխվել Գոռ Քլոյանը՝ աճուկային շրջանում հրազենային վնասվածքով: Վիրահատությամբ Գոռ Քլոյանի մարմնից հանվել է մետաղի կտոր: Ժամը 04.30-ի սահմաններում Գոռ Քլոյանը մահացել:

Երևանի «թիվ 3 կլինիկական հիվանդանոց» ՓԲ ընկերությունից առգրավվել են Գոռ Քլոյանի մարմնից հանված օտար մարմինը և դեպքի պահին նրա հագին եղած հագուստները:

ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիախերձարանում դատական բժիշկի մասնակցությամբ կատարվել է Գոռ Քլոյանի դիակի զննում:

Դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Գոռ Քլոյանի դիակի վրա հայտնաբերվել է ձախ աճուկա-ենթագտային շրջանի ջնջիված բեկորային վերք: Մահը վրա է հասել ձախ աճուկա-ենթագտային շրջանի ջնջիված բեկորային վնասվածքով պայմանավորված արյան սուր կորստից:

Դատաձգաբանական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Գոռ Քլոյանի դիակից հանված առարկան հանդիսանում է գործարանային արտադրության «Չերյոմուխա - 7» տեսակի կրակված փամփուշտի կոնտեյներ՝ գազային նռնակ՝ իր պլաստմասե խցաններով: Խցանների վրայի կրակման հետքերը բնորոշ են հատուկ միջոց հանդիսացող «ԿՍ-23» կարաբիններին: Խցանի վրա առկա են դեֆորմացիա և պատռվածքներ, որոնք կարող էին առաջանալ որևէ պինդ մարմնի հետ բախման կամ որևէ արգելքի միջով անցնելու հետևանքով:

Դատաձգաբանական և դատաքիմիական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ Գոռ Քլոյանի հագուստների վրա առկա

վնասվածքները հանդիսանում են իրար շարունակությունը կազմող հրազենային-զնդակային մուտքի կույր վնասվածքներ, կարող էին պատճառվել զենքից մեկ կրակոցով արձակված «Չերյոմուխա 7» տեսակի կրակված փամփուշտի գազային նռնակով:

Կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Գոռ Քլոյանը զանգվածային անկարգությունների կատարման վայր է գնացել ժամը 20-ի սահմաններում: Ժամը 21.30-ի սահմաններում զանգվածային անկարգության մի խումբ մասնակիցների հետ գնացել է Գր.Լուսավորիչ և Մաշտոցի պողոտայի խաչմերուկ, որտեղ ստացել է մարմնական վնասվածք, որից հետո քննությամբ դեռևս չպարզված անձինք ԳԱԶ-31 մակնիշի մոխրագույն տաքսի ավտոմեքենայով նրան տեղափոխել են դեպքի վայրից:

Հիշյալ հանգամանքը հիմնավորվել է հարցաքննված շուրջ 15 անձանց, այդ թվում՝ Վարդան Անդրեասյանի, Կառլեն Առաքելյանի ցուցմունքներով, վերջիններիս մասնակցությամբ լուսանկարով ճանաչման ներկայացնելու արձանագրությամբ և քրեական գործի այլ նյութերով:

Գոռ Քլոյանի հայրը՝ Սարգիս Քլոյանը, ճանաչվել է տուժողի իրավահաջորդ և ցուցմունք է տվել այն մասին, որ Գոռ Քլոյանը մարտի 1-ին՝ ժամը 20-ի սահմաններում, դուրս է եկել տնից: Ժամը 20<sup>30</sup>-ի սահմաններում զանգահարել է տուն և հայտնել, որ գտնվում է Գր. Լուսավորչի փողոցում, որից հետո այլևս հեռախոսազանգերին չի պատասխանել: Ժամը 22-ի սահմաններում իր հեռախոսազանգին պատասխանել է մի կին ու հայտնել, որ հեռախոսի տերը, այսինքն՝ իր որդին, գտնվում է վիրահատական սեղանին:

Դատարանի համապատասխան որոշման հիման վրա ստացվել և ուսումնասիրվել են Գոռ Քլոյանի բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային զանգերի վերծանումները:

Սարգիս Քլոյանը՝ որպես տուժողի իրավահաջորդ, ծանոթացել է նշանակված փորձաքննությունների եզրակացություններին, միջնորդություններ չի արել:

ՀՀ ոստիկանությանը և ազգային անվտանգության ծառայությանը տրվել են հանձնարարություններ՝ Գոռ Զլոյանի վիրավորվելուն ակնատես անձանց հայտնաբերելու, մեղավորի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

Ըստ օպերատիվ-հետախուզական տվյալների՝ Գոռ Զլոյանը զանվածային անկարգություններին ներգրավվել է Արմեն Ֆարմանյանի կողմից:

## **6. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ**

**(ծնված 30.05.1980 թվականին Երևան քաղաքում,  
նախկինում չդատված, անկուսակցական, աշխատել է  
«SPS» բենգալցակայանում՝ որպես հերթափոխի պետ)**

2008թ. մարտի 1-ին՝ ժամը 21-ի սահմաններում, ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիահերձարան է տեղափոխվել Գրիգոր Գևորգյանի դիակը՝ գլխի շրջանում հրազենային վնասվածքներով:

ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիահերձարանում դատական բժիշկի մասնակցությամբ կատարվել է Գրիգոր Գևորգյանի դիակի զննում, որից հետո դիահերձարանից առգրավվել են Գրիգոր Գևորգյանի բջջային հեռախոսը և դեպքի պահին վերջինիս հագին եղած հագուստները:

Դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Գրիգոր Գևորգյանի դիակի քթի մեջքին հայտնաբերվել է հրազենային մուտքի 0,5x0,4սմ ձախերի անցք, ձախ ճակատա-գագաթային շրջանում՝ ելքի անցք, ինչպես նաև՝ քթի, զանգի հիմնի և թաղի ոսկրերի բազմաբեկորային կոտրվածքներ, ուղեղանյութի ջնջխում՝ ուղեղանյութի արտանկումով, կարծր թաղանթի վնասվածք, որոնք հետևանք են գնդակով լիցքավորված հրազենից արձակված կրակոցի



ներգործության: Մահվան պատճառ է հանդիսացել գլխուղեղի կենսական կարևորագույն ֆունկցիաների սուր խանգարումը:

Գատարանի համապատասխան որոշման հիման վրա ստացվել և ուսումնասիրվել են Գրիգոր Գևորգյանի բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային զանգերի վերծանումները:

Կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Գրիգոր Գևորգյանը հրագենային վնասվածքն ստացել է 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 21-ի սահմաններում, Լեռ և Պարոնյան փողոցների խաչմերուկում գտնվող կոշիկի վերանորոգման կրպակի դիմաց, այնուհետև քննությամբ դեռևս չպարզված անձանց կողմից տեղափոխվել է Ջաքիյան փողոց, որտեղ դիակը պատգարակով դրվել է կայանված «Շտապ բուժօգնություն» ՊՓԲԸ թիվ 64 բրիգադի շտապօգնության ավտոմեքենան ու տեղափոխվել է դիահերձարան:

Հիշյալ հանգամանքը պարզվել է հարցաքննված շուրջ 20 անձանց, այդ թվում՝ շտապօգնության ավտոմեքենայի վարորդ Մարտին Մարտիրոսյանի, բուժբույր Դոնարա Ջաքարյանի, ինչպես նաև՝ Գրիգոր Գևորգյանի ծանոթ (նույն թաղի բնակիչ) Ռոբերտ Սիմոնյանի ցուցմունքներով, լուսանկարով ճանաչման ներկայացնելու արձանագրությունով, Մարտին Մարտիրոսյանի մասնակցությամբ՝ Գրիգոր Գևորգյանի դիակը շտապօգնության մեքենան տեղադրելու վայրի զննության արձանագրությամբ:

Միաժամանակ Գրիգոր Գևորգյանի կնոջ, տուժողի իրավահաջորդ Վարդուհի Բաղդասարյանի, և նրա եղբոր՝ Ռոմիկ Բաղդասարյանի ցուցմունքներով պարզվել է, որ Գրիգոր Գևորգյանը ժամը 20-ի սահմաններում զանգվածային անկարգությունների կատարման վայր է գնացել Ռոմիկ Բաղդասարյանի հետ, սակայն ժամը 21-ի սահմաններում կորցրել են միմյանց, իսկ առավոտյան դիակը հայտնաբերել են դիահերձարանում:

Տուժողի իրավահաջորդ Վարդուհի Բաղդասարյանը ծանոթացել է նշանակված փորձաքննությունների եզրակացություններին:

ՀՀ ոստիկանությանը և ազգային անվտանգության ծառայությանը տրվել են հանձնարարություններ՝ Գրիգոր Գևորգյանի վիրավորվելուն ականատես անձանց

հայտնաբերելու, մեղավորի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

## **7. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ ԱՖՐԵՆՏԻ**

**(ծնված 16.04.1975 թվականին Երևան քաղաքում,**

**նախկինում չդատված, անկուսակցական, զբավել է ոսկերչությամբ)**

2008թ. մարտի 1-ին՝ ժամը 22.30-ի սահմաններում, անհայտ անձանց կողմից, թիկունքի հրազենային վնասվածքով Երևանի թիվ 2 հիվանդանոց, այնուհետև Մարգարյանի անվան հիվանդանոց է տեղափոխվել Դավիթ Պետրոսյանը, որտեղ էլ մահացել է և ժամը 24-ի սահմաններում «Շտապ բուժօգնություն» ՊՓԲԸ թիվ 016 բրիգադի շտապօգնության ավտոմեքենայով տեղափոխվել ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիախերձարան:

ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիախերձարանում դատական բժիշկի մասնակցությամբ կատարվել է Դավիթ Պետրոսյանի դիակի զննում, որից հետո դիախերձարանից առգրավվել են դեպքի պահին վերջինիս հագին եղած հագուստները:

Դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Դավիթ Պետրոսյանի դիակի վրա հայտնաբերվել է հրազենային, գնդակային մուտքի անցք՝ կրծքավանդակի աջ կեսի հետին մակերեսին, աջ երիկամի, լյարդի, ստոծանու և աջ թոքի ստորին ու միջին բլթերի, աջից 5-րդ միջկողային մկանի միջանցիկ վնասվածքներ, կրքային մեծ և փոքր մկանների վնասվածքներ, կրծքավանդակի աջ կեսի առաջնային մակերեսի արյունազեղում, որոնք պատճառվել են կենդանության օրոք, հետևանք են գնդակով լիցքավորված հրազենից արձակված կրակոցի ներգործության: Մահվան պատճառ է հանդիսացել վնասվածքի հետևանքով առաջացած արյան սուր կորուստը:

Վիրահատությամբ Դավիթ Պետրոսյանի մարմնից հանվել է 9մմ տրամաչափի մեկ գնդակ:

Դատաձգաբանական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Դավիթ Պետրոսյանի դիակից հանված գնդակը գործարանային արտադրության 9մմ տրամաչափի փամփուշտի մաս կազմող՝ կրակված գնդակ է: Այս տեսակի փամփուշտները նախատեսված են «ՊՄ» և «ԱՊՄ» ատրճանակների համար: Գնդակի վրայի կրակման հետքերը բնորոշ են «ՊՄ» ատրճանակից կրակված հետքերի: Գնդակի վրա առկա քերծվածքային դեֆորմացիան արդյունք է որևէ պինդ մարմնի հետ բախման, հնարավոր է՝ հետցատկ կամ որևէ արգելքի միջով անցնելու:

Դատաձգաբանական և դատաքիմիական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ Դավիթ Պետրոսյանի վերարկուի վրա հայտնաբերված վնասվածքը հանդիսանում է հրազենային-գնդակային մուտքի կույր վնասվածք, պատճառվել է զենքից մեկ կրակոցով արձակված պղինձ պարունակող 9մմ տրամաչափի գնդակով:

Դատարանի համապատասխան որոշման հիման վրա ստացվել և ուսումնասիրվել են Դավիթ Պետրոսյանի բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային զանգերի վերծանումները:

Կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Դավիթ Պետրոսյանը զանգվածային անկարգությունների վայր՝ Գր. Լուսավորչի փողոց է գնացել աներոջ որդիների՝ Վահե և Կարեն Դալալոյանների, քեռու որդի Նարեկ Վարդումյանի հետ՝ ժամը 20-ի սահմաններում:

Ժամը 21-ի սահմաններում, Դավիթ Պետրոսյանը, գտնվելով Պարոնյան փողոցի թիվ 2 շենքի մոտ, իր բջջային հեռախոսով կատարել է լուսանկարահանումներ: Այդ ընթացքում կարճ ժամանակով առանձնացել է Նարեկ Վարդումյանից, Վահե և Կարեն Դալալոյաններից: Որոշ ժամանակ անց վերջիններս Դավիթ Պետրոսյանին գտել են մարմնական վնասվածք ստացած վիճակում և քննությամբ դեռևս չպարզված ավտոմեքենայով տեղափոխել հիվանդանոց, որտեղ էլ վերջինս մահացել է:

Հիշյալ հանգամանքները հիմնավորվել են հարցաքննված շուրջ 15 անձանց, այդ թվում՝ Դավիթ Պետրոսյանի մոր՝ տուժողի իրավահաջորդ Ջենմա

Վարդումյանի, կնոջ՝ Լիլիթ Դալալյանի, Նարեկ Վարդումյանի, Վահե և Կարեն Դալալյանների ցուցմունքներով, համակարգչատեխնիկական փորձաքննության եզրակացությամբ, Նարեկ Վարդումյանի մասնակցությամբ Դավիթ Պետրոսյանի մարմնական վնասվածք ստանալու վայրի զննման արձանագրությամբ, ինչպես նաև քրեական գործի այլ նյութերով:

Ջեմմա Վարդումյանը ծանոթացել է նշանակված փորձաքննությունների եզրակացություններին, որի կապակցությամբ միջնորդություններ չի արել:

ՀՀ ոստիկանությանը և ազգային անվտանգության ծառայությանը տրվել են հանձնարարություններ՝ Դավիթ Պետրոսյանի վիրավորվելուն ակնատես անձանց հայտնաբերելու, մեղավորի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

#### **8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ԷԴԻԿԻ**

(ծնված 05.12.1979 թվ.-ին Արարատի մարզի Լուսառատ գյուղում, նախկինում չդատված, չի աշխատել, զբաղվել է հողագործությամբ, անկուսակցական, փաստացի բնակվել է Արարատի մարզի Եղեգնավան գյուղում)

2008թ. մարտի 1-ին՝ ժամը 22-ի սահմաններում, անհայտ անձանց կողմից, գանգուղեղային բաց վնասվածքով, անգիտակից վիճակում Երևանի թիվ 3 կլինիկական հիվանդանոց, այնուհետև «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն է տեղափոխվել Սամվել Հարությունյանը, ով գիտակցության չզալով ապրիլի 11-ին մահացել է:

Դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Սամվել Հարությունյանի դիակի վրա հայտնաբերվել է գանգուղեղային բաց, բութ, թափանցող վնասվածք, գլխի ձախ քունքա-կողմնային շրջանի սալջարդ վերք, կարծրենու պատռված դեֆեկտով, գլխուղեղի ջնջխում և արտաթափում, ձախից կողմնոսկրի և քունքոսկրի բազմաբեկորային կոտրվածքներ: Մահը վրա է հասել

օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայից, որը պայմանավորված է եղել զանգուղեղային բաց, բուք, թափանցող վնասվածքով, վերջինիս հետևանքով զարգացած թարախային մենինգիտով, երկկողմանի թարախային թոքաբորբով:

Գատարանի համապատասխան որոշման հիման վրա ստացվել և ուսումնասիրվել են Գրիգոր Գևորգյանի բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային զանգերի վերծանումները, զննվել են «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի մատյանները, նշանակվել է դատահամակարգչային փորձաքննություն:

Կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Սամվել Հարությունյանը զանգվածային անկարգությունների վայր է գնացել ժամը 18.30-ի սահմաններում ընկերոջ՝ Արամ Բարսեղյանի, և մորաքրոջ որդու՝ Գեղամ Գևորգյանի հետ: Ժամը 21<sup>30</sup>-ի սահմաններում Սամվել Հարությունյանը, բաժանվելով Արամ Բարսեղյանից և Գեղամ Գևորգյանից, զանգվածային անկարգությունների մի խումբ մասնակիցների հետ գնացել է Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի և Գր. Լուսավորչի փողոցի խաչմերուկ և քարեր նետելով՝ շարժվել առաջ, որի ընթացքում էլ ստացել է մարմնական վնասվածք և քննությամբ չպարզված անձանց կողմից տեղափոխվել է հիվանդանոց:

Հիշյալ հանգամանքը պարզվել է հարցաքննված շուրջ 20 անձանց՝ այդ թվում՝ Արամ Բարսեղյանի, Գեղամ Գևորգյանի, Սամվել Հարությունյանի մարմնական վնասվածք ստանալուն ականատես Կառլեն Առաքելյանի և Վարդան Անդրեասյանի, Սամվել Հարությունյանի հոր՝ տուժողի իրավահաջորդ Էդիկ Հարությունյանի ցուցմունքներով, Կառլեն Առաքելյանի և Վարդան Անդրեասյանի մասնակցությամբ լուսանկարով ճանաչման ներկայացնելու, ինչպես նաև վերջիններիս մասնակցությամբ կատարված քննչական փորձարարության արձանագրություններով և քրեական գործի այլ նյութերով:

Հատկանշական է, որ Սամվել Հարությունյանի հայրը՝ Էդիկ Հարությունյանը, շուրջ 2 ամիս թաքցրել է իրականությունը, չի հայտնել, թե ում հետ է Սամվել Հարությունյանը գնացել զանգվածային անկարգությունների կատարման վայր: Հիշյալ հանգամանքն ի հայտ է եկել Սամվել Հարությունյանի

հեռախոսահամարի մուտքային և ելքային հեռախոսագանգերի վերծանումների ուսումնասիրությամբ և լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու արդյունքում միայն:

Տուժողի իրավահաջորդ Էդիկ Հարությունյանը ծանոթացել է քրեական գործով նշանակված փորձաքննությունների եզրակացություններին, միջնորդություններ չի ներկայացրել:

ՀՀ ոստիկանությանը և ազգային անվտանգության ծառայությանը տրվել են հանձնարարություններ՝ Սամվել Հարությունյանի վիրավորվելուն ականատես այլ անձանց հայտնաբերելու, մեղավորի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

#### **9. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՍԼԵՏ ԱՂԱՍՈՒ**

**(ծնված 15.05.1976թ., Կոտայքի մարզ, քաղաք Եղվարդ, Շիրակի 86 տուն, չդատված, անկուսակցական, ծառայել է ՀՀ ՈՁ թիվ 1032 գորամասի մոտոհրաձգային գումարտակի 1-ին վաշտի հրամանատար, ոստիկանության կապիտան, հետմահու մայր)**

Համլետ Թադևոսյանը ՀՀ ՈՁ թիվ 1032 գորամասի կազմում ժամը 19-ի սահմաններում ծառայություն է իրականացրել Երևանի Գր. Լուսավորչի փողոցում՝ հասարակական կարգն ապահովելու և զանգվածային անկարգությունները կանխելու նպատակով: Չանգվածային անկարգությունների մասնակիցների հերթական զինված հարձակումը կանխելու ընթացքում՝ ժամը 21<sup>15</sup>-ի սահմաններում, Գ. Լուսավորչի փողոցի թիվ 17 շենքի դիմաց զանգվածային անկարգության՝ դեռևս քննությամբ չպարզված մասնակցի նետած պայթուցիկ սարքի պայթյունից գույգ ստորին և վերին վերջույթների, կոնքի, որովայնի և սեռական օրգանների շրջանում ստացել է բազմաթիվ բեկորային վնասվածքներ և տեղափոխվել Երևանի 3-րդ կլինիկական հիվանդանոց, որտեղ էլ ժամը 03-ին մահացել է:

ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի դիախերձարանում դատական բժշկի մասնակցությամբ կատարվել է Համլետ Թադևոսյանի դիակի զննում, որի ընթացքում դիակից հանվել և առգրավվել է մետաղյա երեք բեկոր:

Երևանի «3-րդ կլինիկական հիվանդանոց» ՓԲ ընկերությունից առգրավվել են Համլետ Թադևոսյանի հագուստները, պաշտպանիչ միջոցները և գրահաբաճկոնը: Կատարված զննմամբ պարզվել է, որ դրանց վրա առկա են բազմաթիվ անցքեր: Բացի այդ, զննմամբ Համլետ Թադևոսյանի զինվորական կոշիկի վրա հայտնաբերվել է մետաղյա բեկոր:

Դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Համլետ Թադևոսյանի մահը վրա է հասել տրավմատիկ-հեմորագիկ շոկից, որն էլ պայմանավորված է եղել ձախից վերին և ստորին կոպի, որովայնի, շեքի, փոշտի, ամորձիների, առնանդամի, գույգ բազուկների, ձախ նախաբազկի, գույգ ազդրերի, սրունքների, աջ ոտնաթաթի առաջին մատի եղունգային ֆալանգի բազմաթիվ պայթյունային բեկորային վիրավորումներով:

Նշանակված դատաձգաբանական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Համլետ Թադևոսյանի գույգ սրունքներից հայտնաբերված 3 մետաղական բեկորները բեկորացվել են պայթյունի հետևանքով, դրանցից մեկը հանդիսանում է «Ֆ-1» «Ռ-Գ-Գ-5» և «Ռ-Գ-42» տեսակի նոնակների պայթեցնելու համար նախատեսված «ՌԻՉՌ-ԳՄ» տեսակի գործարանային արտադրության պայթուցիչի միացման ականոցի վերին հատվածի բեկոր, իսկ մյուսներն՝ անհատականացման հատկանիշների բացակայության պատճառով չեն որոշվել:

Դատաձգաբանական և դատաքիմիական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ Համլետ Թադևոսյանի հագուստների վրա առկա վնասվածքները բեկորային բնույթի են, առաջացել են բեկորացման ենթակա ամուր պատյան ունեցող պայթուցիկ սարքի պայթյունից, որը պայթել է նրա ոտքերի մոտ, հավանաբար՝ գործարանային արտադրության «ՌԻՉՌ-ԳՄ» տեսակի պայթուցիչով, իսկ կիսաճոքավոր կոշիկի վրայից հայտնաբերված մետաղական բեկորը բեկորացվել է պայթյունի հետևանքով, այն «Ֆ-1» «Ռ-Գ-Գ-5» և «Ռ-Գ-42» տեսակի

նռնակների պայթեցնելու համար նախատեսված գործարանային արտադրության «ՌԻԶՌ-ԳՄ» տեսակի պայթուցիչի միացման ականոցի վերին հատվածի բեկոր է:

Համլետ Թադևոսյանի հագուստների և գրահաբաճկոնի դատակենսաբանական փորձաքննության եզրակացության համաձայն՝ դրանց վրա հաստատվել է արյան առկայությունը, որը կարող էր առաջանալ Համլետ Թադևոսյանից:

Պայթյունատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ Համլետ Թադևոսյանի գրահաբաճկոնի վրա առկա մակերեսային և թափանցող, ներքևից վերև ուղղություն ունեցող վնասվածքներն առաջացել են բեկորացման ենթակա մետաղյա ամուր պատյան ունեցող պայթուցիկ սարքի պայթյունից, իսկ գրահաբաճկոնից հանված մետաղյա բեկորները «տրոտիլ» տեսակի փշրտող պայթուցիկ նյութով լիցքավորված, պայթած պայթուցիկ սարքի բեկորներ են: Ջրահաբաճկոնի վրա առկա վնասվածքների և դրանցից հանված բեկորների վրա բավարար անհատականացման հատկանիշների բացակայության պատճառով փորձաքննությամբ պայթուցիկ սարքի կոնկրետ տեսակը չի պարզվել:

ՀՀ Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ի կարգադրությամբ ստեղծված փորձագետների փաստահավաք խմբի անդամների գրավոր առաջարկով՝ դատաձգաբանական, դատակենսաբանական, պայթյունատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննությունների ենթարկված հագուստները և գրահաբաճկոնը Համլետ Թադևոսյանին պատկանելու հանգամանքը հաստատելու համար նշանակվել է գենետիկական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն Համլետ Թադևոսյանի հագուստների և գրահաբաճկոնի վրա առկա արյան հետքերից անջատվել է ԳՆԹ, որոնց գենետիկական բնութագրերը 9 լոկուսով համընկում են նրա դիակի չոր արյան նմուշից անջատված ԳՆԹ-ի գենետիկական բնութագրի հետ:

Հարցաքննվել է շուրջ 25 անձ, այդ թվում՝ Համլետ Թադևոսյանի համաժառայակիցները. նրանց ցուցմունքներով պարզվել է, որ զանգվածային անկարգությունները կանխելու և հասարակական կարգն ապահովելու նպատակով



Ժամը 21<sup>15</sup>-ի սահմաններում տեղակայված են եղել Գ.ր. Լուսավորչի փողոցի թիվ 17 շենքի դիմաց, երբ զանգվածային անկարգությունների մասնակիցների շարքերից ինչ-որ մեկը պայթուցիկ սարք է նետել իրենց ուղղությամբ, որի պայթյունի հետևանքով Համլետ Թադևոսյանը մահացել է, իսկ իրենցից շատերն ստացել են բեկորային վնասվածքներ:

Համլետ Թադևոսյանի հայրը՝ Աղասի Թադևոսյանը, ճանաչվել է տուժողի իրավահաջորդ և որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 2008թ. մարտի 2-ին՝ ժամը 10-ի սահմաններում, Մոսկվայում տեղեկացել է, որ որդին ոտքերից վիրավորվել է և գտնվում է հիվանդանոցում: Վերադառնալով Երևան՝ իմացել է, որ մարտի 1-ի՝ լույս 2-ի գիշերը մայրաքաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ընթացքում դրա մասնակիցների կողմից նետած նռնակի պայթյունից Համլետ Թադևոսյանը մահացել է:

Աղասի Թադևոսյանը ծանոթացել է գործով նշանակված փորձաքննությունների եզրակացություններին, միջնորդություններ չի արել:

ՀՀ ոստիկանությանը և ազգային անվտանգության ծառայությանը տրվել են հանձնարարություններ՝ Համլետ Թադևոսյանի վիրավորվելուն ակնառեստ անձանց հայտնաբերելու, մեղավորի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

### **10. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԷՂԻԿԻ**

**(ծնված 17.03.1983թ., Արարատի մարզ, գյուղ Տափերական, չղատված, անկուսակցական, ծառայել է ՀՀ ՈԶ թիվ 1033 զորամասում որպես ժամկետային զինծառայող, շարքային)**

Տիգրան Աբգարյանը ՀՀ ՈԶ թիվ 1033 զորամասի կազմում ժամը 19-ի սահմաններում ծառայություն է իրականացրել Երևանի Գ.Լուսավորչի փողոցում՝ հասարակական կարգն ապահովելու և զանգվածային անկարգությունները կանխելու նպատակով: Ժամը 23-ի սահմաններում Լեռյի փողոցի «Սվին» խանութի

մոտ զանգվածային անկարգության՝ դեռևս քննությամբ չպարզված մասնակցի կողմից գործադրված հրազենի կրակոցից ստացել է պարանոցի միջանցիկ հրազենային-զնդակային վիրավորում, տեղափոխվել հիվանդանոց, որտեղ էլ, գիտակցության չգալով, 11.04.2008թ. մահացել է:

Դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Տիգրան Աբգարյանի մահը վրա է հասել ողնուղեղի կարևորագույն կենսական ֆունկցիաների խանգարումից, պարանոցի հրազենային-զնդակային միջանցիք վիրավորում ստանալու հետևանքով, որն ունի առջևից հետ ուղղություն:

ՀՀ ՈՁ թիվ 1033 գորամասի շտաբից առգրավվել է դեպքի պահին Տիգրան Աբգարյանի հագին եղած զինվորական ձմեռային բաճկոնը: Հիվանդանոցներից առգրավվել են Տիգրան Աբգարյանի հիվանդության պատմագրերը:

Դատահետքաբանական, դատաձգաբանական և պայթյունատեխնիկական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ Տիգրան Աբգարյանի ձմեռային զինվորական բաճկոնի օձիքի հետնային մասում առկա 19x9մմ չափերի վնասվածքը հրազենային, զնդակային է, առաջացել է պղինձ պարունակող զնդակով, առջևից հետ ուղղությամբ կատարված առնվազն մեկ կրակոցի հետևանքով, այն հանդիսանում է ելքի վնասվածք:

Հարցաքննվել է շուրջ 30 անձ, այդ թվում՝ Տիգրան Աբգարյանի համաժառայակիցները. նրանց ցուցմունքներով պարզվել է, որ 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 23-ի սահմաններում, իրենց ստորաբաժանումները գտնվել են Լեռյի փողոցում, երբ Գ.ր. Լուսավորչի անկյունից՝ «Սվին» խանութի մոտից, զանգվածային անկարգության մասնակիցներից մեկի՝ իրենց ուղղությամբ արձակած կրակոցից Տիգրան Աբգարյանը պարանոցի շրջանում ստացել է վնասվածք, տեղափոխվել է հիվանդանոց, իսկ ապրիլի 11-ին, գիտակցության չգալով մահացել է:

Տիգրան Աբգարյանի մայրը՝ Ռուզաննա Հարությունյանը, ճանաչվել է տուժողի իրավահաջորդ և որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ զանգվածային անկարգությունների մասնակիցների սանձարձակ վայրագությունների հետևանքով մեծ քանակությամբ զինվորականների

վնասվածքներ ստանալու մասին իմանալով, որդու վիճակի մասին տեղեկություն ստանալու նպատակով, 2008թ. մարտի 2-ին՝ ժամը 09-ի սահմաններում, գնացել է գորամաս և տեղեկացել, որ իր որդին վիրավորվել է ու գտնվում է «Էրեբունի» բժշկական կենտրոնում: Հիվանդանոցում տեղեկացել է, որ որդին Լեռնի փողոցում ամբոխի միջից արձակված կրակոցից վնասվածք է ստացել պարանոցի շրջանում: Որդու կյանքը փրկելու ուղղությամբ ձեռնարկված բժշկական միջոցառումները դրական արդյունք չեն տվել, և նա 2008թ. ապրիլի 11-ին առանց գիտակցության գալու մահացել է: Ռուզաննա Հարությունյանը ծանոթացել է նշանակված փորձաքննությունների եզրակացություններին, միջնորդություններ չի արել:

ՀՀ ոստիկանությանը և ազգային անվտանգության ծառայությանը տրվել են հանձնարարություններ՝ Տիգրան Աբգարյանի վիրավորվելուն ակնատես անձանց հայտնաբերելու, մեղավորի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

Քրեական գործով հարցաքննվել են մի քանի տասնյակ անձինք, նշանակվել են դատաբժշկական, դատաձգաբանական, դատաձգաբանական և դատահետքաբանական համալիր, դատակենսաբանական ու համակարգչատեխնիկական փորձաքննություններ, կատարվել են դեպքի վայրի զննություններ, մեղավոր անձանց ինքնությունը պարզելու և նրանց հայտնաբերելու նպատակով տրվել են բազմաթիվ հանձնարարություններ ու ձեռնարկվել են մի շարք օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Հարցաքննվել են նաև 2008 թվականի մարտի 1-ին զանգվածային անկարգությունները կանխելուն ուղղված միջոցառմանը մասնակցած ոստիկանները և ՀՀ ՌԶ գորամասերի զինծառայողները: Ոստիկանության գործերի համապատասխան գորամասերից առգրավվել են զենքերի ընդունման-հանձնման հաշվառման բոլոր մատյանները, ուսումնասիրվել են դրանցում կատարված գրանցումներն ու պարզվել զինանոցներից դուրս բերված բոլոր զենքերը:

Առգրավվել և դատաձգաբանական փորձաքննության են ներկայացվել ինչպես զանգվածային անկարգությունների վայրում ծառայություն իրականացրած ոստիկաններին և զինծառայողներին ամրակցված հրազեններն ու հատուկ միջոցները, այնպես էլ ոստիկանության զորքերի համապատասխան զորամասերի ներքին ծառայության համար զինանոցից դուրս բերված զենքերը: Հիշատակված բոլոր փաստաթղթերի պատճենները կցվել են քրեկան գործի նյութերին:

Դավիթ Պետրոսյանի, Հովհաննես Հովհաննիսյանի և Ջաքար Հովհաննիսյանի մարմիններից հանված գնդակները համեմատվել են ինչպես դեպքի վայրում հայտնաբերված պարկուճների, այնպես էլ Հանրապետական գնդակապարկուճադարանում հաշվառված գնդակների և զանգվածային անկարգությունները կանխելուն ուղղված միջոցառմանը մասնակցած ոստիկանների ու ՀՀ ՌԶ զորամասերի զինծառայողներին ամրացված հրազեններից արձակված գնդակների հետ: Համընկնումներ չեն հաստատվել և դեռևս չեն հայտնաբերվել այն հրազենները, որոնցից կատարվել են կրակոցները:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ համաձայն դատաձգաբանական փորձաքննության թիվ 389 եզրակացության՝ Գոռ Քլոյանի, Տիգրան Խաչատրյանի և Արմեն Ֆարմանյանի մարմնից հանված «Չերյոմուխա-7» գազային նռնակի բեկորների վրա առկա կրակման հետքերը պիտանի չեն կոնկրետ զենքի նույնացման համար, այդ իսկ պատճառով դեռևս չի պարզվել, թե կոնկրետ որ զենքից արձակված կրակոցի հետևանքով են վիրավորվել և մահացել նշված անձինք: Այդ և գործի համար նշանակություն ունեցող մի շարք հարցերի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով փորձաքննություններ են նշանակվել նաև Ռ-ուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության «Հատուկ տեխնիկա և կապ» գիտաարտադրական միավարումում և «Փորձաքրեագիտական կենտրոնում»: Հիշյալ փորձաքննությունների եզրակացություններով նույնպես արձանագրվել է, որ մահացած և վնասվածքներ ստացած քաղաքացիների մարմիններից հանված «Չերյոմուխա-7» գազային նռնակները հնարավոր չէ նույնացնել դրանք արձակած զենքերի հետ:

Հարցաքննություններով հնարավորինս պարզվել են հատուկ միջոցներ կիրառած անձանց տեղաշարժը, նրանց արձակած կրակոցների քանակը, դեպքի վայրի այն հատվածները, որտեղից արձակվել են կրակոցները ու դրանց ուղղությունները: Նշված հանգամանքները համադրվում են մահացած անձանց վիրավորվելու վայրերի և մահվան հանգամանքների հետ:

2008թ. մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների փաստի առթիվ քննվող քրեական գործով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի ցուցումով՝ 2009թ. հուլիսի 13-ին ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ՝ զանգվածային անկարգությունների կանխման ընթացքում զենքի՝ ԿՍ-23 տեսակի հատուկ միջոցների հետ վարվելու կանոնները խախտելու, դրա հետևանքով անգուշությամբ երեք անձի մահ և ևս երեքին ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ պատճառելու փաստի առթիվ, գործերը միացվել են մեկ վարույթում:

Քրեական գործերով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ զանգվածային անկարգությունների և դրանց կանխման ընթացքում ինչպես անկարգության մասնակիցների, այնպես էլ ՀՀ ոստիկանության զորքերի զինձառայողների կողմից օգտագործվել են տարբեր տեսակի ու տրամաչափի զենքեր և հատուկ նշանակության հրազեն հանդիսացող ԿՍ-23 տեսակի կարաբիններ, ոստիկանների ու ոստիկանության զորքերի զինձառայողների նկատմամբ կիրառվել են տարբեր տեսակի պայթուցիկ սարքեր, այդ թվում նաև՝ մարտական նռնակներ:

Չանգվածային անկարգությունների ընթացքում մահացած և մարմնական վնասվածքներ ստացած քաղաքացիների մարմիններից հանված զնդակներն ու տարբեր տեսակի օտար մարմինները ենթարկվել են դատաձգաբանական փորձաքննության: Ստացված եզրակացությամբ արձանագրվել է, որ մահացած երեք և մարմնական վնասվածքներ ստացած երեք քաղաքացիների մարմիններից հանվել են «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտներից կրակված գազային նռնակներ և դրանց պլաստմասսե խցաններ:

Այսպես. Գոռ Քլոյանի և Արմեն Ֆարմանյանի դիակներից հանվել են «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտի գազային նռնակներ՝ ուղղորդող պլաստմասսե գլխիկներով, իսկ Տիգրան Խաչատրյանի դիակից՝ «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտի գազային նռնակ:

Արթուր Մուրադյանի մարմնից հանվել է «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտի գազային նռնակ՝ ուղղորդող պլաստմասսե գլխիկներով, Խաչիկ Դավթյանի և Հովհաննես Ասատրյանի մարմիններից հանվել են «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտի գազային նռնակի ուղղորդող պլաստմասսե գլխիկներ:

Դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունների համաձայն՝ Արթուր Մուրադյանի առողջությանը պատճառվել է միջին ծանրության վնաս, իսկ Խաչիկ Դավթյանին և Հովհաննես Ասատրյանին՝ կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ:

Միաժամանակ պարզվել է նաև, որ 2008թ. մարտի 1-ին Երևան քաղաքի Մաշտոցի, Գ.Լուսավորչի, Լեոյի և Պարոնյան փողոցներում հատուկ նշանակության հրազեն հանդիսացող ԿՍ-23 տեսակի կարաբիններ են օգտագործել ՀՀ ՈՁ հատուկ նշանակության ջոկատի ենթասպաներ Լևոն Հակոբյանը և Ավետիք Աթաբեկյանը, ՀՀ ՈՁ թիվ 1033 զորամասի ենթասպաներ Սյրտիչ Գարիբյանը և Վարդան Սահակյանը:

Ռուսաստանի Դաշնության ՆԳՆ «Հատուկ տեխնիկա և կապ» ԳԱՄ պետական ձեռնարկությունում անցկացված փորձաքննությամբ պարզվել է, որ «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտների կիրառումը բաց տարածության մեջ չի արգելվում, արգելվում է անմիջապես մարդու վրա կրակը: Կրակը կարող է արձակվել իրավախախտներին մոտ գտնվող տեղանքում կամ օբյեկտների վրա՝ հաշվի առնելով իրավախախտների վրա գազային ամպի տեղափոխումն ապահովող քամու ուղղությունը:

ՀՀ ոստիկանության ՓՔ վարչությունում անցկացված փորձաքննությամբ հիմնավորվել է, որ դիակներից և վիրավոր քաղաքացիների մարմիններից հանված «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտների գազային նռնակների պլաստմասսե խցանների վրա կան կողմնակի հետքեր՝ դեֆորմացիաներ, պատռվածքներ, շփման

և հպման հետքեր, որոնք առաջացել են պինդ մարմինների հետ բախման կամ արգելանյութի միջով անցնելու հետևանքով:

Նույն եզրակացությամբ արձանագրվել է նաև, որ պատին կամ այլ արգելքի բախվելուց հետո հետացատկի դեպքում /ինչպես նաև որևէ արգելքի միջով անցնելուց հետո/ «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտների գազային նռնակները, կախված բախման անկյունից և արգելանյութի հատկություններից, կարող են մարդուն պատճառել վնասվածքներ (նաև մահացու):

2008թ. մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների կանխման ընթացքում զենքի՝ ԿՍ-23 տեսակի հատուկ միջոցների հետ վարվելու կանոնները խախտելու, դրա հետևանքով անզոչությամբ երեք անձի մահ և ևս երեքին ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ պատճառելու համար Լևոն Հակոբյանին, Ավետիք Աթաբեկյանին, Սկրտիչ Ղարիբյանին և Վարդան Սահակյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Ընդ որում, 2008թ. նոյեմբերի 19-ից 24-ը՝ Երևան կատարած այցելության ժամանակ ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգը ՀՀ Գլխավոր դատախազի հետ հանդիպման ընթացքում երաշխավորել է իռլանդացի փորձագետ Քոլին Բարրոզին՝ որպես հատուկ միջոցների կիրառման և տեխնիկայի համապատասխան գիտելիքներ ու փորձ ունեցող անձնավորության: Վերջինս հայկական կողմի ծախսերի հաշվին հրավիրվել է Երևան՝ դիակներից հանված գազային նռնակները ոստիկանության զինձառայողների կողմից «Չերյոմուխա-7» տեսակի հատուկ միջոց կիրառած կոնկրետ հրազենների հետ նույնացման նպատակով համապատասխան փորձաքննությանն աջակցելու համար՝ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկելով անհրաժեշտ բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերի լուսապատճենները: Ուսումնասիրելով ներկայացված նյութերն ու պարզաբանման կարիք ունեցող հարցերը՝ Քոլին Բարրոզը հայտնել է, որ նման նույնացում կատարելն անհնար է համարում:

## **ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ**

2008թ. մարտի 2-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում թիվ 62202608 քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասի և 235-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած՝ բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վնասումով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, հրազենի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրմամբ, սպանություններով զուգորդված զանգվածային անկարգություններ հրահրելու և կազմակերպելու փաստի առթիվ:

Այսինքն՝ քրեական գործը հարուցվել է նաև սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների դեպքի առթիվ: Նույն քրեական գործի հարուցման առաջին իսկ օրվանից լրիվ և բազմակողմանի քննություն է կատարվել զանգվածային անկարգությունների ընթացքում 10 անձանց մահվան փաստի առթիվ:

Հետագայում՝ 2009թ. մարտի 18-ին, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել և 2009թ. մարտի 23-ին գործողության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածի համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասը՝ սպանություններով զուգորդված զանգվածային անկարգություններ կազմակերպելը կամ այդպիսի գործողություններն անմիջականորեն կատարելը, ճանաչվել է ուժը կորցրած: Նույն օրենքի 1-ին հոդվածի համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասը լրացվել է նոր՝ 10.1 կետով, որն արարքի



հանցավորություն է սահմանում զանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակիցների կատարած սպանության համար:

Վերոգրյալի հիման վրա քրեական գործի նյութերով նոր քրեական գործ է հարուցվել արդեն ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի հատկանիշներով, միա- ժամանակ, նկատի ունենալով, որ Դավիթ Պետրոսյանին, Գրիգոր Գևորգյանին, Տիգրան Խաչատրյանին, Արմեն Ֆարմանյանին, Գոռ Քլոյանին, Հովհաննես Հովհաննիսյանին, Չաքար Հովհաննիսյանին, Սամվել Հարությունյանին, Համլետ Թադևոսյանին և Տիգրան Աբգարյանին մահ պատճառելու դեպքերը եղել են 2008թ. մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ընթացքում՝ հիշյալ քրեական գործերը միացվել են մեկ վարույթում:

**Քրեական գործի նախաքննությամբ պարզվել և հիմնավորվել է.**

**Երևանի Ազատության հրապարակում տեղի  
ունեցած իրադարձությունների ընթացքում՝**

- **Մարմնական վնասվածք է ստացել 56 անձ՝**
  - ոստիկանության 34 աշխատակից,
  - 22 քաղաքացիական անձ:
  
- **Դեպքի վայրի զննությամբ Ազատության հրապարակում հայտնաբերվել է՝**
  - 6,35մմ տրամաչափի չեխական արտադրության «Z» մոդելի «B 274141» համարի ատրճանակ՝ պահունակում 4 փամփուշտ,
  - 7,62մմ տրամաչափի «TT» տեսակի ատրճանակ՝ պահունակում 5 փամփուշտ,
  - 9մմ տրամաչափի «Astra A-75L» մոդելի «23589-95A» համարի ատրճանակ՝ պահունակում 5 փամփուշտ,
  - 2 հատ «Заря 2» տեսակի լուսաձայնային նռնակ,
  - 2 հատ «Ռ-Գ-Դ-5» տեսակի ձեռքի նռնակ,

- 7 հատ «Ֆ-1» տեսակի ձեռքի նռնակ,
- 2 հատ ինքնաշեն «ԱՏԵ-92» տեսակի ձեռքի նռնակ,
- 2 հատ «Ռ-Գ-42» տեսակի ձեռքի նռնակ,
- 200 գրամանոց տրոտիլային պայթադուս,
- 1 հատ «ՄՌԻՎ-2» տեսակի հարվածային մեխանիզմ,
- գործարանային արտադրության 1 հատ 5,45մմ տրամաչափի ինքնաձիգի (ԱԿ-74, ԱԿՍ, ԱԿՍՌԻ) և 1 հատ 5,45մմ տրամաչափի գնդացրի (Ռ-ՊԿ-74) պահունակ,
- 76 հատ 5,45մմ տրամաչափի մարտական փամփուշտ,
- 25 հատ 7,62մմ տրամաչափի հրացանային մարտական փամփուշտ, 30 հատ 5,45մմ տրամաչափի և 27 հատ 7,62մմ տրամաչափի ինքնաձիգի մարտական փամփուշտ,
- 1 հատ 5,45մմ տրամաչափի փամփուշտ,
- 5 հատ թեք տաշվածքով փայտյա ձող,
- 2 ռետինե մահակ,
- 72 հատ տարբեր երկարության և տրամագծի մետաղական ձող, ամրան և խողովակ,
- 38 հատ «ռզնի» կոչվող մետաղական կոնստրուկցիա,
- դյուրավառ հեղուկով լցված 3 շիշ (Մոլոտովի կոկտեյլ),
- 3 պլաստմասսե տարա՝ դյուրավառ հեղուկով,
- քլորդիֆտորմեթան պարունակող բաց կանաչ մետաղյա բալոն,
- 18 հակազագ և մեկ կոնտեյներ,
- պլաստմասսե և փայտե բռնակներով 2 դանակ,
- 48 հատ դեղահաբ, որոնք պարունակում են «տրիֆլուպերազին» տեսակի հոգեներգործուն բաղադրատարրեր,
- 10 հատ դեղահաբ, որոնք պարունակում են «տրիհեքսիֆենիդիլ» տեսակի հոգեներգործուն բաղադրատարրեր,
- 4 բժշկական բռնիչ-մկրատ և 2 դատարկ ներարկիչ:

Նյութագիտական փորձաքննության թիվ 08-0142, սառը զենքի փորձաքննության թիվ 479, դատապայթյունատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննության թիվ 07100803, դատաձգաբանական, դատապայթյունատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննության թիվ 357 եզրակացությունների համաձայն՝ Ազատության հրապարակի և դրան հարակից տարածքից հայտնաբերված, առգրավված և իրեղեն ապացույց ճանաչված՝ 6,35 մմ տրամաչափի, չեխական արտադրության «Z» մոդելի «B 274141» համարի ատրճանակը, պահունակում առկա 4 փամփուշտները, 7,62 մմ տրամաչափի «TT» տեսակի ատրճանակը՝ պահունակում առկա 5 փամփուշտները, 9 մմ տրամաչափի «Astra A-75L» մոդելի «23589-95A» համարի ատրճանակը՝ պահունակում առկա 5 փամփուշտները, 2 հատ «Ռ-Գ-5» տեսակի ձեռքի նռնակները, 7 հատ «Ֆ-1» տեսակի ձեռքի նռնակները, 2 հատ ինքնաշեն «ԱՏԵ-92» տեսակի ձեռքի նռնակները, 2 հատ «Ռ-Գ-42» տեսակի ձեռքի նռնակները, 200 գրամանոց տրոտիլային պայթադյուսը, 76 հատ 5,45 մմ տրամաչափի մարտական փամփուշտները, 25 հատ 7,62մմ տրամաչափի հրացանային մարտական փամփուշտները, 31 հատ 5,45մմ տրամաչափի և 27 հատ 7,62մմ տրամաչափի ինքնաձիգների մարտական փամփուշտները պիտանի են կրակոցների և նպատակային օգտագործման համար, հանդիսանում են հրազեններ և ռազմամթերք, գործարանային արտադրության 1 հատ 5,45 մմ տրամաչափի ինքնաձիգի (ԱԿ-74, ԱԿՍ, ԱԿՍՈՒ) և 1 հատ 5,45 մմ տրամաչափի գնդացրի (Ռ-ՊԿ-74) պահունակները, 2 հատ «Заря 2» տեսակի լուսաձայնային նռնակները, 1 հատ «ՍՈՒՎ-2» տեսակի հարվածային մեխանիզմը, 18 հատ հակազազը և մեկ կոնտեյները պիտանի են նպատակային օգտագործման համար և ռազմամթերք չեն հանդիսանում, 5 հատ թեք տաշվածքով փայտյա ձողերը, 2 հատ ռետինե մահակները, 72 հատ տարբեր երկարության և տրամագծի մետաղական ձողերը, ամրանները և խողովակները, պլաստմասսե և փայտե բռնակներով 2 դանակները սառը զենք չեն հանդիսանում, 38 հատ «ոզնի» կոչվող մետաղական կոնստրուկցիաները պատրաստված են ինքնաշեն եղանակով և հանդիսանում են մետաղական սառը զենք, դյուրավառ հեղուկով լցված 3 շշերը հանդիսանում են

ինքնաշեն եղանակով պատրաստված հրկիզման միջոցներ (Մոլոտովի կոկտեյլ), որոնք նախատեսված են օբյեկտների հրկիզման և կենդանի ուժի խոցման համար, 3 պլաստմասե տարաներում առկա հեղուկները դասվում են բաց նավթամթերքների և դյուրավառ հեղուկների շարքին, բաց կանաչ մետաղյա բալոնում առկա նյութը հանդիսանում է քլորդիֆտոմեթան, 48 հատ դեղահաբերը՝ յուրաքանչյուրը 0,131 գրամ քաշով, պարունակում են «տրիֆլուպերազին» տեսակի հոգեներգործուն քաղաղրատարրեր, 10 հատ դեղահաբերը՝ յուրաքանչյուրը 0,099 գրամ քաշով, պարունակում են «տրիհեքսիֆենիդիլ» տեսակի հոգեներգործուն քաղաղրատարրեր:

**Երևանի քաղաքապետարանի շրջակայքում և  
կենտրոնական փողոցներում տեղի ունեցած  
զանգվածային անկարգությունների ընթացքում՝**

- **Մահացել է՝**
  - 8 քաղաքացիական անձ,
  - ոստիկանության 1 աշխատակից և 1 զինծառայող:
  
- **Մարմնական վնասվածք է ստացել՝**
  - 35 քաղաքացիական անձ,
  - ոստիկանության 187 աշխատակից և զինծառայող:
  
- **Այրվել և վնասվել է 92 տրանսպորտային միջոց (նյութական վնաս՝ 70.854.525 ՀՀ դրամ), որից՝**
  - 27-ը՝ հասարակական տրանսպորտային միջոց (նյութական վնաս՝ 5.736.825 ՀՀ դրամ),
  - 46-ը՝ ՀՀ ոստիկանությանը պատկանող (նյութական վնաս՝ 39.362.600 ՀՀ դրամ),

- 19-ր՝ քաղաքացիների, այդ թվում նաև՝ ոստիկանության աշխատակիցների անձնական օգտագործման (նյութական վնաս՝ 25.755.100 ՀՀ դրամ):

Այսպես.

**ՀՀ ոստիկանություն**

**ՀՀ ՈՁ թիվ 1032 գործանաս**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ՈԻԱՁ-31512 փշալարի քարշակով	042 ՈՍ 14	հրկիզված	1.355.000 124.000
2.	ՈԻԱՁ-31512	043 ՈՍ 14	հրկիզված	1.100.000
3.	ՈԻԱՁ-31512	045 ՈՍ 14	վնասված	138.000
4.	ԳԱՁ-33081	058 ՈՍ 14	վնասված	228.350
5.	ԳԱՁ-33081	057 ՈՍ 14	վնասված	120.000
6.	ԳԱՁ-33081	060 ՈՍ 14	վնասված	193.300
7.	ԳԱՁ-32213	061 ՈՍ 14	վնասված	89.700
<b>ընդամենը՝</b>				
<b>7 - միավոր</b>			<b>5 – վնասված 2 – հրկիզված</b>	<b>3.372.750</b>

**ՀՀ ՈՁ թիվ 1033 գործանաս**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ԼԵՆԴ-ՌՈՎԵՐ	092 ՈՍ 14	հրկիզված	2.500.000
2.	ՈԻԱՁ-31512 փշալարի քարշակով	070 ՈՍ 14	հրկիզված	1.355.000 17.550
3.	Հիդրոմիլ A3-5152	105 ՈՍ 14	վնասված	35.100
4.	ԼԱՎԻՆԱ-1	-----	վնասված	-----
5.	ԼԱՎԻՆԱ-2	-----	վնասված	-----
<b>ընդամենը՝</b>				
<b>5 – միավոր</b>			<b>3 – վնասված 2 - հրկիզված</b>	<b>3.907.650</b>

**ՀՀ ՈՁ թիվ 1035 գործանաս**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ԳԱՁ-66	128 ՈՍ 14	վնասված	102.400
2.	ՈԻԱՁ-31514	145 ՈՍ 14	վնասված	1.280.000
<b>ընդամենը՝</b>				
<b>2 – միավոր</b>			<b>2 – վնասված 0 – հրկիզված</b>	<b>1.382.400</b>

**ՀՀ ստիկանության Ներքին գործեր**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ՎԱԶ 21214	015 ՈՍ 14	հրկիզված	1.065.000
<b>ընդամենը՝</b>				
1 – միավոր			0 – վնասված 1 – հրկիզված	1.065.000

**ՀՀ ստիկանության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գունդ**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	SAMAND	303 ՈՍ 02	վնասված	211.700
2.	SAMAND	321 ՈՍ 02	վնասված	231.100
3.	SAMAND	306 ՈՍ 02	վնասված	159.800
4.	SAMAND	304 ՈՍ 02	վնասված	244.400
5.	SAMAND	302 ՈՍ 02	վնասված	-----
6.	ԳԱԶ-32213	061 ՈՍ 02	վնասված	195.900
7.	ԳԱԶ-32213	067 ՈՍ 02	վնասված	180.400
8.	ՈՒԱԶ-31519	088 ՈՍ 02	վնասված	55.700
<b>ընդամենը՝</b>				
8 – միավոր			8 – վնասված 0 – հրկիզված	1.279.000

**ՀՀ ստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ՎԱԶ-21063	203 ՈՍ 01	հրկիզված	715.000
2.	ՎԱԶ-21061	406 ՈՍ 01	հրկիզված	965.000
3.	ՎԱԶ-2121	250 ՈՍ 01	հրկիզված	755.000
4.	ՎԱԶ-21061	147 ՈՍ 01	հրկիզված	1.065.000
5.	ՎԱԶ-21083	125 ՈՍ 01	վնաս. թալ.	-----
6.	ՎԱԶ-21061	122 ՈՍ 01	վնասված	116.500
<b>ընդամենը՝</b>				
6 – միավոր			2 – վնասված 4 – հրկիզված	3.616.500

**ՀՀ ստիկանության տնտեսական վարչություն**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ԿԱՎԶ-3270	135 ՈՍ 01	հրկիզված	880.000
2.	ԿԱՎԶ-685	258 ՈՍ 01	վնաս. թալ.	253.600
3.	ԿԱՎԶ-3270	223 ՈՍ 01	վնաս. թալ.	207.200
<b>ընդամենը՝</b>				
3 – միավոր			2 – վնասված 1 – հրկիզված	1.340.800

**ՀՀ սուտիկանության Կենտրոնի բաժին**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ՎԱԶ-21065	117 ՈՍ 02	վնասված	1.165.000
<b>ընդամենը՝</b>				
1 – միավոր			1 – վնասված 0 – հրկիզված	1.165.000

**ՀՀ սուտիկանության Մայաթիայի բաժին**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	SAMAND	154 ՈՍ 02	հրկիզված	3.365.000
<b>ընդամենը՝</b>				
1 – միավոր			0 – վնասված 1 – հրկիզված	3.365.000

**ՀՀ սուտիկանության Շենգավիթի բաժնի պահպանության բաժանմունք**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ՎԱԶ-2121	043 ՈՍ 02	հրկիզված	600.000
<b>ընդամենը՝</b>				
1 – միավոր			0 – վնասված 1 – հրկիզված	600.000

**ՀՀ սուտիկանության Արարատի մարզային վարչություն**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	SAFE SUV 4x4	010 ՈՍ 04	հրկիզված	4.650.000
<b>ընդամենը՝</b>				
1 – միավոր			0 – վնասված 1 – հրկիզված	4.650.000

**ՀՀ սուտիկանության Լոռու մարզային վարչություն**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ՈՒԱԶ-31519	019 ՈՍ 10	վնասված	1.750.000
2.	ՈՒԱԶ-31514	061 ՈՍ 10	հրկիզված	1.340.000
3.	ՈՒԱԶ-31519	063 ՈՍ 10	վնասված	3.100.000
4.	ՈՒԱԶ-37410	071 ՈՍ 10	վնասված	32.000
5.	ՎԱԶ-2106	060 ՈՍ 10	հրկիզված	750.000
6.	ՈՒԱԶ-37410	018 ՈՍ 10	վնասված	125.000
<b>ընդամենը՝</b>				
6 – միավոր			4 – վնասված 2 – հրկիզված	7.097.000

**ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ՎԱԶ-21061	013 ՈՍ 05	հրկիզված	835.000
<b>ընդամենը՝</b>				
1 – միավոր			0 – վնասված 1 – հրկիզված	835.000

**ՀՀ ոստիկանության Մասիսի բաժին**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ՎԱԶ-2107	056 ՈՍ 04	վնաս. թալ.	786.500
<b>ընդամենը՝</b>				
1 – միավոր			1 – վնասված 0 – հրկիզված	786.500

**ՀՀ ոստիկանության Բաղրամյանի բաժին**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ՈՒԱԶ-31519	031 ՈՍ 05	հրկիզված	2.600.000
<b>ընդամենը՝</b>				
1 – միավոր			0 – վնասված 1 – հրկիզված	2.600.000

**ՀՀ ոստիկանության Մեծամորի բաժին**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	ՈՒԱԶ-31519	042 ՈՍ 05	հրկիզված	2.300.000
<b>ընդամենը՝</b>				
1 – միավոր			0 – վնասված 1 – հրկիզված	2.300.000

**Ընդամենը**

վնասվել է ՀՀ ոստիկանությանը պատկանող		
46 – միավոր	28 – վնասված 18 – հրկիզված	39.362.600 ՀՀ դրամ



## Հասարակական տրանսպորտ

### «ՄԳ-Հաուզինգ» ՍՊ ընկերություն

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	Բոզդան Ա09201	2208 S	մեխանիկական բնույթի	50.500
2.	Բոզդան Ա-092	1655 S	մեխանիկական բնույթի	603.100
3.	Բոզդան Ա-092	1719 S	մեխանիկական բնույթի	367.000
<b>ընդամենը՝</b>				
3 – միավոր			3 – վնասված 0 – հրկիզված	1.020.600

### «Երևանի էլեկտրոտրասպորտ» ՓԲ ընկերություն

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	Շկոդա ՏԲ-14	03	մեխանիկական բնույթի	325.300
2.	Շկոդա ՏԲ-14	39	մեխանիկական բնույթի	195.900
3.	Շկոդա ՏԲ-14	42	մեխանիկական բնույթի	201.000
4.	Շկոդա ՏԲ-14	32	մեխանիկական բնույթի	234.000
5.	Շկոդա ՏԲ-14	74	մեխանիկական բնույթի	318.600
6.	ԼԻԱԶ-5280	012	մեխանիկական բնույթի	376.300
<b>ընդամենը՝</b>				
6 – միավոր			6 – վնասված 0 – հրկիզված	1.651.100

### «Արարատ Նազարեթյան» ՍՊ ընկերություն

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	Բոզդան Ա092	3933 S	մեխանիկական բնույթի	132.000
2.	Բոզդան Ա092	3934 S	մեխանիկական բնույթի	272.200
<b>ընդամենը՝</b>				
2 – միավոր			2 – վնասված 0 – հրկիզված	404.200

**«ԳԱՍՄԵՆ» ՍՊ ընկերություն**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	Բոգրան	4142 S	մեխանիկական բնույթի	273.200
2.	Բոգրան	4116 S	վնասված	10.000
3.	Բոգրան	1943 S	վնասված	319.600
4.	Բոգրան	0378 S	վնասված	67.000
5.	Բոգրան	1714 S	մեխանիկական բնույթի	257.700
6.	Բոգրան	2279 S	վնասված	87.600
7.	Բոգրան	0399 S	վնասված	39.700
8.	ՊԱԶ-32054	2062 S	վնասված	144.300
9.	ՊԱԶ-32054	0519 S	վնասված	154.600
10	Բոգրան	2680 S	մեխանիկական բնույթի	130.900
11	Բոգրան	2160 S	վնասված	201.000
12	Բոգրան	4141 S	վնասված	293.800
13	Բոգրան	2527 S	վնասված	328.400
14	Բոգրան	2159 S	վնասված	167.525
15	Բոգրան	0253 S	վնասված	185.600
<b>ընդամենը՝</b>				
15 – միավոր			15 – վնասված 0 – հրկիզված	2.660.952

**«Արտքրիս» ՍՊ ընկերություն**

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	վնասվածք	վնասի չափը
1.	Գ.Ա.Զ-32219	2166 S	վնասված	-----
<b>ընդամենը՝</b>				
1 – միավոր			1 – վնասված 0 – հրկիզված	-----

**Ընդամենը**

վնասվել է հասարակական տրանսպորտ		
27 – միավոր	27 – վնասված 0 – հրկիզված	5.736.825 ՀՀ դրամ

## Քաղաքացիներին պատկանող

### ՀՀ ոստիկանության աշխատակիցներին պատկանող

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	սեփականատեր	վնասվածք	վնասի չափը
1.	ՎԱԶ-21063	03 ՍՍ 266	Ռուբեն Վարդանյան	վնաս. թալ.	119.800
2.	ՎԱԶ-2106	67 LO 474	Մարտին Երեմյան	վնասված	428.600
3.	ԳԱԶ-3110	03 LS 744	Սամվել Հակոբյան	վնասված	977.800
4.	Մերսեդես-Բենց	63 LO 981	Արսեն Չարխիֆալյան	վնասված	982.500
5.	ՎԱԶ 21213	06 LU 639	Գրիգորի Սահակյան	կրակված	41.000
6.	BMW - 325i	77 OO 222	Էդիկ Գալստյան	հրկիզված	1.980.000
7.	ՎԱԶ-210510	49 SL 186	Արսեն Ապերյան	վնասված	273.200
8.	Ֆորդ-Տրանզիտ	13 OO 156	Ռաֆիկ Անտոնյան	վնասված	85.000
9.	ՎԱԶ-21065	05 SU 490	Սուրեն Ազատյան	վնասված	13.400
10.	ՌԻԱԶ-31512	04 SO 754	Սամվել Կարապետյան	հրկիզված	1.305.000
<b>ընդամենը՝</b>					
<b>10 – միավոր</b>				<b>8 – վնասված</b> <b>2 – հրկիզված</b>	<b>6.206.300</b>

### Քաղաքացիներին պատկանող

N	ավտոմեքենայի մակնիշը	պետ. համարանիշ	սեփականատեր	վնասվածք	վնասի չափը
1.	VOLVO	68 LO 931	Կառլեն Գալստյան	հրկիզված	770.000
2.	ՎԱԶ-21099	08 LU 204	Գուրգեն Գարբինյան	հրկիզված	1.230.000
3.	ՎԱԶ-2121	040 UL 62	Սևան Ամիրյան	հրկիզված	575.000
4.	TOYOTA LAND CRUISER PRADO	70 OL 717 (100 ՈՍ 14)	Արթուր Մարտիրոսյան	հրկիզված	10.750.000
5.	ՎԱԶ-21214	08 ՍՍ 405	Արմենակ Թամրազյան	հրկիզված	2.810.000
6.	ԳԱԶ-3110	64 SU 933	Կարեն Մարության	կրակված	541.200
7.	Իկարոս 255	65 SS 261	Վլադիսլավ Բարսեղյան	վնասված	683.500
8.	Իկարոս 260-51	1308 L	Պետրոս Գասպարյան	վնասված	744.300
9.	Իկարոս 256	05 LO 570	Մարատ Մովսիսյան	վնասված	1.444.800
<b>ընդամենը՝</b>					
<b>9 – միավոր</b>				<b>4 – վնասված</b> <b>5 – հրկիզված</b>	<b>19.548.800</b>

### Ընդամենը

վնասվել է քաղաքացիներին պատկանող		
19 – միավոր	12 – վնասված	25.755.100 ՀՀ դրամ
	7 – հրկիզված	

## Ընդհանուր առմամբ

Վնասվել է/ ոչնչացվել է 92 միավոր (70.854.525 դր.)					
ՀՀ ոստիկանությանը պատկանող 46 միավոր (39.362.600 դր.)		հասարակական տրանսպորտ 27 միավոր (5.736.825 դր.)		քաղաքացիներին պատկանող 19 միավոր (25.755.100 դր.)	
վնասված	հրկիզված	վնասված	հրկիզված	վնասված	հրկիզված
28	18	27	0	12	7

- Երևան քաղաքին և Երևանի «Կենտրոն» թաղային համայնքին պատճառվել է ընդհանուր առմամբ 69.288.760 ՀՀ դրամի նյութական վնաս:
- Չանգվածային անկարգությունների մասնակիցների կողմից վնասվել և թալանվել են տնտեսվարող սուբյեկտներին պատկանող 12 օբյեկտներ (խանութներ, սուպերմարքեթներ, ատամնաբուժարան, բենզալցակայան և այլն), որի հետևանքով քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառվել է ընդհանուր առմամբ 339.954.866 ՀՀ դրամի նյութական վնաս:

## Այսպես.

	օբյեկտի անվանումը	հասցեն	վնասված	հափշտակված	ընդամենը
1.	Երևանի քաղաքապետարանի վարչական շենք, շրջակա տարածք	Արգիշտի 1	47.234.460	-	47.234.460
2.	Կենտրոն թաղային համայնք	Ազատության հրապարակ, շրջակա տարածք	22.054.300	-	22.054.300
ընդամենը՝			69.288.760	-	69.288.760
1.	Մոսկվայի տուն	Արգիշտի 7	990.000	-	990.000
2.	«Միկա-Կորպորեյշն» ՍՊԸ թիվ 9 բենգալցակայան	Արգիշտի 1	473.500	11.663.480	12.136.980
3.	«Ռոբերտո» («Փիրալյան» ՍՊԸ)	Մաշտոցի 5	6.762.960	145.122.000	151.884.960
4.	«Երևան-Միթի» («Սալեքս-գրուպ» ՍՊԸ)	Մաշտոցի 5	21.412.186	136.744.505	158.156.691
5.	«Էչ-Գի-Մի» գովազդային գործակալության վարձակալած տարածք	Մաշտոցի 5	-	3.480.012	3.480.012
6.	«Գրանդ-Քենդի» («Գրանդ-Քենդի հ/ձ» ՍՊԸ)	Մաշտոցի 5	264.000	3.029.811	3.293.811
7.	դեղատուն («Թագաք-ֆարմ» ՍՊԸ)	Պարոնյան 8	536.200	-	536.200
8.	«8» սուպերմարքեթը («Այգեձոր» ՍՊԸ)	Պարոնյան 8	3.586.726	5.702.836	9.289.562
9.	թելերի խանութի («Հորաքույր Սուսաննա» ՍՊԸ)	Մաշտոցի 8	55.350	-	55.350
10.	«Պումա» սպորտային խանութի,	Մաշտոցի 8	11.700	-	11.700
11.	ատամնաբուժական նյութերի վաճառքի սրահի («Մարգգան-Գենտ» ՍՊԸ)	Գ. Լուսավորիչ 12	10.600	-	10.600
12.	գրավատան («Սեբլե» ՍՊԸ)	Գ. Լուսավորիչ 12	109.000	-	109.000
ընդամենը՝			34.212.222	305.742.644	339.954.866

**Ամբողջը միասին՝ 409.243.626 ՀՀ դրամի վնաս**

- **Դեպքի վայրի զննությանը Երևանի քաղաքապետարանին հարակից տարածքում և կենտրոնական փողոցներում հայտնաբերվել է՝**
  - շուրջ 1600 հատ տարբեր տրամաչափի փամփուշտի պարկուճ,
  - 50-ից ավել տարբեր տրամաչափի փամփուշտ,
  - 1000-ից ավել մետաղական ձող և մահակ,
  - 61 շիշ դյուրավառ հեղուկ (Մոլոտովի կոկտեյլ),
  - 2 հատ 20 լիտրանոց տարա՝ դյուրավառ հեղուկով:

Սառը զենքի փորձաքննությունների թիվ 633 և 492 եզրակացություններով, դատապաշտության տեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննության թիվ 07050803 եզրակացությունների համաձայն՝ Երևանի քաղաքապետարանին հարակից տարածքների և կենտրոնական փողոցների 2008թ. մարտի 2-ի զննմամբ հայտնաբերվել ու առգրավվել են փայտյա մահակներ, երկաթյա ձողեր, անկյունակներ, ամրաններ, օբյեկտների հրկիզման և կենդանի ուժի խոցման համար նախատեսված, ինքնաշեն եղանակով պատրաստված հրկիզման միջոցներ՝ դյուրավառ հեղուկով լցված շշեր (Մոլոտովի կոկտեյլ), բաց նավթամթերքների և դյուրավառ հեղուկների շարքին դասվող վառելիքաքսուքային նյութերով լցված պոլիմերային տարաներ, տարբեր տրամաչափերի հրազենների պարկուճներ, փամփուշտներ:

2008թ. մարտի 1-ին իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու, 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում զանգվածային անկարգություններ կազմակերպելու ու դրանց մասնակիցների կողմից բռնություն գործադրելու, ջարդ և հրկիզում իրականացնելու, գույք ոչնչացնելու և վնասելու, հրազեն, պայթուցիկ նյութեր և պայթուցիկ սարքեր գործադրելու և իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրելու փաստերի առթիվ հարուցված քրեական գործով.

- **Հարցաքննվել է՝**
  - շուրջ 4000 վկա,
  - ոստիկանության 1000-ից ավել աշխատակից (այդ թվում՝ բարձրաստիճան սպաներ):
  
- **Տուժող են ճանաչվել՝**
  - ոստիկանության 220 աշխատակից և զինժառանգող,
  - 58 քաղաքացիական անձ, որոնցից՝
    - . 20-ին պատճառվել է մարմնական վնասվածք,

. 38-ին՝ գույքային վնաս:

• **Կատարվել են հազարավոր՝**

- զննումներ,
- առգրավումներ,
- խուզարկություններ,
- քննչական փորձարարություններ,
- առերեսումներ:

• **Նշանակվել են 800-ից ավել փորձաքննություններ, այդ թվում՝**

- դիակի դատաբժշկական,
- կենդանի անձանց դատաբժշկական,
- դատակենսաբանական,
- դատատոքսիկոլոգիական,
- դատահոգեբուժական,
- դատաձգաբանական,
- սառը զենքի,
- դատաքիմիական,
- դատաապրանքագիտական,
- դատամատնադրոշմային,
- դատահետքաբանական,
- համակարգչատեխնիկական,
- տեսաձայնագրային,
- դատաձեռագրաբանական,
- դատաբժշկական և դատահետքաբանական համալիր,
- դատաձգաբանական և դատաքիմիական համալիր,
- դատաձգաբանական և դատապայթյունատեխնիկական համալիր,
- դատապայթյունատեխնիկական և դատաքիմիական համալիր,

- դատաձգաբանական, դատաքիմիական և սայրանքագիտական համալիր,
  - դատաձգաբանական և սառը զենքի համալիր,
  - համակարգչատեխնիկական և ձգաբանական համալիր,
  - համակարգչատեխնիկական և դիմանկարային համալիր,
  - դատահետքաբանական, քիմիական և շինարարատեխնիկական համալիր,
  - դատալինգվիստիկական:
- **Մեղադրանք է առաջադրվել 152 անձի, նրանցից`**
    - 122-ի նկատմամբ սկզբնական փուլում խափանման միջոց է կիրառվել կալանավորում,
    - 30-ի նկատմամբ չհեռանալու մասին ստորագրություն:
- **33-ի նկատմամբ կիրառված կալանավորումը փոփոխվել է, որից`**
    - 8-ը` դատարանների կողմից,
    - 25-ը` նախաքննության մարմնի:
- **31-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել և քրեական գործի մասը կարճվել է, որից`**
    - 8-ը` հսկող դատախազների կողմից,
    - 23-ը` նախաքննության մարմնի կողմից :
- **Դատարան է ուղարկվել 94 գործ 117 անձի վերաբերյալ, որից`**
    - 88-ը կալանքով,
    - 29-ը այլ (*ստորագրություն չհեռանալու մասին, գրավ*):
- **Դատարանում քննվող գործերով 117 անձի վերաբերյալ կայացվել են դատավճիռներ, որոնցից`**



- 38-ի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քր. օր-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան,
- 5-ի նկատմամբ որպես պատիժ նշանակվել է տուգանք,
- 66 անձ դատապարտվել է ազատազրկման,
- 5 անձ արդարացվել է,
- 1 ազատազրկման դատապարտված անձ արդարացվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ,
- 1 անձի վերաբերյալ քրեական գործը ՀՀ քր. դատ. օր-ի 183-րդ հոդվածի կարգով կարճվել է՝ ամբաստանյալի հետ հաշտվելու պատճառով,
- 1 անձի վերաբերյալ քրեական գործը կարճվել է՝ ամբաստանյալի կողմից հանրության համար վտանգավոր արարք կատարելու պահին անմեղսունակության վիճակում գտնվելու պատճառով:

• **Դատապարտված անձանցից՝**

- 11-ը արդարացվել են առաջադրված մեղադրանքների առանձին մասերով,
- 1-ի նկատմամբ՝ ՀՀ քր. օր-ի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակվել է օրենքով նախատեսված պատժից ավելի մեղմ պատիժ,
- ազատազրկման ձևով պատիժ կրող 28 անձի՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով շնորհվել է ներում,
- ազատազրկման ձևով պատիժ կրող 26 անձ՝ համաներում հայտարարելու մասին ՀՀ ԱԺ որոշման հիման վրա ազատվել է պատիժը կրելուց:

• **Քրեական գործով՝**

- 1 մեղադրյալ գտնվում է հետախուզման մեջ,
- 4-ի նկատմամբ կիրառված է չհեռանալու մասին ստորագրություն,

- կալանքի տակ գտնվող անձինք չկան:

**Դեպքի վայրի՝ Երևանի Ազատության հրապարակի և հարակից տարածքների զննման արձանագրությանը կից ֆոտոհավելվածը**

**Աշխատանքները լրատվամիջոցների, միջազգային կառույցների ներկայացուցիչների, ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի և փորձագետների փաստահավաք խմբի անդամների հետ**

Թեև ՀՀ ներպետական օրենսդրությամբ որոշակի սահմանափակումներ են նախատեսված նախաքննության փուլում գտնվող քրեական գործերով նախաքննական տվյալների բացահայտման և հրապարակման հետ կապված, սակայն հաշվի առնելով 2008թ. մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների փաստի առթիվ հարուցված քրեական գործով իրականացվող նախաքննության և հատկապես տասն անձանց մահվան հանգամանքների բացահայտման հետ կապված ՀՀ և միջազգային հանրության հետաքրքրությունը և կարևորելով նախաքննության թափանցիկությունն ու հասարակության՝ ստուգված, անաչառ և օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ նախաքննության առաջին իսկ օրվանից՝ 2008թ. մարտի 2-ից, կատարված քննության արդյունքները մշտապես իրազեկվել են հանրությանը զանգվածային լրատվամիջոցների միջոցով: Միաժամանակ, պարբերաբար տեղեկատվություն է տրամադրվել Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակար Թոմաս Համմարբերգին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, հասարակական և միջազգային կազմակերպություններին: Մշտապես նորացվող տեղեկատվությունը գետեղվել է ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ հատուկ քննչական ծառայության ինտերնետային կայքէջերում՝ ապահովելով դրա հասանելիությունը շահագրգիռ բոլոր անձանց:

Հիշատակված դեպքերի հետ կապված բոլոր դատաքննություններն անցկացվել են դռնբաց, հրապարակային՝ լրատվամիջոցների, միջազգային տարբեր կառույցների ներկայացուցիչների և դիտորդական առաքելություն

իրականացնող անձանց մասնակցությամբ: Ընդ որում, գրեթե բոլոր դատաքննություններին ներկա են գտնվել ԵԱՀԿ-ի ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի ներկայացուցիչները՝ իրականացնելով մշտադիտարկում:

ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի մարտի 14-ի թիվ 24/1 հրամանով ստեղծվել է հանրային իրազեկման խումբ՝ հանձնարարելով ապահովել նշված քրեական գործով նախաքննության ընթացքի եւ արդյունքների մասին հանրությանը պարբերաբար տեղեկատվության տրամադրումը՝ այնքանով, որքանով դա չի խոչընդոտի նախաքննության իրականացմանը: Միաժամանակ հանձնարարվել է խստագույնս պահպանել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2003 թվականի թիվ 13 հանձնարարականի պահանջները, այն է՝ առանց խտրականության տեղեկատվությունը տրամադրել զանգվածային լրատվության միջոցներին՝ հարգելով անմեղության կանխավարկածը, իսկ մամուլի հաղորդագրություններն ու հայտարարությունները անմիջապես տեղադրել ինտերնետային էջում՝ ապահովելով դրա հասանելիությունը բոլոր քաղաքացիների համար: Լրագրողական կամ հասարակական կազմակերպություններից ստացված այլ բնույթի ոչ մի հարցում անպատասխան չի մնացել: Ավելին՝ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ՝ տրամադրելով տեղեկատվություն նախաքննության ընթացքի եւ ձեռք բերված ապացույցների վերաբերյալ: Բացի այդ, քննության բոլոր նյութերը՝ ստեղծման առաջին իսկ օրվանից անարգել և ամբողջությամբ տրամադրվել են 2008թ. մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովին և ՀՀ Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ի կարգադրությամբ ստեղծված Փորձագետների փաստահավաք խմբին:

ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովը ստեղծվեց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 16.06.2008թ. թիվ Ն-086-4 որոշմամբ:

Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար 16.06.2008թ. Ազգային ժողովի 5 խմբակցություններից առաջարկություններ են ներկայացրել 4-ը, այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցությունը (Սամվել Նիկոյան, Հերմինե Նաղդալյան), «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը (Նաիրա Զոհրաբյան, Արամ Սաֆարյան), «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցությունը (Արծվիկ Մինասյան, Արտյուշ Շահբազյան), «Օրինաց երկիր» խմբակցությունը (Հովհաննես Մարգարյան, Արտաշես Ավոյան, ում փոխարինել է Իշխան Խաչատրյանը՝ 21.08.2008 թվականից, իսկ վերջինիս՝ Արծրունի Աղաջանյանը՝ 02.02.2009 թվականից): Խմբակցություններում չընդգրկված պատգամավորներից Հանձնաժողովի կազմում Ազգային ժողովի 16.06.2008թ. որոշմամբ ընդգրկվել է Լևոն Խաչատրյանը, ով 24.06.2008թ. ներկայացրել է հրաժարականի դիմում, իսկ Ազգային ժողովի 08.09.2008թ. որոշմամբ որպես անկախ պատգամավոր, Հանձնաժողովի կազմում ընդգրկվել է Սամվել Բալասանյանը:

Ձևավորվելուց հետո Հանձնաժողովի որոշմամբ նրա կազմում ընդգրկվելու համար հրավեր են ուղարկվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, 2007թ. Ազգային ժողովի ընտրություններում 3 %-ի շեմը հաղթահարած, սակայն Ազգային ժողովում խմբակցություն չունեցող, ինչպես նաև 2008թ. նախագահական ընտրություններում թեկնածուներ առաջադրած կուսակցություններին՝ յուրաքանչյուրից մեկ ներկայացուցիչ ներկայացնելու առաջարկով:

Հրավերն ընդունել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը, ինչպես նաև՝ 5 կուսակցություններ, այդ թվում՝ «Ազգային ժողովրդավարական միություն» կուսակցությունը (Արտավազդ Վարդանյան), «Ազգային միաբանություն» կուսակցությունը (Սարգիս Մուրադխանյան), «Ազգային համաձայնություն» կուսակցությունը (Արամ Հարությունյան), «Միավորված աշխատանքային կուսակցությունը» (Գուրգեն Արսենյան), 04.12.2008 թվականից «Նոր ժամանակներ» կուսակցությունը (Արամ Կարապետյան):

Որոշման համաձայն՝ Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու իրավունք ունեին ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության ներկայացուցիչներն ու Լևոն Տեր-Պետրոսյանը (անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով), ովքեր սակայն չեն իրացրել իրենց այդ իրավունքը: Չնայած դրան, Հանձնաժողովն իր աշխատանքներին մասնակցելու առաջարկով 19.06.2008թ. գրավոր դիմել է ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, ինչպես նաև «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Բաֆֆի Հովհաննիսյանին, «Ժողովրդական» կուսակցության նախագահ Տիգրան Կարապետյանին, սակայն նրանց կողմից առաջարկը չի ընդունվել:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 73-րդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածների, ինչպես նաև Որոշման համաձայն՝ Հանձնաժողովի խնդիրն էր՝ ուսումնասիրել 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձություններն ու դրանց պատճառները և Ազգային ժողովին եզրակացություն ներկայացնել հետևյալ հարցերի վերաբերյալ՝

ա) տեղի ունեցած բռնությունների, ինչպես նաև ոստիկանության գործողությունների իրավաչափությունն ու համաչափությունը.

բ) զոհվածների մահվան հանգամանքների ճշտումը.

գ) նման իրադարձությունների կրկնությունը բացառող քաղաքական, իրավական և այլ լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

Հանձնաժողովի գործունեության ժամկետ էր սահմանվել 2008 թվականի հոկտեմբերի 25-ը, որը հետագայում՝ ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ, երկարացվեց 2 անգամ. նախ՝ 22.10.2008 թվականի որոշմամբ գործունեության ժամկետ սահմանվեց 2009 թվականի փետրվարի 25-ը, իսկ 24.02.2009 թվականի որոշմամբ՝ 2009 թվականի սեպտեմբերի 15-ը:

Հանձնաժողովն իր աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար ներգրավել է փորձագետներ, ընդունել իր գործունեության կանոնակարգը,

աշխատակարգը և համագործակցության առաջարկ է ներկայացրել այլ մարմինների, անձանց, ինչպես նաև հասարակության լայն շերտերին:

Հանձնաժողովն այս նպատակով դիմել է «Օրենքի միջոցով ժողովրդավարության հաստատման Վենետիկի հանձնաժողովի» քարտուղար Ջանի Բուրիքիոյին, ԵԱՀԿ-ին և Լևոն Տեր-Պետրոսյանին՝ առաջարկելով գործուղել նաև իրենց փորձագետներին՝ նպատակ ունենալով ձևավորել հավասարակշռված փորձագիտական խումբ նաև միջազգային փորձագետների մասնակցությամբ: Սակայն նրանք կողմից փորձագետներ չեն տրամադրել:

Հանձնաժողովը համապատասխան հարցադրումներով դիմել է ՀՀ ոստիկանապետ Ա. Սարգսյանին և ստացել պատասխաններ՝ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում ոստիկանության իրականացրած գործողությունների նկարագրի, դրանց իրավական հիմքերի, ներգրավված ոստիկանական ուժերի թվաքանակի և տեղաբաշխման, ամրակցված զենքի, հատուկ միջոցների տեսակների և քանակի, դրանց օգտագործման անհրաժեշտության և այլ հանգամանքների վերաբերյալ:

Հանձնաժողովը դիմել է ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին, Հատուկ քննչական ծառայությանը և ստացել պատասխաններ՝ նշված իրադարձությունների հետևանքով զոհվածների մահվան հանգամանքների, այդ առնչությամբ կատարված քննչական գործողությունների, տեղազնությունների արդյունքում հայտնաբերված և առգրավված զենք-զինամթերքի և այլ իրեղեն ապացույցների, դեպքերի կապակցությամբ հարուցված քրեական գործի ընթացքի, կալանավորված անձանց քանակի և ձեռք բերված մյուս ապացույցների գնահատման արդյունքների վերաբերյալ:

Հանձնաժողովը պահանջել և ՀՀ առողջապահության նախարարությունից ստացել է ամփոփ տվյալներ իրադարձությունների հետևանքով զոհված և մարմնական վնասվածքներ ստացած անձանց վերաբերյալ, այդ թվում՝ դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները:

Հանձնաժողովը ՀՀ ԱՆ փորձագիտական կենտրոնից պահանջել և ստացել է դատաձգաբանական, պայթյունատեխնիկական, հետքաբանական փորձաքննության ենթարկված զենքերի, զինամթերքի, հագուստների վերաբերյալ

եզրակացությունները, իսկ ՌԳ ՆԳ նախարարության փորձաքրեագիտական կենտրոնից՝ նաև «Չերյոմուխա-7» հատուկ միջոցների վերաբերյալ կատարված փորձաքննությունների եզրակացությունները:

Նշված իրադարձությունների վերաբերյալ ամբողջական և բազմակողմանի պատկերացում կազմելու համար Հանձնաժողովը դիմել է նաև Լևոն Տեր-Պետրոսյանին, ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության, Իտալիայի Հանրապետության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպաններին՝ խնդրելով տրամադրել տեսագրություններ, ձայնագրություններ և այդ իրադարձություններին առնչվող ցանկացած այլ փաստեր կամ նյութեր: Սակայն նրանք Հանձնաժողովի գրություններին կամ չեն պատասխանել, կամ էլ պատասխանել են, որ օգտակար որևէ նյութ չունեն իրենց տրամադրության տակ:

Հանձնաժողով են հրավիրվել նաև նախաքննական մարմնի ներկայացուցիչները, ովքեր տվել են առաջադրված հարցերի պատասխանները: Այդ կերպ Հանձնաժողովը փորձել է հրապարակային դարձնել նախաքննական գործընթացները և կալանքի տակ գտնվող անձանց իրավիճակին առնչվող բոլոր հանգամանքները:

Հանձնաժողովի անդամները ծանոթացել են ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վարույթում գտնվող մի շարք քրեական գործերի նյութերին (օրինակ՝ Ա. Նազանյանի քրեական գործի նյութերին (ՀՀ քրեական օրենսգրքի 225 հոդվածի 2-րդ մաս), մասնակցել մի շարք դատական նիստերի (օրինակ՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում ամբաստանյալ Ա. Շահինյանի, Ս. Այվազյանի, Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանում՝ «7»-ի գործով դատավարություններին և այլն):

2008թ նոյեբերի 3-ին Հանձնաժողովի անդամներն այցելել են ՀՀ ՌԶ թիվ 10/33 գործնաս և հանդիպել գոհված զինծառայող Տիգրան Աբգարյանի հետ դեպքի վայրում ծառայություն կատարած զինծառայողներին՝ պարզելու համար նրա մահվան հանգամանքները, ինչպես նաև իրադարձությունների օրը նրանց և ցուցարարների գործողությունների մանրամասները:

Հանձնաժողովի նիստերին հրավիրվել են ՀՀ նախկին ոստիկանապետ, գեներալ-գնդապետ Հայկ Հարությունյանը, ՀՀ ոստիկանապետի տեղակալներ՝ գեներալ-լեյտենանտ Հովհաննես Հունանյանը, գեներալ-մայոր Արմեն Երիցյանը, գեներալ-մայոր Սաշիկ Աֆյանը, ոստիկանության գործերի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Գրիգոր Գրիգորյանը, քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ գնդապետ Հովհաննես Թամամյանը, ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի տնօրեն Շոթա Վարդանյանը, նույն կենտրոնի բժշկաքրեագիտական բաժանմունքի վարիչ Վիգեն Ադամյանը, ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության պետ Ստեփան Մանուկյանը, այդ վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ Արթուր Հովհաննիսյանը, փորձագետ Գագիկ Հարությունյանը, «Ա1+» հեռուստաընկերության տնօրեն Մեսրոպ Մովսիսյանը և օպերատոր Հովսեփ Հովսեփյանը, լրագրողներ Գագիկ Շամշյանը և Գոհար Վեգիրյանը, ականատեսներ՝ Ռոման Գրիգորյանը, Տիգրան Կարախանյանը, Հայկ Հովակիմյանը: Նրանք ներկայացրել են 2008 թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձություններին և դրանց առանձին հանգամանքներին վերաբերող մանրամասներ և պատասխանել Հանձնաժողովի անդամներին հետաքրքրող հարցերին:

Հանձնաժողովի չորս նիստերին հրավիրվել է Հատուկ քննչական ծառայության խնդրո առարկա գործով քննչական խմբի ղեկավար Վահագն Հարությունյանը, ով Հանձնաժողովին տվել է պարզաբանումներ իրենց վարույթում գտնվող քրեական գործով կատարվող նախաքննության ընթացքի, կալանավորված անձանց նկատմամբ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու անհրաժեշտության և հիմնավորվածության, բավարար ապացույցների առկայության և հետաքրքրող այլ հարցերի վերաբերյալ:

Հանձնաժողովը հրավիրել և լսել է գոհված Տիգրան Աբգարյանի, Գոռ Քլոյանի, Դավիթ Պետրոսյանի, Տիգրան Խաչատրյանի ծնողներին, հարազատներին և ընկերներին, ովքեր ներկայացրել են նրանց գոհվելու



հանգամանքների մասին իրենց հայտնի մանրամասները, ինչպես նաև՝ իրադարձությունների ընթացքում մարմնական վնասվածքներ ստացած Վազգեն Հարությունյանին, Խաչիկ Դավթյանին, Սուրեն Հովհաննիսյանին, ովքեր տվել են պարզաբանումներ իրենց վիրավորվելու հանգամանքների վերաբերյալ և պատասխանել Հանձնաժողովի անդամների հարցերին:

Հանձնաժողովը ՀՀ Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ին ստեղծած փորձագետների փաստահավաք խմբից (այսուհետ՝ նաև Խումբ) և դրա լուծարումից հետո Խմբի նախկին անդամներից ստացել է մարտի 1-2-ի իրադարձությունների կապակցությամբ նրանց կատարած ուսումնասիրությունների վերաբերյալ 2266 թերթից բաղկացած փաթեթը և այլ նյութեր ու ենթարկել մանրակրկիտ վերլուծության:

Արձագանքելով ՀՀ Նախագահի 2008թ. մայիսի 28-ի հայտարարությանը՝ Հանձնաժողովը դիմել է ՀՀ Նախագահին՝ համաներում կիրառելու անհրաժեշտության և նպատակահարմարության խնդրանքով, նկատի ունենալով, որ համաներման կիրառումը համահունչ է նաև ԵԽԽՎ բանաձևերով ներկայացված առաջարկություններին: ՀՀ Նախագահը, օգտվելով Սահմանադրությամբ ընձեռված իր լիազորություններից, համաներում հայտարարելու առաջարկությամբ դիմեց ՀՀ Ազգային ժողովին: Ազգային ժողովը 2009թ. հունիսի 19-ի որոշմամբ հայտարարեց համաներում, որը, ըստ ներկայացված հիմնավորման, պետք է տարածվեր շուրջ 2000՝ այդ թվում՝ 2008թ. մարտի 1-2-ի դեպքերով դատապարտված անձանց վրա:

Հանձնաժողովն իր վերջնական գեկույցը հրապարակել է 2009թ. սեպտեմբերի 15-ին:

**«Փորձագետների փաստահավաք խումբ ստեղծելու մասին» ՀՀ Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ի կարգադրության 2-րդ գլխում սահմանված է Փաստահավաք խմբի գործունեության նպատակը.**

«Բացահայտել և հանձնաժողովին փոխանցել փաստեր, փաստաթղթեր և տեղեկատվություն վերջինիս ապահովելու համար՝

1. 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձություններն առաջացնող պատճառների ուսումնասիրությունը,

2. իրադարձությունների ընթացքում ոստիկանության աշխատակիցների որոշումների և գործողությունների իրավաչափության ու համաչափության գնահատումը,

3. այդ իրադարձությունների ընթացքում անձանց մահվան հանգամանքների բացահայտումը»:

Նախաքննական մարմինը Փաստահավաք խմբից ակնկալում էր օժանդակություն՝ 2008թ. մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների, դրանց ընթացքում մարդկանց մահվան դեպքերի կապակցությամբ նոր փաստեր ձեռք բերելու հարցում: Մինչդեռ Փաստահավաք խումբն ամիսներ տևած ուսումնասիրությունների ընթացքում փաստեր է հավաքել միմիայն Համլետ Թադևոսյանի և Տիգրան Աբգարյանի մահվան կապակցությամբ կատարված քննության օրինականության վերաբերյալ՝ փորձելով հաստատել որոշ շահագրգիռ անձանց հնչեցրած այն պնդումը, թե իբր Համլետ Թադևոսյանի մահը վրա է հասել ոչ թե զանգվածային անկարգությունների մասնակիցների կողմից նետած նռնակի կամ պայթուցիկ սարքի, այլ իր իսկ մոտ գտնվող նռնակի պայթյունից, իսկ Տիգրան Աբգարյանն էլ դաժան ծեծի է ենթարկվել, այնուհետև գնդակահարվել ընդհուպ կատարված կրակահերթով:

Հրապարակված փաստաթղթերում ակնհայտորեն խեղաթյուրվել են ինչպես քննության նյութերը, փորձաքննությունների եզրակացությունները, այնպես էլ պաշտոնատար անձանց կողմից փաստահավաք խմբին տված բացատրությունները: Ընդ որում, բացատրություններ ստանալու ընթացքում Փաստահավաք խմբի որոշ անդամներ, ակնհայտորեն դուրս գալով իրենց լիազորությունների սահմաններից, իրենց կանխակալ տեսակետը հիմնավորող պատասխաններ ստանալու ակնկալիքով, ճնշումներ են գործադրել հրավիրված պաշտոնատար անձանց նկատմամբ, սպառնացել են ենթարկել քրեական պատասխանատվության: Իսկ որոշ դեպքերում, այդ թվում փաստերի աղավաղմամբ կազմված փաստաթղթերն ամբողջությամբ հրապարակվել են

մամուլում: Արձանագրվել են նաեւ դեպքեր, երբ Փորձագետների փաստահավաք խմբին տրամադրված՝ նախկինում որևէ տեղ չհրապարակված և որևէ անձի չտրամադրված տեղեկությունները, փաստաթղթերը հրապարակվել և տպագրվել են մամուլում, ինչի կապակցությամբ նախաքննական մարմինը գրավոր առաջարկել է Փաստահավաք խմբին՝ ձեռնարկել միջոցներ՝ «Փորձագետների փաստահավաք խումբ ստեղծելու մասին» ՀՀ Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ի կարգադրության պահանջների ճիշտ ու անշեղ կատարման, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության գաղտնիության երաշխավորման և այն չհրապարակման ուղղությամբ, որի կապակցությամբ փաստահավաք խմբի բոլոր անդամներն ընդգծել են Խմբի գործունեության վերաբերյալ լրատվության արտահոսքի անթույլատրելիությունը: Միևնույն ժամանակ, փաստահավաք խմբի յուրաքանչյուր անդամ բացառել է իր առնչությունը մամուլում տեղ գտած հրապարակումներին:

Նկատենք, որ Փաստահավաք խմբին տրամադրված նյութերը հրապարակվել են միևնույն օրաթերթում:

Ստորև ներկայացվում են փաստահավաք խմբի հիշատակված զեկույցների վերաբերյալ նախաքննական մարմնի ուսումնասիրության արդյունքները՝ հիմնված գործով ձեռք բերված ապացույցների վրա: Չեկույցներին նախաքննական մարմնի արձագանքը ներկայացվում է հնարավորինս մանրամասն՝ նկատի ունենալով, որ դրանք վերաբերում են անձանց՝ ոստիկանության գործերի սպա Հ.Թադևոսյանի եւ զինժառայող Տ.Աբգարյանի մահվան հանգամանքներին, ինչպես նաև ոստիկանության կողմից 2008թ. մարտի 1-ին հատուկ միջոցների կիրառմանն ու իրավաչափությանը:

### **Առարկություն 1-ին**

*Փորձագետների փաստահավաք խմբի կազմած, «ոստիկանության գործերի թիվ 1032 գորամասի սպա Համլետ Թադևոսյանի մահվան հանգամանքների հետ*

կապված փաստերի ուսումնասիրության արդյունքները» վերնագրված

փաստաթղթի վերաբերյալ

Փաստաթղթի նախաբանն ինքնին վկայում է, որ ուսումնասիրություններն ուղղված են եղել ոչ թե 2008թ. մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած իրադարձությունները ծնող պատճառները բացահայտելուն, այլ դրանից հետո հարուցված քրեական գործերի նախաքննության և դատաքննությունների վրա ազդեցություն գործելուն:

Նախ՝ փաստաթղթում Փաստահավաք խումբն անհիմն մտահոգություն է հայտնել, թե իբր 10 անձի մահվան փաստերի կապակցությամբ հարուցված քրեական գործի նախաքննությունն ավարտվել է, ուղարկվել դատարան և կրկին նախաքննություն է իրականացվում ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչ օրս չի ավարտվել և շարունակվում է 10 անձանց, այդ թվում նաև՝ Համլետ Թադևոսյանի մահվան փաստերի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը, ինչի մասին բազմիցս հայտարարվել է հրապարակավ, իսկ Փաստահավաք խմբին տրամադրվել նաև դրա վերաբերյալ համապատասխան որոշումների պատճենները: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունում կրկնակի կամ լրացուցիչ նախաքննության ինստիտուտ գոյություն չունի, և դատարան ուղարկված քրեական գործով «կրկին» նախաքննություն իրականացվել չի կարող:

Համլետ Թադևոսյանի և մյուսների դիակների զննումներն ու փորձաքննությունները կատարվել են քրեական դատավարության օրենսդրության պահանջների պահպանմամբ, և որևէ ապացույց ձեռք չի բերվել օրենքի պահանջի խախտմամբ:

- Փաստաթղթում արձանագրվել է, թե քննչական խմբի ղեկավարի կողմից խախտվել է քննչական հանձնարարությունը գրավոր տալու կարգը, ինչպես նաև խախտվել են ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ և 193-րդ հոդվածների պահանջները:

Նախ՝ նկատենք, որ տվյալ պարագայում փաստահավաք խումբը թերևս շփոթել է քննչական խմբի ղեկավարի եւ քննչական բաժնի պետի կարգավիճակներն ու լիազորությունները, քանզի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածը սահմանում է քննչական բաժնի պետի լիազորությունները, իսկ քննչական խմբի ղեկավարը և քննչական բաժնի պետը տարբեր պաշտոնատար անձինք են և ունեն տարբեր լիազորություններ: Հետևաբար, քննչական խմբի ղեկավարը չի կարող առաջնորդվել քննչական բաժնի պետի լիազորությունները սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածով:

Երկրորդ՝ դիակների զննումներ կատարած ՀՀ ոստիկանության քննիչներ Հ.Շահումյանը, Վ.Խանգաղյանը և Հ.Խեղոյանը ընդգրկված չեն եղել թիվ 62202608 քրեական գործով կազմված քննչական խմբի կազմում: Նկատի ունենալով քրեական գործով կազմված քննչական խմբի անդամների ծանրաբեռնվածությունը և այն, որ տարբեր անձանց մահվան վերաբերյալ հիվանդանոցներից և ՀՀ ԱՆ ԴԲԳԳ կենտրոնից ստացվել են հաղորդումներ, ուստի դիակների արտաքին զննում, հագուստների առգրավում, ինչպես նաև դրանցից բխող անհրաժեշտ այլ քննչական գործողություններ կատարելու նպատակով 2008թ. մարտի 2-ին ՀՀ քր. դատ. օր-ի 191-րդ հոդվածի կարգով գրավոր քննչական հանձնարարություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչություն: Այսինքն՝ քննչական հանձնարարություն տալու դատավարական կարգը չի խախտվել:

Քննչական հանձնարարության պահանջները կատարելու նպատակով անմիջապես ՀՀ հատուկ քննչական ծառայություն են ներկայացել ՀՀ ոստիկանության քննիչներ Հ.Շահումյանը, Վ.Խանգաղյանը և Հ.Խեղոյանը, ովքեր, ստանալով առավել ստույգ տեղեկություններ կատարվելիք գործողությունների վերաբերյալ, մեկնել են դիահերձարան և կատարել համապատասխան քննչական գործողություններ, որոնց արդյունքների վերաբերյալ կազմված փաստաթղթերը ներկայացրել են ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ, թիվ 62202608 քրեական գործով քննչական խմբի անդամ Ա.Գրիգորյանին, որոնց ընդունման հանձնման վերաբերյալ կազմվել է համապատասխան փաստաթուղթ:

- Փաստաթղթում արված այն պնդումը, թե դատաբժշկական կենտրոնի փորձագետները փորձաքննությունն իրականացրել են ՀՀ քր. դատ. օր-ի 97-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, չի համապատասխանում իրականությանը, քանի որ առկա չեն 97-րդ հոդվածով սահմանված քրեական գործով վարույթին դիակների դատաբժշկական փորձաքննություններն իրականացրած փորձագետների մասնակցությունը բացառող որևէ հիմք: Ինչ վերաբերում է նույն փորձագետի մասնակցությունը փորձաքննությանը զուգահեռ իրականացվող դիակի զննմանը, ապա դա նույնպես կատարվել է օրենքով սահմանված կարգով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով սահմանված է, որ փորձագետն իրավունք ունի մասնակցել քննչական և այլ դատավարական գործողություններին, որքանով դրանք վերաբերում են փորձաքննության առարկային և անհրաժեշտ են եզրակացություն տալու համար: Տվյալ դեպքում դիակների զննումը կատարվել է դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումները կայացնելուց հետո, և ՀՀ ԱՆ ԴԲԳԳ կենտրոնի աշխատակիցներն արդեն իսկ ներգրավված են եղել որպես փորձագետներ:

- Հիմնագուրկ է փաստաթղթի այն կետը, թե իբր «քննիչները պարտավոր էին դատաբժշկական փորձաքննության արդյունքում դիակներից հայտնաբերված բեկորները և զնդակները, ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ գլխի համաձայն, փորձագետից առգրավել որոշմամբ, ինչին պետք է անպայման նախորդեր քրեական գործ հարուցելու մասին որոշումը»:

Ուսումնասիրությունների ընթացքում Փաստահավաք խմբի անդամների տրամադրության տակ եղել են թիվ 62202608 քրեական գործ հարուցելու և հարուցված գործով դիակների դատաբժշկական փորձաքննություններ նշանակելու մասին որոշումները: Դիակների դատաբժշկական փորձաքննությունները կատարվել են հարուցված քրեական գործի քննության շրջանակներում կայացված որոշումների հիման վրա, և նույն քրեական գործով տարբեր քննչական կամ դատավարական գործողություններ կատարելիս կրկին քրեական գործ հարուցելը չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից: ՀՀ քր. դատ. օր-ի 217-րդ հոդվածի

համաձայն՝ հանցագործության հետքերը, այլ նյութական օբյեկտները հայտնաբերելու, հանցագործության դեպքը, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները պարզելու նպատակով քննիչը կատարում է դիակի զննում: Այլ խոսքով՝ զննում իրականացնելու նպատակներից մեկն էլ հենց հանցագործության հետքերը, այլ նյութական օբյեկտները հայտնաբերելն է: ՀՀ քր. դատ. օր-ի 218-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զննության ընթացքում քննիչն ինքնուրույն կամ մասնագետի օգնությամբ վերցնում է հետքեր, իրեր, փաստաթղթեր, ինչպես նաև այլ առարկաներ, որոնք գործով հետազայում կարող են ունենալ ապացուցողական նշանակություն, այսինքն՝ քննիչն իրավունք ունի հետքեր, իրեր և այլն, վերցնել ինչպես անձամբ, այնպես էլ մասնագիտական հատուկ գիտելիքների տիրապետող, տվյալ քննչական գործողությանը նրան օժանդակելու համար ներգրաված մասնագետի օգնությամբ, ինչն էլ տվյալ դեպքում կատարվել է: ՀՀ քր. դատ. օր-ի 218-րդ հոդվածը (զննում կատարելու կարգը) չի սահմանում զննության ընթացքում որևէ առարկա վերցնելիս որոշում կայացնելու անհրաժեշտություն: Այսինքն՝ օրենքի որևէ պահանջի խախտում թույլ չի տրվել:

- Որպես հակասություն՝ փաստաթղթում նշված է, որ քննիչ Հ.Մանգոյանի կողմից դիակի զննմամբ վերցված բեկորներից մեկի չափերը չեն համընկնում պայթյունատեխնիկական փորձաքննության ընթացքում փորձագետի արձանագրած չափերին: Նախ՝ քննիչը չունի և պարտավոր չէ ունենալ գիտության, տեխնիկայի, համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի, բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի բեկորների չափերն արձանագրել է սանտիմետրով, այլ ոչ թե միլիմետրերի ճշտությամբ, և տվել է դրանց ընդհանուր նկարագիրը: ՀՀ քր. դատ. օր-ի 243-րդ հոդվածով սահմանվում է, որ փորձաքննությունը կատարվում է, երբ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառներում հատուկ գիտելիքներ: Քննիչի հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում

փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից: Քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները, այն է՝ Համլետ Թադևոսյանի դիակից հանված բեկորների պատկանելիությունը, ծագման աղբյուրը և մի շարք այլ հարցեր պարզելու նպատակով նշանակված պայթյունատեխնիկական փորձաքննությամբ, նշված բնագավառում հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող փորձագետը հետազոտության է ենթարկել ներկայացված բեկորները և իր պարտականությունների շրջանակում կազմված եզրակացությունում տվել բեկորի չափերը՝ միլիմետրերի ճշտությամբ:

- ՀՀ ոստիկանության ՔԳՎ քննիչ Հ.Մանգոյանը ներգրավված է եղել թիվ 62202608 քրեական գործով կազմված քննչական խմբում, քննչական խմբի կազմում կատարել է քննչական գործողություններ, սակայն քննչական խումբ կազմելու մասին որոշման մեջ թույլ է տրվել տեխնիկական վրիպակ՝ «Հ.Ն.Մանգոյան» անվան փոխարեն որոշման մեջ տպագրվել է «Ն.Մանգասարյան», ինչի մասին Փաստահավաք խմբի անդամներին պարզաբանել է վերջիններիս կողմից հրավիրված Հ.Մանգոյանը: Այն, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, հաստատվել է Փաստահավաք խմբին տրամադրված ՀՀ ոստիկանության համակարգում աշխատող քննիչների ցուցակով՝ համաձայն որի ոստիկանության համակարգում «Ն.Մանգասարյան» տվյալներով քննիչ չի աշխատում:

- Անընդունելի է Փաստահավաք խմբի անդամների կամ անդամի պնդումը, թե հնարավոր է լուսանկարով կարողանալ տարբերակել դիակային բծերի հետքերը պայթյունի կամ կրակոցի արգասիքների թողած հետքերից: Փաստաթղթում նշված է, որ քննիչը չի վերցրել պայթյունի արգասիքներ «վիրահատության ժամանակ չմշակված բեկորային վնասվածքների վրայից»՝ այն պայմաններում, երբ Համլետ Թադևոսյանի անվամբ լրացված թիվ 370/14 հիվանդության պատմության նկարագրում արձանագրված է, որ կլինիկա ընդունվելուց հետո հիվանդն անմիջապես բարձրացվել է վիրահատարան, որտեղ կատարվել է վերքերի առաջնային վիրաբուժական մշակում, հեմոստազ, դրվել են



կարեր, ուստի վիրահատական միջամտությունից և վերքերի մշակումից հետո պայթյունի կամ կրակոցի արգասիքներ քննիչը վերցնել չէր կարող:

- Նախաքննական մարմինն ընդունում է, որ Համլետ Թադևոսյանի հագուստների զննման և հետագա փորձաքննությունների ընթացքում տեղի են ունեցել բացթողումներ, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Ա.Թադևոսյանի կողմից հիվանդանոցից վերցնելուց և քննչական բաժին տեղափոխելուց հետո մյուս հագուստների հետ զրահաբաճկոնը չի ուղարկվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն և մինչ 2009թ. փետրվարի 3-ը մնացել է նույն բաժնի իրեղեն ապացույցների սենյակում: Քննչական խումբն էլ իր հերթին ժամանակին ի հայտ չի բերել բացթողումը, որի արդյունքում զրահաբաճկոնը հետագոտվել է ամիսներ անց: Այդ կապակցությամբ ՀՀ ոստիկանության ՔԳՎ-ում անցակցվել է ծառայողական քննություն: Չնայած դրան՝ զրահաբաճկոնի հետագոտումը և փորձաքննությունները կատարվել են ՀՀ քր. դատ. օր-ի պահանջների պահպանմամբ, և ապացույցները ձեռք են բերվել օրենքով սահմանված կարգով:

Քննիչ Ա.Թադևոսյանը փաստահավաք խմբին պարզաբանել է, որ արձանագրել է բուժքրոջ ներկայացրած բոլոր հագուստները, այդ թվում՝ զրահաբաճկոնը, սակայն վերջինս մեծածավալ լինելու պատճառով փաթեթավորել է հագուստներից առանձին: Սակայն նշված պարզաբանումն անտեսվել է Խմբի կողմից: Ուստի փաստահավաք խմբին ավագ բուժքույր Պ.Էլոյանի և բուժքույր Կ.Գրիգորյանի տված բացատրությունների մեջբերումը փաստաթղթում հավատ չի ներշնչում, քանի որ, ինչպես նշվեց, փաստաթղթում տեղ չի գտել այդ կապակցությամբ խմբին տված Ա.Թադևոսյանի բացատրությունը: Փաստաթղթում հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ ՀՀ հատուկ քննչական ծառայություն ներկայացված՝ Համլետ Թադևոսյանի հագուստների փաթեթում առկա չի եղել զրահաբաճկոնը, ինչը ևս վկայում է այն մասին, որ զրահաբաճկոնը փաթեթավորված է եղել հագուստներից առանձին: Բացի այդ, մի շարք դեպքերում փաստաթղթում խեղաթյուրված կամ աղճատված են ներկայացված Փաստահավաք խումբ հրավիրված պաշտոնատար անձանց բացատրությունները:

*Փաստաթղթում տեղ գտած փորձաքննությունների եզրակացությունների և փորձագետների բացատրությունների վերաբերյալ իրենց առարկություններն են ներկայացրել նաև փորձագետները՝ նշելով, որ տեղեկությունները ներկայացված են խեղաթյուրված և աղճատված.*

### **ՀՀ ԱՆ ԴԲԳԳ կենտրոնի փորձագետ Վ.Ադամյան**

- Համլետ Թադևոսյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ ուսումնասիրվել են բոլոր մարմնական վնասվածքները, որոնք եղել են միանման և միաբնույթ (բեկորային): Բեկորներ հայտնաբերելու նպատակով չեն հետազոտվել բոլոր վերքային խողովակները, քանի որ դիակի վրա առկա են եղել բազմաթիվ բեկորային վնասվածքներ և նման քանակության կտրվածքներ կատարելու դեպքում դիակին կպատճառվեին անջնջելի վնասվածքներ և լիովին կխախտվեր մարմնի ամբողջականությունը: Բացի այդ, ձեռք բերված տվյալները բավարար էին փորձաքննությամբ առաջադրված հարցերին պատասխանելու համար:

ՀՀ ԱՆ ԴԲԳԳ կենտրոնը դիակի ռենտգեն նկարահանում կատարելու համար համապատասխան սարքավորում չունի, իսկ կենդանության օրոք հիվանդանոցում ռենտգեն նկարահանում չի կատարվել, ինչի մասին փաստահավաք խումբը կարող էր համոզվել իր տրամադրության տակ գտնվող՝ Համլետ Թադևոսյանի հիվանդության պատմագրի ուսումնասիրությամբ, ուստի գոյություն չունեցող ռենտգեն նկարներ փորձագետի կողմից պահանջվել չէին կարող:

- Եզրակացությանը կից լուսանկարչական հավելվածում պատկերված են Հ.Թադևոսյանի դիակի սրունքների փափուկ հյուսվածքներից հեռացված բոլոր երեք բեկորները, որի մասին արձանագրված է նաև դիախերձմանը զուգահեռ կատարված դիակի զննման արձանագրությունում: Բեկորները չափվել են քանոնով և լուսանկարահանվել, իսկ հայտնաբերված բեկորների մանրամասն

ուսումնասիրությունը քրեագիտության բնագավառի փորձագետի իրավասության խնդիր է:

- Փաստաթղթում նշված է, որ փորձագետ Վ.Ադամյանը փորձաքննությամբ չի պարզել, թե մարմնական վնասվածքները պայթյունի գործոններից ո՞ր մեկի՝ բեկորների, հարվածային ալիքի՞, թե՞ ջերմային ազդեցության արդյունք են: Փորձագետի թիվ 248 եզրակացության հետևությունների թիվ 1, 2, 3, 4, 6 և 8-րդ կետերում հստակ արձանագրված է, որ Հ.Թադևոսյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերվել են՝ ձախից վերին և ստորին կոպի, որովայնի, շեքի, փոշտի, ամորձիների, առնանդամի, զույգ բազուկների, ձախ նախաբազկի, զույգ ազդրերի, սրունքների, աջ ոտնաթափի 1-ին մատի եղնգային ֆալանգի բազմաթիվ պայթյունային, բեկորային վիրավորումներ՝ փափուկ հյուսվածքների և անոթների վնասում, աջ ոտնաթափի 1-ին մատի եղնգային ֆալանգի կոտրվածք, հետորովայնամզային հեմատոմա, արտաքին առատ արյունահոսություն: Վերը նշված բոլոր վնասվածքներն առաջացել են կենդանության օրոք՝ պայթյունի հետևանքով առաջացած **քեկորների** ազդեցությամբ (այլ ոչ թե ջերմային կամ հարվածային ալիքի ազդեցությամբ), նրա մահվան հետ գտնվում են անմիջական պատճառական կապի մեջ:

Առկա բոլոր վնասվածքների խմբավորումը, միասին վերցված, առաջացրել է տրավմատիկ-հեմոռակիզ շոկ (ցավ, արյունահոսություն), որով էլ պայմանավորված է եղել Հ.Թադևոսյանի մահը: Եզրակացության մեջ չի նշվել կյանքի համար անհամատեղելի վնասվածքների մասին, քանի որ այդպիսիք չեն եղել:

- Համլետ Թադևոսյանի վնասվածքների շրջանում պայթյունի արգասիք հանդիսացող այրվածքների և մրի առկայությունը դատաբժշկական փորձաքննությամբ չի պարզվել, քանի որ այդպիսիք չեն եղել: Մինչ մահը վրա հասնելը կատարվել է ինտենսիվ վիրահատական միջամտություն, և վնասվածքները եղել են մշակված:

- Փաստաթղթում խեղաթյուրված են ներկայացված Փաստահավաք խմբին փորձագետ Վ.Ադամյանի տված բացատրությունները: Մասնավորապես՝ փաստաթղթում նշված է. «այն հարցին, թե, ելնելով դիակի վրա առկա մարմնական

վնասվածքների դասավորվածությունից, որն է հանդիսանում պայթյունի օջախը, փորձագետը խուսափել է պատասխանել, սակայն նշել է, որ հետորովայնամզային հատվածում մեծ հեմատոմայի առաջացումը պայթյունի հարվածային ալիքի, այլ ոչ թե բեկորների ներգործության արդյունք է»։ Իրականում Փաստահավաք խմբում բացատրություններ տալիս փորձագետը պատասխանել է, որ միմիայն դատաբժշկական փորձաքննության արդյունքներով հնարավոր չէ պատասխանել այդ հարցին, իսկ ինչ վերաբերում է հետորովայնամզային հեմատոմային, ապա Խմբին պարզաբանել է, որ այն կարող է լինել ոչ միայն հարվածային ալիքի, այլև բեկորային վնասվածքներ ստանալու հետևանքով վայր ընկնելու արդյունք։

Փաստահավաք խումբը, միանշանակ հայտարարելով, թե նշված հեմատոման առաջացել է պայթյունի հարվածային ալիքից, չունենալով դատաբժշկական, դատաձգաբանական, դատաքրեագիտական, դատապայթյունատեխնիկական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, արել է եզրահանգում, որ պայթյունը տեղի է ունեցել Հ.Թադևոսյանի սեռական օրգանների հատվածում։ Փաստորեն, Փաստահավաք խումբը, անտեսելով և խեղաթյուրելով նախաքննության տվյալները, համապատասխան փորձաքննությունների եզրակացությունները, ինչպես նաև՝ այդ կապակցությամբ փորձագետների տված պարզաբանումները, Համլետ Թադևոսյանի վնասվածքներ ստանալու վերաբերյալ արել է ակնհայտ կանխակալ և անհիմն եզրակացություն։

### **ՀՀ ոստիկանության ՓԲՎ ՔՀ բաժնի պետի տեղակալ Ա.Հովհաննիսյան**

Փաստաթղթում արձանագրված է, որ Փաստահավաք խմբի անդամներին փորձագետը չի կարողացել պարզաբանել, թե ինչ կառուցվածք և ինչ չափեր ունի նռնակի պայթուցիչի ականոցը, չի կարողացել հակադարձել Խմբի անդամների առաջադրած մի շարք հարցերի և այն, որ փորձաքննության ներկայացված բեկորը «ՈւՋՈ-ԳՄ» տեսակի պայթուցիչի միացման ականոցի վերին հատվածի բեկոր է, ըստ փորձագետի, հիմնավորվում է միայն բեկորի վրա հայտնաբերված գործարանային արտադրության ինչ-որ զուգահեռ գծերի առկայությամբ։

Փաստաթղթում ամբողջովին խեղաթյուրված են փորձագետի տված պարզաբանումները, մեկնաբանությունները:

Այսպես.

- Միացման ականոցը «ՈւՋՈ-ԳՄ» տեսակի պայթուցիչի այն դետալն է, որով պայթուցիչը պարուրվում է նռնակի մեջ: Ականոցը գլանաձև է, ունի 14-14,5մմ երկարություն: Գլանական մասում այն ունի 15մմ տրամագծով արտաքին պարույր (ռեզբա), որը սկսվում է ականոցի վերին եզրից 4,5-5մմ ներքև և ավարտվում է ականոցի ներքևի եզրում: Այսինքն, ականոցի վերին հատվածը 4,5-5մմ սահմաններում պարույր չունի, հետևաբար փորձագետի թիվ 735 եզրակացությունում հետազոտված 11×4,8×2,3մմ գաբարիտային չափսեր ունեցող բեկորի վրա, որն ըստ եզրակացության՝ հավանաբար գործարանային արտադրության «ՈւՋՈ-ԳՄ» տեսակի պայթուցիչի միացման ականոցի վերին հատվածի բեկոր է, 4,8մմ չափսի տարածության վրա չէր կարող լինել պարույր (ռեզբա), հետևաբար և փորձագետի եզրակացությունում պարույրի (ռեզբայի) մասին նշումներ չէին կարող լինել:

Ինչ վերաբերում է բեկորի 2,3մմ չափսին, ապա դա ականոցի վերին մասի ճակատային մակերեսի հատված է, որի վրա էլ արտահայտված են գործարանային արտադրության (հաստոցային մշակման) զուգահեռ գծերը: Ականոցի վերին մասի լայնությունը 3մմ է, այն ներսի կողմից ունի մետաղի թեք մշակվածություն, որի հաշվին ճակատային մասի մակերեսի լայնությունը կազմում է 2,3մմ:

Փաստահավաք խմբին բացատրվել էր, որ եզրակացության մեջ նշված 11×4,8×2,3մմ չափսերը բեկորի գաբարիտային՝ մաքսիմալ չափսեր են, բեկորն ականոցի, ոչ թե երկայնական, ինչպես պատկերացնում էին նրանք, այլ լայնական բեկոր է, և որ պայթյունի հետևանքով բեկորացված կտորը կրել է որոշակի կառուցվածքային, ձևային, չափային փոփոխություններ և չի կարելի համեմատության հիմքում դնել իդեալական չափային համապատասխանությունը:

Ինչ վերաբերում է ականոցի ներսի կողմից պարույր (ռեզբա) լինել-չլինելուն, ապա «ՈւՋՈ-ԳՄ» տեսակի պայթուցիչների միացման ականոցները ներսի կողմից պարույր չունեն: Դրանց ներսի մակերեսը հարթ է, վերին մասում (ներսից) ունեն մեկ գնդաձև ցցվածք, որը մտնում է պայթուցիչի իրանի վրա կատարված կտրվածքի մեջ և թույլ չի տալիս ականոցին պտտվել պայթուցիչի իրանի շուրջ, ներքևից ականոցը ամրանում է պայթուցիչի իրանի մեջ պարուրվող դետոնատորով:

Փաստաթղթում չի նշվել այնպիսի կարևոր փաստի մասին, որ փորձագետը 11×4,8×2,3մմ գաբարիտային չափսեր ունեցող բեկորն անմիջականորեն համեմատել է «ՈւՋՈ-ԳՄ» պայթուցիչի միացման ականոցի հետ՝ հաշվի առնելով դրա ձևը, չափսերը, կառուցվածքը և մագնիսի կողմից ձգվելու հատկությունը: Արդյունքում՝ համընկնող հատկանիշները բավարարել են հավանական հետևություն կատարելու համար:

- Փաստաթղթում սխալ է ներկայացված նաև այն, որ փորձագետը չի կարողացել պատասխանել այն հարցին, թե ինչու է դուրս եկել իր լիազորությունների սահմաններից և հազուստների դատահետքաբանական փորձաքննության փոխարեն քիմիկ փորձագետ Լ.Սաֆարյանի հետ կատարել դատապայթյունատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննություն: Իրականում Փաստահավաք խմբին պարզաբանվել է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 246-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված է. «եթե փորձաքննության կատարումը հանձնարարված է փորձագիտական հիմնարկին՝ առանց համալիր փորձաքննություն կատարելու պահանջի, ապա անհրաժեշտության դեպքում այդ հիմնարկի ղեկավարը կարող է կազմակերպել համալիր փորձաքննություն»: Հիմնվելով այս դրույթի վրա՝ ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության ղեկավարության կողմից կազմակերպվել է համալիր դատապայթյունատեխնիկական և դատաքիմիական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է փորձագետներ Ա.Հովհաննիսյանին և Լ.Սաֆարյանին: Պայթյունի ազդեցության ենթարկված հազուստները հանդիսանում են դատապայթյունատեխնիկական հետազոտության օբյեկտներ, և

այստեղ հետքաբանությունը ներառվում է պայթյունատեխնիկայի մեջ: Բացի այդ, ՀՀ քր. դատ. օր-ի 85-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ փորձագետը պարտավոր է եզրակացություն տալ ոչ միայն առաջադրված հարցերով, այլ նաև իր իրավասության հարցերի մեջ մտնող և փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով:

- Փաստաթղթում խեղաթյուրված են քննիչներ Կ.Հովսեփյանի և Հ.Տերտերյանի տված բացատրությունները՝ կապված Համլետ Թադևոսյանի կոշիկի վրա գննմամբ և փորձաքննությամբ հայտնաբերված բեկորների տեղակայման անհամապատասխանության հետ: Մասնավորապես՝ Փաստահավաք խմբին Կ.Հովսեփյանը պարզաբանել է, որ հագուստների գննումը կատարել է Հ.Տերտերյանի մասնակցությամբ, արձանագրությունը կազմել է վերջինիս թելադրանքով և հստակ չի կարող ասել՝ բեկորները գտնվել են աջ, թե՛ ձախ կոշիկի վրա: Իր հերթին՝ Հ.Տերտերյանը հաստատել է հագուստների գննումը Կ.Հովսեփյանի հետ կատարելու հանգամանքը և հաստատապես չի պնդել, որ բեկորները հայտնաբերվել են ձախ կոշիկի վրա՝ չբացառելով, որ գննման ընթացքում կարող է շփոթած լինել աջ և ձախ կոշիկները:

- Փաստահավաք խումբն արձանագրել է, որ փորձագետ Ա.Հովհաննիսյանը թիվ 494 եզրակացությունում որևէ փաստարկով չի հիմնավորել այն եզրահանգումը, որ Հ.Թադևոսյանի կոշիկի վրայի բեկորը հավանաբար գործարանային արտադրության «ՈւՋՌ-ԳՄ» տեսակի պայթուցիչի միացման ականոցի բեկոր է: Փոխարենը Խումբը հանգել է եզրակացության, որ առկա անհատական հատկանիշները չեն կարող հիմք հանդիսանալ բեկորը որպես գործարանային արտադրության «ՈւՋՌ-ԳՄ» տեսակի պայթուցիչի միացման ականոցի մաս նույնականացնելու համար:

- Հարցին՝ թե ինչու փորձագետները չեն պարզել բեկորների մետաղային բաղադրությունը, փորձագետը փաստահավաք խմբում պատասխանել է, որ իրենք նման հետազոտություն կատարելու համար համապատասխան սարքավորումներ չունեն, և ավելացրել, որ նույնիսկ այդպիսիք լինելու դեպքում, ըստ բաղադրության, բեկորը հնարավոր չէ համեմատել գործարանային արտադրության մեկ այլ

«ՈւԶՈ-ԳՄ» տեսակի պայթուցիչների ականոցի հետ, քանի որ չկան այնպիսի տեղեկություններ, թե պայթուցիչները և դրանց մասերը որտեղ և ինչ բաղադրությամբ են արտադրվել, չի<sup>օ</sup> փոփոխվել արդյոք դրանց բաղադրությունը, չկա<sup>օ</sup>ն արդյոք նման բաղադրությամբ այլ դետալներ:

Փաստաթղթում խեղաթյուրվել են նաև Համլետ Թադևոսյանի հագուստների վրա հայտնաբերված վնասվածքների հետազոտության կապակցությամբ փաստահավաք խմբին փորձագետի տված պարզաբանումները: Արձանագրվել է, թե իբր որոշ «բացթողումներ» փորձագետը մեկնաբանել է որպես թերացում:

Փորձագետի թիվ 494 եզրակացությունում տրվել է հետևություն, որ Հ.Թադևոսյանի հագուստների վրայի վնասվածքները բեկորային բնույթի են՝ առաջացած բեկորացման ենթակա ամուր պատյան ունեցող պայթուցիչ սարքի պայթյունից, որը պայթել է Հ.Թադևոսյանի ոտքերի մոտ: Հետազոտական մասում պայթյունի տեղի վերաբերյալ տրված է հստակ հիմնավորում. Հ.Թադևոսյանի հագուստների վրայի վնասվածքներն առավել խիտ տեղակայում ունեն ներքևի հատվածներում, իսկ դեպի վեր աստիճանաբար նոսրանում են, ունեն ներքևից վեր ուղղվածություն, կիսաճտքավոր կոշիկների առաջաներսային հատվածներում կան բազմաթիվ բեկորային վնասվածքներ, որոնց թվում բավականին շատ են խիտ տեղակայում ունեցող մանր ծակոտիների տեսքով վնասվածքները:

Ինչ վերաբերում է գրահաբաճկոնի բացակայությանը, ապա փաստահավաք խմբում փորձագետը հայտարարել է, որ գրահաբաճկոնի բացակայությունը չէր կարող ազդել հետևության վրա, քանի որ գրահաբաճկոնին հարող հատվածներում առկա վնասվածքները այլ բան չեն ասում: Հ.Թադևոսյանի հագուստների վրայի վնասվածքների տեղակայումը նկարագրված է եզրակացության հետազոտական մասում: Փաստահավաք խմբում փորձագետը հայտարարել է, որ գրահաբաճկոնային հատվածում հագուստների վրա վնասվածքների բացակայությունը կարող է պայմանավորված լինել ինչպես փաստահավաք խմբի կողմից նշված գրահաբաճկոնի առկայությամբ, այնպես էլ որևէ արգելապատնեշի առկայությամբ, որը գտնվել է պայթյունի օջախից մինչև նշված հատվածը: Ոչ մի



բացթողման կամ թերացման մասին փորձագետի կողմից հայտարարություն չի արվել:

Ոչ եզրակացություններում և ոչ էլ փաստահավաք խմբում փորձագետի կողմից չի նշվել, որ պայթել է «Ֆ-1», «Ռ-Գ-42», «Ռ-Գ-Գ-5» նռնակներից որևիցե մեկը, այլ նշվել է, որ «ՌԼԶՌ-ԳՄ» տեսակի պայթուցիչները նախատեսված են գործարանային արտադրության «Ֆ-1», «Ռ-Գ-42» և «Ռ-Գ-Գ-5» տեսակի նռնակներ պայթեցնելու համար, սակայն կարող են օգտագործվել նաև ինքնաշեն պայթուցիկ սարքեր պայթեցնելու համար: Փաստահավաք խմբում փորձագետը տվել է պարզաբանում, որ «Ֆ-1» տեսակի նռնակներն ունեն չուզուներ պատյան, և այդ նռնակի պայթյունից առաջացած բեկորներն իրենց կառուցվածքով տարբերվում են փորձաքննությանը ներկայացված բեկորներից:

Փաստաթղթի հերթական կետում նշված է՝ «այն հարցին՝ ինչու՞ փորձագետի կողմից հագուստների հետազոտման ժամանակ չեն ուսումնասիրվել պայթյունի արգասիքները և այդ մասին նշված չէ եզրակացության մեջ, փորձագետը պատասխան չի տվել»:

Փաստացի, փորձագետը փաստահավաք խմբին պարզաբանել է, որ պայթյունի այնպիսի արգասիքներ, ինչպիսիք են այրվածքը, մուրը և հարվածային ալիքից առաջացող զգալի չափերի պատռվածքային վնասվածքները, հագուստների վրա չեն հայտնաբերվել, և, հետևաբար, եզրակացության մեջ գոյություն չունեցող հետքերի վերաբերյալ նշումներ լինել չէին կարող, իսկ ինչ վերաբերում է պայթյունի այնպիսի արգասիքների, ինչպիսիք են պայթուցիկ նյութի հետքերը, ապա փորձագետի թիվ 494 եզրակացությունում մանրամասն նկարագրված է պայթուցիկ նյութի հետքեր հայտնաբերելու համար կատարված քիմիական հետազոտությունը, իսկ հետևությունների մասում՝ հետազոտության արդյունքները:

Անհիմն է Փաստահավաք խմբի հիշյալ հայտարարությանը, թե փորձագետը հագուստների հետազոտման ընթացքում չի ուսումնասիրել պայթյունի արգասիքները, և այդ մասին նշված չի եզրակացության մեջ, այն դեպքում, երբ նույն փաստաթղթի մեկ այլ կետում Փաստահավաք խումբը մեղադրել էր

փորձագետին՝ իր իրավասության սահմաններից դուրս գալու և համալիր դատապալությունատեխնիկական և քիմիական համալիր փորձաքննություն կատարելու համար:

*Վերոգրյալի հիման վրա նախաքննական մարմինը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ի կարգադրությամբ ստեղծված Փորձագետների փաստահավաք խմբի կողմից «ուստիկանության գործերի թիվ 1032 գորամասի սպա Համլետ Թադևոսյանի մահվան հանգամանքների հետ կապված փաստերի ուսումնասիրության արդյունքները» վերնագրված փաստաթուղթը չի արտացոլում իրականությունը:*

## **Առարկություն 2-րդ**

*ՀՀ Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ի կարգադրությամբ ստեղծված Փորձագետների փաստահավաք խմբի անդամներ Սեդա Սաֆարյանի և Անդրանիկ Քոչարյանի՝ 2008թ. մարտի 1-2 երկան քաղաքում տեղի ունեցած հրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության՝ ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովին ներկայացրած՝ «ՀՀ ՈԶ 1033 գորամասի 2-րդ գումարտակի զինձառայող Տիգրան Աբգարյանի մահվան հանգամանքները» վերտառությամբ փաստաթղթի վերաբերյալ*

Փաստահավաք խմբի անդամներ Սեդա Սաֆարյանն ու Անդրանիկ Քոչարյանը (այսուհետև՝ «զեկուցողներ») ՀՀ ՈԶ 1033 գորամասի 2-րդ գումարտակի զինձառայող Տիգրան Աբգարյանի մահվան հանգամանքները» վերնագրված փաստաթղթում (այսուհետև՝ փաստաթուղթ) միտումնավոր խեղաթյուրել, կեղծել են ինչպես ստացված տեղեկությունները, քրեական գործի նյութերը, այնպես էլ Փաստահավաք խումբ հրավիրած անձանց բացատրությունները:

Այսպես.

- Տիգրան Աբգարյանի ձմեռային զինվորական բաճկոնի զննման վերաբերյալ զեկուցողները նշել են. «Չեկուցողները պարզեցին, որ քննիչն անմիջապես չի գնացել հիվանդանոց՝ Տիգրան Աբգարյանի հազուստները առգրավելու: Ավելին, կրակոցի արգասիքների առկայությունը պարզելու նպատակով քննիչը բժիշկների օգնությամբ տամպոններով չի վերցրել Տիգրան Աբգարյանի վնասվածքի, քթանցքերի, ականջների եւ դեմքի շրջաններից քսուքներ»:

- Հաշվի առնելով, որ հրազենային վնասվածքը Տիգրան Աբգարյանն ստացել է առջեւից, քննիչը զննման ժամանակ չի նշել, թե վնասվածքի հատվածին համապատասխանող՝ բաճկոնի առջեւի հատվածում առկա՞ են արդյոք արնանման կամ այրվածքի հետքեր: Քննիչը չի մատնանշել նաեւ զննման արձանագրության մեջ օձիքի վրայի՝ իր կողմից նշված արնանման հետքերի տեղակայումը, դրանց չափերը, ինչպես նաեւ օձիքի վրայի մյուս երկու փոքր, կլորավուն անցքերի չափերը:

- Չննման արձանագրությունն ուսումնասիրելիս ծագում են հետեւյալ հարցերը. ինչո՞ւ է քննիչը առգրավումը կատարել միայն մարտի 8-ին, այլ ոչ թե դեպքի օրը, ինչպե՞ս պատահեց, որ Տիգրան Աբգարյանի ձմեռային բաճկոնը հայտնվեց զորամասում, ո՞ւր են մնացած հազուստները, որոնք դեպքի օրը եղել են նրա հագին՝ գրահաբաճկոնը, զինվորական կիտելը եւ մայկան, ինչո՞ւ դրանք չեն առգրավվել եւ զննվել, ինչո՞ւ այս առնչությամբ որեւէ քննություն չի իրականացվել: 2008թ. մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում մարմնական վնասվածքներ ստացած ՀՀ ՌԶ բազմաթիվ զինժառայողներ տեղափոխվել են տարբեր հիվանդանոցներ: Դեպքին հաջորդող օրերին ՀՀ ՌԶ համապատասխան զորամասերի հրամանատարները և նրանց ցուցումներով նաև ստորաբաժանումների ղեկավարներն այցելել են բոլոր բուժհիմնարկները, որտեղից զորամասեր են տեղափոխվել վնասվածքներ ստացած զինժառայողների հատուկ միջոցները և հազուստները: Նույն կերպ ՀՀ ՌԶ թիվ 1032 զորամաս է բերվել

Տիգրան Արգարյանի հազուստներից միայն ձմեռային զինվորական բաճկոնը, որն էլ քննիչն առգրավել և ներկայացրել է փորձաքննության:

- Փաստաթղթում արձանագրված է, որ ծանոթանալով Տիգրան Արգարյանի ձմեռային բաճկոնի դատահետքաբանական փորձաքննությունն նշանակելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Երեմյանի 2008թ. մարտի 17-ի որոշմանը՝ առաջացել են հետևյալ հարցադրումները՝

*«ա. եթե վնասվածքը հրազենային է, ապա ինչո՞ւ է քննիչը նշանակել Տիգրան Արգարյանի բաճկոնի դատահետքաբանական փորձաքննություն, այլ ոչ թե դատաձգաբանական:*

*բ. ինչո՞ւ քննիչը բաճկոնի վրայի կրակոցի արգասիքների առկայությունը պարզելու ուղղությամբ փորձագետի առջև խնդիր չի առաջադրել, ինչը հնարավորություն կտար որոշելու կրակոցի հեռավորությունը:*

*գ. Ինչո՞ւ է փորձաքննությունը նշանակվել միայն մարտի 17-ին»:*

Հիշյալ հարցերի պատասխաններն ստանալու համար զեկուցողները հնարավորություն են ունեցել դիմել նախաքննությունն իրականացնող մարմնին և պաշտոնապես ստանալ դրանց պատասխանները, սակայն չեն օգտվել իրենց ընձեռված այդ հնարավորությունից և չունենալով բազմաթիվ հարցերի պատասխաններ՝ շտապել են կազմել քննարկվող փաստաթուղթը:

Նախ՝ քննիչը չէր կարող ենթադրել, որ բաճկոնի վրա պետք է լինեին միայն հրազենային վնասվածքներ, այդ պատճառով որոշում է կայացրել դատահետքաբանական փորձաքննություն նշանակելու մասին, որը ենթադրում է ներկայացվող օբյեկտի քրեագիտական բազմակողմանի հետազոտություն: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 246-րդ հոդվածի 4-րդ կետով հստակ նախատեսված է, որ փորձագիտական հիմնարկի ղեկավարը կարող է կազմակերպել համալիր փորձաքննություն՝ նույնիսկ այն դեպքում, երբ այդ մասին ուղղակի պահանջ չի դրվում քննիչի որոշմամբ: Տվյալ դեպքում՝ քննիչը նշանակել է դատահետքաբանական փորձաքննություն, իսկ փորձաքննությունն իրականացնող

փորձագիտական հիմնարկի ղեկավարի որոշմամբ կազմակերպվել է դատահետքաբանական, դատաձգաբանական և պայթյունատեխնիկական համալիր փորձաքննություն:

Չմեռային զինվորական բաճկոնի վրա վնասվածքների առաջացման մեխանիզմն ու բնույթը պարզաբանելու վերաբերյալ հարցն իր մեջ ներառում է վնասվածքի առաջացման հետ կապված բոլոր հարցերի, այդ թվում նաև՝ կրակոցի հեռավորության պարզաբանումը, այսինքն՝ նշված հարցին պատասխանելիս փորձագետը պետք է անդրադառնա նաև կրակոցի հեռավորության պարզաբանմանը:

Ինչ վերաբերում է նրան, որ ձմեռային զինվորական բաճկոնի փորձաքննությունը նշանակվել է 2008թ. մարտի 17-ին, ապա արտառոց որևէ բան չկա, ինչպես հիշյալ, այնպես էլ մյուս փորձաքննությունները կարող են նշանակվել քրեական գործի նախաքննության ցանկացած փուլում:

- Փաստաթղթում զեկուցողները, որպես դատահետքաբանական, դատաձգաբանական և պայթյունատեխնիկական համալիր փորձաքննության բացթողումներ և թերություններ, արձանագրել են՝ *«Փորձագետի կողմից չի նշվել երեքական շոշափող միջանցիկ վնասվածքների եւ հիմնական վնասվածքի՝ միմյանց նկատմամբ դիրքը, հեռավորությունը եւ չափերը: Նկարագրելով առանձին երեքական շոշափող եւ միջանցիկ վնասվածքները՝ առանց որեւէ հիմնավորման (արհեստականորեն) դրանք ներկայացվել են իբրեւ հիմնական վնասվածքի շարունակություն՝ չհստակեցնելով վնասվածքների քանակը: Ըստ փորձագիտական եզրակացության՝ առկա է բաճկոնի օձիքի մեկ 19x9 մմ չափերի վնասվածք եւ առանձին՝ երեքական շոշափող եւ միջանցիկ վնասվածքներ, այլ կերպ ասած՝ յոթ վնասվածք: Մինչդեռ, այս մասին փորձագետը հստակ ոչինչ չի նշել՝ հատկապես հաշվի առնելով, որ քննիչը բաճկոնը զննելիս նկարագրել էր այդ վնասվածքների հեռավորությունը հիմնական վնասվածքից»:*

Դատահետքաբանական, դատաձգաբանական և պայթյունատեխնիկական համալիր փորձաքննության եզրակացությունում հստակ արձանագրված է 19x9մմ չափով վնասվածքի տեղակայումը: Այնուհետև նշված է. «նկարագրված

վնասվածքը շարունակվում է բաճկոնի օձիքի և մորթենման օձիքի վրա երեքական շոշափող և միջանցիկ, անկանոն տեսքի վնասվածքների ձևով», հետևաբար, նկարագրված մյուս երեքական շոշափող և միջանցիկ անկանոն վնասվածքներն առաջինի շարունակությունն են, գտնվում են մեկ ուղղության վրա և իրենց մորֆոլոգիական (ձև, չափեր, վնասված թելիկների ուղղվածություն) ու քիմիական հատկանիշներով երկրորդային են, այսինք՝ հանդիսանում են առաջնային վնասվածքի՝ 19x9մմ չափով վնասվածքի շարունակությունը, որոնք առաջացել են հագուստի օձիքի տվյալ հատվածի ձևվածքի, այն է՝ օձիքի բնական ծալվածության պատճառով, տեղակայված են օձիքի հետին մակերեսին և վնասում են միայն արտաքին շերտը: Համակցության մեջ այդ բոլոր վնասվածքները միասին գնահատվել են որպես մեկ ընդհանուր ելքի վնասվածք, ունեն միաժամանակյա և ընդհանուր առաջացման մեխանիզմ:

- Փաստաթղթի հեղինակները նշել են նաև. *«Փորձագետը, նկարագրելով վնասվածքները որպես ելքի անցքեր, փորձել է դրանց շուրջ հայտնաբերել վառողային մրի հետքեր, վառողի կիսաայրված մասնիկներ, քսայուղերի եւ կրակոցի արգասիքների մետաղացման հետքեր: Նման հետազոտությունը կատարվում է ընդհուպ կրակոցի փաստը հաստատելու նպատակով»:*

- Չզարանական հետազոտությունների ընթացքում վնասվածքների հատվածներում կրակոցի լրացուցիչ գործոնների հայտնաբերման նպատակով կատարվող հետազոտությունները պարտադիր են՝ անկախ առաջացման մեխանիզմից, որը կատարվում է հետազոտության ամբողջականությունն ապահովելու համար:

- Որպես թերություն՝ զեկուցողներն արձանագրել են նաև. *«Փորձագետը կիրառել է դիֆուզ-կոնտակտային մեթոդը եւ դրա արդյունքում ձմեռային բաճկոնի օձիքի վնասվածքների ներքին մակերեսային վրա հայտնաբերել պղնձի մետաղացման թույլ ինտենսիվության հետքեր: Արտաքին մակերեսային փորձագետը պղնձի մետաղացման հետքեր չի հայտնաբերել: Չեկուցողները հատկապես հարկ են համարում անդրադառնալ այն հանգամանքին, որ փորձագետը, փաստելով պղնձի առկայությունը, այդ առնչությամբ խուսափել է*

*որելէ մեկնաբանություն/հետետություն անելուց: Հայտնի է, որ ընդհուպ կրակոցի ժամանակ վառողի կիսաայրված մասնիկները, վառողային մրի հետքերը, քսայուղերը եւ կրակոցի արգասիք պղնձի եւ անտիմոնի մետաղացման հետքերը առկա են վերքային խողովակում եւ ելքի անցքի մոտ»:*

- Թույլ ինտենսիվությամբ պղնձի մետաղացման հետքի հայտնաբերումը բաճկոնի օձիքի ներքին մակերևույթին և պղնձի մետաղացման հետքի բացակայությունը բաճկոնի օձիքի արտաքին մակերևույթին վկայում է այն մասին, որ նշված հրազենային վնասվածքն առաջացել է պղինձ պարունակող գնդակով և հանդիսանում է ելքի վնասվածք: Պղնձի մետաղացման հետքերի նման տոպոգրաֆիան վնասվածքի առաջացման մեխանիզմի մասին եզրահանգման հիմնավորումներից մեկն է:

- Փաստաթղթի հաջորդ հատվածում զեկուցողները նշել են. «Հարկ է ավելացնել, որ փորձաքննությունը կատեցվել է 2008 թ. մարտի 19-ին, քանի որ փորձագետը միջնորդություն է ներկայացրել քննիչին՝ իրեն տրամադրել Տիգրան Աբգարյանի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը: Փաստորեն, ունենալով Տիգրան Աբգարյանի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը եւ տեղյակ լինելով, որ հրազենային մուտքի անցքը առջելից է, փորձագետը որելէ փորձ չի արել՝ պարզելու բաճկոնի առջելի մասի՝ հրազենային մուտքի վնասվածքին հարող հատվածում վառողային մրի հետքերի, կիսաայրված վառողների մասնիկների, քսայուղերի հետքերի, ինչպես նաեւ կրակոցի արգասիքները կազմող պղնձի եւ անտիմոնի մետաղացման հետքերի առկայությունը, որի միջոցով կպարզվեր ու կհաստակեցվեր կրակոցի հեռավորությունը»: ՀՀ քր. դատ. օր-ի 85-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ փորձագետն իրավունք ունի քրեական վարույթն իրականացնող մարմնից պահանջել անհրաժեշտ օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր՝ եզրակացություն տալու և համեմատական հետազոտման համար: Ինչ վերաբերում է փորձաքննության ժամկետը կատեցնելուն, ապա այն կարգավորվում է «ՀՀ

փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 2006թ. մարտի 15-ի թիվ 29-Ն հրամանով գործողության մեջ դրված կարգի 29-րդ կետով:

Կրակոցի արգասիքներ հայտնաբերելու ուղղությամբ փորձագետի կողմից կատարվել են համապատասխան հետազոտություններ նկարագրված վնասվածքներում և դրանց հարող մակերեսներում, որն իր մեջ ներառում է բաճկոնի օձիքն ամբողջությամբ՝ որպես մեկ ընդհանուր օբյեկտ: Այսինքն, հագուստի օձիքն ամբողջությամբ հետազոտելիս հետազոտվել է նաև Տիգրան Աբգարյանի մարմնի վրա հայտնաբերված հրազենային վնասվածքի մուտքի անցքին հարող հագուստի համապատասխան հատվածը, քանի որ համաձայն դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ հրազենային մուտքի անցքը գտնվում է Տիգրան Աբգարյանի պարանոցի առջևի աջ հատվածում: Բաճկոնի օձիքի հետազոտությամբ՝ մոտ կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության հետքեր չեն հայտնաբերվել, ինչն էլ հստակ արձանագրված է եզրակացությունում:

- Անդրադառնալով դատահետքաբանական, դատաձգաբանական և պայթյունատեխնիկական համալիր փորձաքննության եզրակացությանը՝ զեկուցողները նշել են՝ *«Փորձագիտական եզրակացության մեջ բացակայում է կրակոցի հեռավորության վերաբերյալ որեւէ նշում: Մինչդեռ, դատաձգաբանական փորձաքննության հիմնական նպատակներից մեկը հենց կրակոցի հեռավորության որոշումն է: Ունենալով մեկ 19x9 մմ չափերի վնասվածք, եւ դրանից բացի, նաեւ երեքական շոշափող ու միջանցիկ վնասվածքներ, փորձագետը եզրակացության հետետության մեջ չի նշել դրանց քանակը, չափերը եւ դասավորվածությունը բաճկոնի օձիքի վրա: Լողզելով առկա տվյալները՝ սահմանափակվել է նշելով՝ նկարագրված վնասվածքները հրազենային են (այսինքն՝ նկատի է ունեցել մեկից ավելի հրազենային վնասվածքների առկայություն), եւ կատարվել է առնվազն մեկ կրակոց (ընդունել է մեկից ավելի կրակոցների առկայության փաստը): Այսքանով հանդերձ, դատաձգաբանական փորձագետները նշել են, որ «բաճկոնի վրա նկարագրված հրազենային վնասվածքները հանդիսանում են ելքի վնասվածք»:* Տրամաբանական հարց է ծագում՝ ինչպե՞ս է հնարավոր մի քանի հրազենային վնասվածքները դիտել որպես մեկ ելքի վնասվածք»:



- Հիշյալ եզրակացությունում հստակ նշված է, որ հազուստի հետազոտությամբ մոտ կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության հետքեր չեն հայտնաբերվել:

Հազուստի վրա նկարագրված վնասվածքները համակցության մեջ հանդիսանում են մեկ ընդհանուր ելքի վնասվածք, ինչն էլ հստակ արձանագրված է եզրակացությունում:

- Ձեկուցողները, անդրադառնալով Տիգրան Աբգարյանի դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությանը, գտել են, որ *«փորձագետը թերացել է իր առջև դրված խնդիրը լուծելիս եւ հետետության մեջ չի անդրադարձել մնացած վնասվածքներին, չի նշել դրանց առաջացման մեխանիզմը եւ վաղեմությունը»:*

- Տիգրան Աբգարյանի մարմնի վրա արձանագրվել են՝ հրազենային վնասվածքի մուտքի և ելքի մեկական անցքեր, կրծքավանդակի հետին մակերեսի ստորթիակային շրջանի և գույգ կրունկային շրջանների վերքեր՝ պառկելախոցեր, որոնք առաջացել են երկարատև պառկելու արդյունքում՝ այդ հատվածներում սնուցման խանգարմամբ, և բուժական միջամտությունների արդյունքում առաջացած վերքերի ապաքինված սպիներ, որոնց մասին ուղղակի արձանագրված է Տիգրան Աբգարյանի անվամբ լրացված հիվանդության պատմագրերում: Ակնհայտ է, որ վերքերն ու վնասվածքները տարբեր բժշկական կատեգորիաներ են:

- Ձեկուցողները նշել են. *«Անհասկանալի է, թե ինչու դատաբժշկական փորձագետը դատահյուսվածքաբանական հետազոտման նպատակով մաշկալաթ չի վերցրել Տիգրան Աբգարյանի հրազենային վնասվածքի մուտքի անցքի շրջակայքից եւ չի հանձնարարել կատարել համապատասխան փորձաքննություն, որը հնարավորություն կտար՝ պարզելու կրակոցի արգասիքների առկայությունը եւ դրանով իսկ որոշել կրակոցի հեռավորությունը: Այն դեպքում, երբ նույն փորձագետը դատահյուսվածքաբանական բաժանմունքի արխիվի համար վերցրել է դիակի տարբեր ներքին օրգաններից կտորներ (զլխտղեղ-2, սիրտ-2, լյարդ-1, թոք-5, երիկամ-2, փայծաղ-1, ենթաստամոքսային գեղձ-1, մակերիկամ-2): Փոխարենը, դատաբժշկական փորձագետը, լուրջ հղում կատարելով հիվանդության պատմագրի*

*տվյալներին, որոշել է, որ կրակոցը կատարվել է տվյալ տեսակի զենքի համար կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից՝ չնշելով, սակայն, թե բժշկական ինչ տվյալների հիման վրա է հանգել նման եզրակացության»:*

Ընդգծենք, որ 2008 թվականի մարտ ամսին կատարված փորձաքննության ժամանակ հրազենային վնասվածքի մուտքի անցքից մաշկալաթ չվերցնելու և այն փորձաքննության չենթարկելու անհնարիությունն արտացոլված է դատաբժշկական փորձաքննության եզրակացությունում, որտեղ հստակ նշված է. «Փորձաքննվողը գտնվում է դեղորայքային սեղացիայի տակ և տրախեոստոմիկ խողովակով միացված է ԹԱՇ-ի, պարանոցը ֆիքսված է և գտնվում է բինտային վիրակապի մեջ»: Կենդանի անձից առհասարակ մաշկալաթ չի վերցվում:

Ինչ վերաբերում է դիակի դատաբժշկական փորձաքննության ժամանակ մուտքի անցքից մաշկալաթ չվերցնելու հանգամանքին, ապա դա բացատրվում է այն հանգամանքով, որ դիակի դատաբժշկական փորձաքննությունն անցկացվել է դեպքից շուրջ 40 օր անց (*Տիգրան Աբգարյանը մահացել է 2008թ. ապրիլի 11-ին*): Հիշյալ 40 օրերի ընթացքում Տիգրան Աբգարյանի հրազենային վերքը հիվանդանոցում պարբերաբար վիրաբուժական մշակման է ենթարկվել տարբեր անտիսեպտիկ նյութերով (սպիրտ, յոդ և այլն), որի հետևանքով մաշկն անկասկած մաքրվել է, ինչպես նաև վերնամաշկը՝ էպիդերմալ շերտը, փոխարինվել է նորով:

Հրազենային մուտքի անցքի շուրջ օտար նստվածքներ՝ լրացուցիչ գործոններ լինելու դեպքում դրանց առկայության մասին բժիշկների կողմից պարտադիր կարգով պետք է նշումներ կատարվեր հիվանդության պատմագրում: Դա բուժող, հետազոտող բժիշկների պարտականությունն է, ուստի լրացուցիչ գործոնների բացակայության մասին բուժող բժիշկների նշումները հիմք են ընդունվել փորձաքննության կատարման ժամանակ:

Զեկուցողներն իրենց անհասկանալի մնացած հարցերն ուղղել են ոչ թե փորձագետին կամ համապատասխան մարմիններին, այլ շարադրել են փաստաթղթում. «*Անհասկանալի է, թե սովորական հիվանդանոցային պայմաններում բուժող բժիշկները կարո՞ղ էին արդյոք կատարել դատաբժշկական*

փորձագետի իրավասության մեջ մտնող գործառույթներ, եւ կատարվե՞լ են արդյոք, դրանք: Միաժամանակ, դատաբժշկական փորձագետը նշել է, որ կրակոցի լրացուցիչ արգասիքների առկայության հարցը ավելի ստույգ հնարավոր կլինի պարզաբանել հագուստների հետքաբանական փորձաքննությամբ: Ջեկուցողների մոտ ծագում է հետեւյալ հարցը՝ եթե դատաբժշկական փորձագետը համոզված չէ իր կատարած հետեւության մեջ, առաջարկում է քննիչին նշանակել համալիր դատաբժշկական եւ դատահետքաբանական փորձաքննություն՝ կրակոցի հեռավորության հարցը լուծելու նպատակով, ապա ինչո՞ւ է հեռավորության վերաբերյալ եզրահանգում արել հետեւության մեջ եւ այն էլ՝ հիվանդության պատմագրի տվյալների հիման վրա: Ավելին, առանց մաշկալաթի եւ վերքային խողովակի դատահյուսվածքաբանական հետազոտության, ինչպե՞ս պետք է կատարվեր համալիր փորձաքննությունը»:

Փորձագետը, հիմք ընդունելով հիվանդության պատմագրի տվյալները, կատարել է եզրահանգում, որ կրակոցը կատարվել է տվյալ տեսակի զենքի համար կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից: Հարցի ստույգ պարզաբանման համար դատաբժշկական փորձագետը հղում է կատարել հագուստների հետքաբանական փորձաքննության վրա՝ նկատի ունենալով, որ հագուստները, լրացուցիչ գործոնների համար լինելով առաջին պատնեշ, կարող էին իրենց վրա վերցնել բոլոր լրացուցիչ գործոնները:

- Ջեկուցողները փաստաթղթի հաջորդ պարբերությունում արձանագրել են. «Անհասկանալի է, թե ինչու դատաբժշկական փորձագետը չի անդրադարձել մուտքի անցքի չափերին եւ չի նշել, թե դիակի արտաքին զննությամբ պարզված՝ 5 սմ երկարությամբ հրազենային «մուտքի» անցքը ինչ հեռավորության վրա կատարված կրակոցից կարող է առաջանալ: Ջեկուցողները փաստում են, որ դատաբժշկական փորձագետի կողմից դիակի արտաքին զննության արդյունքում ընդհանրապես չի նկարագրվել մուտքի անցքի շրջակայքում մաշկը, չի նշվել՝ առկա՞ են արդյոք կրակոցը բնութագրող լրացուցիչ գործոններ: Հայտնի փաստ է, որ ելնելով մուտքի անցքի չափերից՝ կարելի է որոշել կրակոցի հեռավորությունը:

*Այդ հարցի վերաբերյալ հստակ նշված է մասնագիտական գրականության տարբեր աղբյուրներում»:*

Նախ Տիգրան Աբգարյանի անվամբ «թիվ 1 կլինիկական հիվանդանոց» ՓԲ ընկերությունում լրացված թիվ 403/36 հիվանդության պատմությունում հերթապահ բժշկի կողմից 2008թ. մարտի 1-ին կատարված զննման արդյունքում արձանագրվել են վնասվածքի չափերը՝ պարանոցի առջևի մակերեսին, կոկորդի աջ կեսի վերին մասում կլոր, հարթ եզրերով 2x2 մմ չափսերի անցք: Վերքի խիստ փոքր և կլորավուն լինելը միանշանակ վկայում է կատարված մեկ կրակոցի՝ ոչ ընդհուպ լինելու մասին: Այնուհետև նշվում են ձեռնարկված բժշկական միջամտությունների մասին՝ 2008թ. մարտի 2-ին կատարվել է պարանոցի վերքի առաջնային վիրաբուժական մշակում, զննում և կարում, ելքի վերքի տամպոնադա:

Դատաբժշկական փորձագետի եզրակացությունում փորձագետը նկարագրել է, որ վնասվածքը ենթարկվել է վիրահատության, այնուհետև պարբերաբար մշակվել ու ենթարկվել բժշկական միջամտությունների: Բնականաբար վիրահատման և պարբերաբար մշակման ենթարկված վնասվածքը չէր կարող պահպանել նախկին չափերը, և դիակի դատաբժշկական փորձաքննության ընթացքում փորձագետն արձանագրել է վնասվածքի այդ պահին փաստացի կազմող չափերը՝ 5 սմ:

- Բացի վերը նկարագրվածը, զեկուցողները փաստաթղթում ակնհայտ խեղաթյուրել են Տիգրան Աբգարյանի մահվան հանգամանքները պարզելու նպատակով Փորձագետների փաստահավաք խմբին ՀՀ ՈԶ զինձառայողների տված բացատրությունները:

Փաստաթղթում նշված անձանց՝ Փորձագետների փաստահավաք խմբին տրված բացատրություններն ամբողջությամբ տեսաձայնագրված են: Ըստ այդմ՝ խմբի անդամներ Սեդա Սաֆարյանը և Անդրանիկ Քոչարյանը գոռգոռացել և վիրավորել են բացատրություններ տվող անձանց՝ փորձելով ստանալ իրենց համար ընդունելի պատասխաններ կամ արհեստականորեն ի հայտ բերել հակասություններ: Նման պայմաններում վերցված բացատրություններն ակնհայտ

խեղաթյուրված վիճակում ներկայացված են հենց այդ երկու անդամների կազմած հիշյալ փաստաթղթում:

Այսպես.

*1. «Հեռու տարածությունից արձակված կրակոցի արդյունքում բաճկոնի օձիքի վրա առկա ելքերի անցքերի մոտ մետաղացման հետքեր չէին կարող հայտնաբերվել: Մինչդեռ, դատաձգաբանական փորձաքննությամբ Տիգրան Աբգարյանի բաճկոնի օձիքի վրա առկա 19x9 մմ վնասվածքի, երեքական շոշափող եւ միջանցիկ վնասվածքների մոտ հայտնաբերվել է պղնձի մետաղացման թույլ հետքեր»:*

Փաստաթղթի վերլուծական մասում հեղինակները դատաձգաբանական, դատաբժշկական, դատահետքաբանական մասնագետներին հարիր ոճով կատարել են վերլուծություններ, հետազոտություններ, արել «անհերքելի» եզրահանգումներ: Մասնագիտական գիտելիքներ ունեցող անձինք չէին կարող չիմանալ, որ հրազենային ելքի վնասվածքների հատվածում մետաղացման հետքերի հայտնաբերումը վնասվածքն առաջացնող կրակոցի հեռավորության պարզաբանման հետ կապ չունի: Հեռու տարածությունից կատարված կրակոցի դեպքում ելքի վնասվածքի շրջանում պղնձի մետաղացման հետքեր կարող են հայտնաբերվել և չհայտնաբերվել, այսինք՝ դրա առկայությունը միանշանակ բացառել և կապել կրակոցի հեռավորության հետ չի կարելի: Կրակոցի հեռավորության հարցը պարզաբանվում է մուտքի վնասվածքի հատվածում մոտ կրակոցի լրացուցիչ գործոնների (վառողային մուր, անտիմոնի, պղնձի կամ այլ մետաղների հոմոգեն կամ անհամասեռ հետքերի վառ արտահայտվածություն, վառողի կիսաայրված մասնիկներ, թերմիկ ազդեցություն) ազդեցության հետքերի առկայությամբ կամ դրանց բացակայությամբ:

*2. «Դատաձգաբանական փորձագետները, եզրակացության հետեւության մեջ նշելով մի քանի հրազենային վնասվածքների մասին, փորձել են լրոզել եւ դրանք ներկայացնել որպես մեկ ելքային վնասվածք: Միեւնույն ժամանակ, եզրակացության հետեւության մեջ փորձագետները նշել են, որ տեղի է ունեցել առնվազն մեկ կրակոց, որով, փաստորեն, ընդունվել է մեկից ավելի կրակոցների*

*առկայությունը»:*

*3. «Դատաձգաբանական փորձագետների հետեւության մեջ չի հատակեցված հրազենային վնասվածների քանակը, դրանց դասավորվածությունը միմյանց նկատմամբ եւ չափերը, չնայած հետազոտական մասում ուսումնասիրվել են տարբեր հրազենային վնասվածքներ»:*

Դատահետքաբանական, դատաձգաբանական և պայթյունատեխնիկական համալիր փորձաքննության եզրակացությունը գրված է հստակ, փորձ չի արված ինչ-որ հարց «լողզել», հետևություններում չկա որևէ նշում մի քանի հրազենային վնասվածքների մասին, այլ արձանագրված է, որ հագուստի վրա նկարագրված վնասվածքները համակցության մեջ հանդիսանում են մեկ ընդհանուր ելքի վնասվածք: Տիգրան Աբգարյանի բաճկոնի փորձաքննությամբ մոտ, մասնավորապես՝ ընդհուպ կրակոցի հետքեր չեն հայտնաբերվել:

*4. «Դատաձգաբանական փորձագետների կողմից չի ուսումնասիրվել Տիգրան Աբգարյանի ձմեռային բաճկոնի առջևի՝ դիակի վրա առկա մուտքի անցքին համապատասխանող հատվածը, որը հնարավորություն կտար լրացուցիչ որոշելու կրակոցի հեռավորությունը: Որպես դրա հետեւանք, զեկուցողները արձանագրում են, որ եզրակացության հետեւության մեջ ոչինչ չի նշված կրակոցի հեռավորության մասին»:*

Կրակոցի արգասիքներ հայտնաբերելու ուղղությամբ փորձագետի կողմից կատարվել են համապատասխան հետազոտություններ նկարագրված վնասվածքներում և դրանց հարող մակերեսներում, որն իր մեջ ներառում է բաճկոնի օձիքն ամբողջությամբ՝ որպես մեկ ընդհանուր օբյեկտ: Այսինքն, հագուստի օձիքն ամբողջությամբ հետազոտելիս հետազոտվել է նաև Տիգրան Աբգարյանի մարմնի վրա հայտնաբերված հրազենային վնասվածքի մուտքի անցքին հարող հագուստի համապատասխան հատվածը, քանի որ համաձայն դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ հրազենային մուտքի անցքը գտնվում է Տիգրան Աբգարյանի պարանոցի առջևի աջ հատվածում: Բաճկոնի օձիքի հետազոտությամբ՝ մոտ կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության հետքեր չեն հայտնաբերվել, ինչն էլ հստակ արձանագրված է եզրակացությունում:

*5. «Տիգրան Աբգարյանի դիակի վրա առկա մուտքի անցքի չափերը (5 սմ երկարությամբ) մի քանի անգամ գերազանցում են գնդակի չափերը, ինչը բնորոշ է ընդհուպ կրակոցին»:*

Սույն հարցի պատասխանն արձանագրված է Տիգրան Աբգարյանի անվամբ «թիվ 1 կլինիկական հիվանդանոց» ՓԲ ընկերությունում լրացված թիվ 403/36 հիվանդության պատմագրում, որտեղ առաջին բուժզննում իրականացրած բժշկի՝ 2008թ. մարտի 1-ին կատարած զննման արդյունքում արձանագրվել են վնասվածքի չափերը՝ պարանոցի առջևի մակերեսին, կոկորդի աջ կեսի վերին մասում կլոր, հարթ եզրերով 2x2մմ չափսերի անցք: Վերքի խիստ փոքր և կլորավուն լինելը միանշանակ վկայում է կատարված մեկ կրակոցի՝ ոչ ընդհուպ լինելու մասին: Այնուհետև նշվում են ձեռնարկված բժշկական միջամտությունների մասին՝ 2008թ. մարտի 2-ին կատարվել է պարանոցի վերքի առաջնային վիրաբուժական մշակում, զննում և կարում, ելքի վերքի տամպոնադա:

Դատաբժշկական փորձագետի եզրակացությունում փորձագետը նկարագրել է, որ վնասվածքը ենթարկվել է վիրահատության, այնուհետև պարբերաբար մշակվել ու ենթարկվել բժշկական միջամտությունների: Բնականաբար, վիրահատման և պարբերաբար մշակման ենթարկված վնասվածքը չէր կարող պահպանել նախկին չափերը, և դիակի դատաբժշկական փորձաքննության ընթացքում փորձագետն արձանագրել է վնասվածքի այդ պահին փաստացի կազմող չափերը՝ 5 սմ:

Այսինքն՝ ակնհայտ են Տիգրան Աբգարյանի ստացած հրազենային վնասվածքի մուտքի անցքի չափերի փոփոխման պատճառները, որը հեղինակները ոչ միայն անտեսել են, այլև դիտավորյալ խեղաթյուրել են և կեղծել:

6. «Տիգրան Աբգարյանի դիակի վրա հրազենային մեկ վերքային խողովակի առկայությունը հետեւանք է այն բանի, որ առաջին գնդակը, հարվածելով ողնաշարի 5-7-րդ ողերին, առաջացրել է բազմաբեկորային վնասվածք՝ ոսկրաբեկորների տեղաշարժով, եւ ներթափանցումով ողնաշարային խողովակ՝ լայն ճանապարհ է բացել մնացած գնդակների՝ նույն ելքի անցքով դուրս գալու

համար: Հաջորդ գնդակները, դուրս գալով դիակի նույն ելքի անցքով, բնականաբար՝ բաճկոնի օձիքի վրա առաջացրել են առանձին ելքի անցքեր»:

Ավտոմատ կրակահերթ արձակելու դեպքում գնդակների միևնույն վերքային խողովակով անցնելու հնարավորության վերաբերյալ եզրահանգումը հիմնագուրկ է, քանզի գործնականում մնան բան հնարավոր չէ:

Այն հանգամանքը, որ Տիգրան Աբգարյանի պարանոցի շրջանում ընդամենը 1 կրակոցից առաջացած վերքային խողովակ կա, հաստատվում է դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ՝ համաձայն որի դիակի ներքին ուսումնասիրությամբ պարանոցային 6-րդ ողի շրջանում արձանագրվել է անցքավոր գլանաձև կոտրվածք՝ 0.6\*0.8 սմ տրամագծով: Նման պայմաններում տվյալ անցքով մեկից ավելի գնդակներ չէին կարող անցնել նույնիսկ ընդհուպ կրակոցի դեպքում:

*7. «Դատաբժշկական փորձագետի եզրակացության մեջ առկա է խուսափողական հետետություն. ըստ հիվանդության պատմագրի տվյալների՝ կրակոցը կատարվել է տվյալ տեսակի զենքի համար կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից, սակայն նշված հարցը ստույգ կլինի պարզաբանել հագուստների հետքաբանական փորձաքննությամբ եւ նույնիսկ՝ համալիր փորձաքննությամբ»:*

Դատաբժշկական փորձաքննության եզրակացությունում փորձագետը, հիմք ընդունելով հիվանդության պատմագրի տվյալները, կատարել է եզրահանգում. կրակոցը կատարվել է տվյալ տեսակի զենքի համար կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից, միաժամանակ, նշել է, որ հարցը ստույգ հնարավոր կլինի պարզել հագուստների հետքաբանական փորձաքննությամբ՝ նկատի ունենալով, որ հագուստները լրացուցիչ գործոնների համար լինելով առաջին պատնեշ, կարող էին իրենց վրա վերցնել բոլոր լրացուցիչ գործոնները:

*8. «Զննիչների կողմից Տիգրան Աբգարյանի զրահաբաճկոնը եւ մյուս հագուստները չեն առգրավվել եւ փորձաքննության չեն ենթարկվել, որոնք իրենց*



վրա կարող էին պարունակել կրակոցի հեռավորության մասին վկայող ապացույցներ»:

9. «Ըննիչների կողմից համալիր դատաձգաբանական եւ դատաբժշկական փորձաքննություն չի նշանակվել, ինչը կրկին հստակ կպարզեր կրակոցի հեռավորությունը»:

Հիշյալ հարցերի վերաբերյալ մանրամասն հիմնավորումները բերվել են սույն առարկությունների նկարագրական մասում:

10. «Տիգրան Աբգարյանը, ըստ գորամասի ղեկավարության վկայությունների, գտնվել է շարքի կենտրոնում, որը բացառել է գնդակի հետացատկ հարվածը: Նման հեռավորության վրա գնդակը, դիպչելով պատին, չէր կարող ուղիղ վերքային խողովակ առաջացնել եւ այնքան կիներտիկ ուժ ունենալ, որ առաջացներ 5-7-րդ ողերի բազմաբեկորային կոտրվածքներ: Բացի այդ, գնդակի հետացատկ հարվածի դեպքում կառաջանար կույր հրազենային վիրավորում, եւ բանկոնի օձիքի վրա բազմաթիվ ելքային վնասվածքներ չէին առաջանա»:

Ոչ քննությամբ և ոչ էլ փորձագիտական եզրակացություններով որևէ տվյալ ձեռք չի բերվել այն մասին, թե Տիգրան Աբգարյանը հրազենային վնասվածքը ստացել է արձակված գնդակի՝ պատին դիպչելու հետևանքով առաջացած հետացատկի արդյունքում: Ընդ որում, կախված կատարված կրակոցի հեռավորությունից, որևէ առարկայի հետ բախման անկյունից, արձակված գնդակի տեսակից և մի շարք այլ հանգամանքներից, նույնիսկ հետացատկի դեպքում կարող է առաջանալ հրազենային թափանցող վնասվածք:

11. «Դատաբժշկական փորձագետի կողմից Տիգրան Աբգարյանի դիակի վրա առկա մյուս վնասվածքները չեն հետազոտվել, դրանց առաջացման մեխանիզմը եւ վաղեմությունը չեն պարզվել»:

Բացի Տիգրան Աբգարյանի մարմնի վրա արձանագրված հրազենային վնասվածքի մուտքի և ելքի մեկական անցքերից, այլ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել. առկա են եղել պառկելախոցեր և բուժական միջամտությունների արդյունքում առաջացած վերքերի սպաքինված սպիներ, որոնք վերքեր են, այլ ոչ թե մարմնական վնասվածքներ:

12.. «Դատաբժշկական փորձաքննության եզրակացության հետետության մեջ նշված է՝ Տ. Աբգարյանի հետին ձախ ճակատային շրջանում ուղղաձիգ ուղղությամբ առկա են վարդագույն գծային ձեւի 4,5 սմ երկարությամբ, ձախ քունքային շրջանում ուղղաձիգ ուղղությամբ՝ 4,0 սմ երկարությամբ, պարանոցի ձախ կեսի առաջային մակերեսին՝ 10,0 սմ երկարությամբ, պարանոցի աջ կեսի առաջային մակերեսին՝ ծնոտի անկյունից սկսած՝ մինչեւ վերանրակային շրջանը՝ 10,0 սմ երկարությամբ սպիները, ինչպես նաեւ գլխի ծոծրակային շրջանում միմյանց սիմետրիկ դասավորությամբ առկա չորս հատ կլորավուն ձեւի, գորշ կեղեւով պատված վերքերը՝ քառանկյան անկյուններում դասավորված տեսքով, 2,0x1,0 սմ-ից 3,0x2,0 սմ չափսերով, առանց պարզաբանելու, թե դրանք ինչի արդյունք են եւ ինչ կապ ունեն պարանոցի հրազենային վիրավորման հետ: Անհասկանալի է, թե ինչու է փորձագետը դրանք ներկայացրել որպես «հրազենային վիրավորման բարդություն, եւ մահվան պատճառի հետ գտնվում են պատճառական կապի մեջ»: Ակնհայտ է, որ դրանք որեւէ առնչություն չեն կարող ունենալ հրազենային վնասվածքի հետ եւ արդյունք են ֆիզիկական ներգործության»:

Ոչ Տիգրան Աբգարյանի կենդանության օրոք կատարված դատաբժշկական փորձաքննության և ոչ էլ դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունների հետևություններում նման բան նշված չէ:

Ավելին, դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունում արձանագրված է, որ հրազենային վնասվածքը մահվան պատճառի հետ գտնվում է ուղղակի պատճառական կապի մեջ, իսկ հայտնաբերված հիվանդությունները (հետտրավմատիկ օբստրուկտիվ հիդրոցեֆալիա, վիճակ վենտրիկուլյոպերիտոնեալ շունտի տեղադրումից հետո, վիճակ տրախեոստոմայի տեղադրումից հետո, երկկողմանի թարախային ասպիրացիոն թոքաբորբ), հանդիսանում են որպես հիմնական հիվանդություն՝ պարանոցի հրազենային վիրավորման բարդություն, և մահվան հետ գտնվում են պատճառական կապի մեջ:

13. «Դեպքի կատարման վայրի վերաբերյալ գորամասի ղեկավարության տված բացատրություններում առկա են հակասական տվյալներ: Զրույցի

*հրավիրված մի շարք զինվորականներ հայտնել են, որ դեպքը կատարվել է իրենց աչքի առջև եւ տեղի է ունեցել Պարոնյան եւ Լեոյի փողոցների խաչմերուկում գտնվող առաջին դալանի մոտ, մյուս մասը ներկայացնում է, որ դեպքը կատարվել է Լեոյի փողոցի սկզբնամասում՝ «Սվին» խանութի մոտ, երրորդ տարբերակի համաձայն՝ դեպքը տեղի է ունեցել Լեոյի փողոցում գտնվող օդերեւութաբանական կենտրոնի շենքի մոտ: Հակասական են նաեւ վիրավորվելուց հետո Տիգրան Աբգարյանի տեղափոխման վայրի վերաբերյալ բացատրությունները: Այսպես, մի մասի բացատրության համաձայն՝ նրան տեղափոխել են Լեոյի փողոցում գտնվող պոլիկլինիկայի տարածք՝ նախապես ջարդելով դրա դարպասները, մյուս տարբերակի համաձայն՝ վիրավորվելուց հետո Տիգրան Աբգարյանին օդերեւութաբանական կենտրոնի աստիճաններով բարձրացրել են վերեւ»:*

Սույն առարկությունների նկարագրական մասում արդեն իսկ ներկայացվել են Փորձագետների փաստահավաք խմբում «հարցաքննությունների» պայմանները, որի ընթացքում բացատրություններում արհեստականորեն ի հայտ են բերվել հակասություններ, որոնք էլ իրենց հերթին խեղաթյուրված վիճակում ներկայացվել են զեկուցողների կազմած փաստաթղթում:

Վերը նկարագրված խեղաթյուրված և անհիմն տեղեկությունների ու տվյալների հիման վրա էլ զեկուցողներ Սեդա Սաֆարյանը և Անդրանիկ Քոչարյանը եկել են եզրահանգման. «Տիգրան Աբգարյանին հասցված հրազենային վնասվածքները պատճառվել են ավտոմատ ընդիուպ կրակահերթով .....: Վերջապես, Տիգրան Աբգարյանի մահվան փաստով քննությունը համարվել էր ավարտված, նրա սպանության կազմակերպման համար մեղադրանք էր առաջադրվել «Յոթի գործով», եւ գործն ուղարկվել էր դատարան»:

Փաստաթղթի հեղինակները եկել են այն եզրահանգման, որ Տիգրան Աբգարյանի «Մարմնի վերը նշված սպիների առկայությունը հետեւանք է ֆիզիկական ներգործության, որի ժամանակ նրա գլխին, ենթադրաբար, չի եղել սաղավարտ»:

Ինչպես արդեն նշվեց, մարմնի վրա հայտնաբերված հիշյալ սպիները բուժական միջամտության արդյունք են:

Տիգրան Արգարյանի մահվան հանգամանքները, նրան հրազենային վնասվածք պատճառած անձի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու ուղղությամբ քննությունը շարունակվում է, երբեք այն չի կասեցվել, առավել ևս՝ չի ավարտվել եւ շարունակվելու է, քանի դեռ բոլոր հանգամանքները չեն բացահայտվել: Նախաքննությունը շարունակվում է նաև մյուս 9 անձանց մահվան հանգամանքները բացահայտելու ուղղությամբ:

*Վերոգրյալի հիման վրա՝ նախաքննական մարմինը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ի կարգադրությամբ ստեղծված Փորձագետների փաստահավաք խմբի նախկին անդամներ Սեդա Մաֆարյանի և Անդրանիկ Քոչարյանի կողմից «ՀՀ ՈԶ 1033 գործնասի 2-րդ գումարտակի զինծառայող Տիգրան Արգարյանի մահվան հանգամանքները» վերնագրված փաստաթուղթը չի արտացոլում իրականությունը:*

### **Առարկություն 3-րդ**

**Փորձագետների փաստահավաք խմբի անդամներ Սեդա Մաֆարյանի և Անդրանիկ Քոչարյանի կազմած, «հատուկ միջոցների կիրառման հետ կապված փաստերի ուսումնասիրության արդյունքները» վերնագրված փաստաթղթի վերաբերյալ**

Հիշյալ փաստաթղթում կրկին միտումնավոր խեղաթյուրել, կեղծել են ինչպես ստացված տեղեկությունները, քրեական գործի նյութերը, այնպես էլ Փաստահավաք խումբ հրավիրված անձանց բացատրությունները:

Այսպես.

- Փաստաթղթում արձանագրված է. «Հաշվի առնելով, որ ՀՀ ոստիկանությունը հատուկ միջոցները ձեռք է բերում Ռուսաստանի Դաշնությունից, Փաստահավաք խմբի կողմից ուսումնասիրվեցին ՌԴ-ում դրանց կիրառման կարգը եւ անվտանգության միջոցները սահմանող փաստաթղթերը...

Փաստահավաք խումբ հրավիրված ՀՀ ՈՍ գործերի հրամանատարի նախկին տեղակալ, շտաբի պետ Գեղամ Պետրոսյանը հայտնեց, որ հատուկ միջոցները ձեռք են բերվել Ռուսաստանից, եւ արտադրող երկրի կողմից սահմանված կիրառման կարգը պարտադիր է իրենց համար»:

Փաստադրում վերլուծված են ՌԳ-ում հատուկ միջոցների կիրառման կարգը սահմանող փաստաթղթեր՝ առանց վկայակոչելու այդ փաստաթղթերը և դրանց ձեռքբերման աղբյուրները:

Ընդ որում, ՀՀ ՈԶ նախկին շտաբի պետ Գեղամ Պետրոսյանը Փաստահավաք խմբում տված իր բացատրություններում ոչինչ չի ասում այն մասին, որ հատուկ միջոցները ձեռք են բերվում ՌԳ-ից: Ընդամենը հայտնել է, որ դրանք մնացել են ԽՍՀՄ ներքին գործերից:

- Փաստաթղթում ճիշտ չէ արձանագրված, թե իբր հատուկ միջոցներից թունավորված ոչ մի զինծառայող տուժող չի ճանաչվել: 2008թ. մարտի 1-ին վնասվածքներ ստացած, այդ թվում նաև թունավորված բոլոր զինծառայողները ճանաչվել են տուժող:

- Փաստաթղթում կեղծված է ՀՀ ՈԶ ՀՆ ջոկատի հրամանատար Բագրատ Խաչատրյանի բացատրությունը, թե իբր վերջինս ընդունել է, որ *«Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակները նախատեսված են փակ տարածքներում օգտագործելու համար, իսկ «Չերյոմուխա-4»-ը՝ բաց տարածքներում՝ մասսայական անկարգությունների ժամանակ:*

Փաստացի Բագրատ Խաչատրյանը ինչպես իր նախաքննական ցուցմունքներում, այնպես էլ փաստահավաք խմբում հայտնել է, որ «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտները կիրառելի են ինչպես փակ, այնպես էլ բաց տարածքներում՝ ներկայացնելով դրանց կիրառման կարգը՝ երկու դեպքում էլ բացառելով դրանց կիրառումը մարդկանց խմբավորումների ուղղությամբ:

Ընդ որում, փաստահավաք խմբի անդամների կողմից ուսումնասիրված և տարբեր հարցերի կապակցությամբ իրենց ցանկալի ձևով մեկնաբանված նույն մեթոդական ձեռնարկում հստակ արձանագրված է, որ թեև «Չերյոմուխա-7» գազային նռնակը նախատեսված է մարդկանց խմբավորումների վրա

ազդեցություն բողնելու համար, սակայն արգելվում է դրանց կիրառումը մարդկանց խմբավորումների ուղղությամբ:

Այսինքն, միայն այն, որ արգելվում է «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակով կրակել մարդկանց խմբավորումների ուղղությամբ, չի բացառում դրա կիրառումը բաց տարածքում:

- Փաստաթղթում ճիշտ չէ արձանագրված, թե իբր Գեղամ Պետրոսյանը Փաստահավաք խմբում տված իր բացատրություններում հայտնել է, որ հատուկ միջոցների կիրառման խմբի տղաներն իրենք են **կրակել ցուցարարների վրա**: Ոչ Գեղամ Պետրոսյանը, և ոչ էլ ոստիկանության զորքերի որևէ զինծառայող ցուցմունքով կամ փաստահավաք խմբում տրված բացատրություններում երբևէ ոչինչ չի ասել ցուցարարների ուղղությամբ կրակելու մասին: Փոխարենը, Փաստահավաք խումբ հրավիրված բոլոր անձինք մանրամասն նկարագրել և բացատրել են, թե ինչ կարգով է կիրառվել «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակը:

Ինչ վերաբերում է ոստիկանության զորքերի ստորաբաժանումների ուղղությամբ զանգվածային անկարգության մասնակցի կողմից ընթացող ավտոմեքենայի առաջխաղացումը հարկադրաբար՝ «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակով կրակելու միջոցով կասեցնելուն և բազմաթիվ զինծառայողներին սպառնացող վտանգը կանխելուն, ապա տվյալ դեպքում ոստիկանները գործել են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով և իրավաչափ:

- Փաստաթղթի հաջորդ կետում կրկին կեղծվել է Գեղամ Պետրոսյանի բացատրությունը՝ արձանագրելով, թե իբր վերջինս հայտնել է. « *...**իրենց հատուկ միջոցները հին են եղել: Դրանք կրակելուց հետո ծուխը չի ցրվել եւ տարածվել է տեղում, որի հետևանքով թունավորվել են զինվորները: Իր կողմից այդ հարցը բարձրացվել է Հանրապետության ղեկավարության առջեւ, սակայն գումար չի տրամադրվել հատուկ միջոցներ ձեռք բերելու համար***»:

Փաստացի Գեղամ Պետրոսյանը փաստահավաք խմբում հայտնել է, որ փամփուշտները հին լինելու պատճառով չեն գործել ըստ նպատակային նշանակության, այլ ոչ թե, դրա պատճառով մարդիկ են թունավորվել:

Հատկանշական է, որ Փաստահավաք խմբի անդամները, իրենց ուսումնասիրությունների հիմքում դնելով հատուկ միջոցների կիրառման կարգի վերաբերյալ ՌԴ կանոնակարգերն ու տակտիկա-տեխնիկական բնութագրերը, որևէ կերպ չեն անդրադարձել նախաքննական մարմնի կողմից խմբին տրամադրված, հատուկ միջոցներն արտադրող ՌԴ ՆԳՆ «Հատուկ տեխնիկա և կապ» ԳԱՄ ՊՀ ՀՏԳՀ ինստիտուտում անցկացված փորձաքննության եզրակացությանը, որտեղ հստակ արձանագրված է. *«Պահպանման թույլատրելի ժամկետներն անցնելու դեպքում «Չերյոմուխա-7» («Չերյոմուխա-7Մ») տեսակի գազային նռնակով փամփուշտների մոտ կարող է տեղի ունենալ տեխնիկական բնութագրերի փոփոխություն՝ դրանց մարտական հատկությունների նվազման ուղղությամբ. արցունքաբեր ծխի արձակման տևողության նվազում, գազային նռնակի թռիչքի առավելագույն հեռավորության նվազում՝ փամփուշտի չգործելը հրապատիճի խափանման պատճառով: Ժամկետանց պահպանման ժամկետներով «Չերյոմուխա-7» («Չերյոմուխա-7Մ») տեսակի գազային նռնակով փամփուշտների կիրառումը մարդկանց դեմ վնաս չի պատճառի նրանց առողջությանը և կյանքին»:*

Փաստաթղթում ճիշտ չէ արձանագրված, թե իբր ՀՀ ՌԶ ՀՆ ջոկատի հրամանատար Բագրատ Խաչատրյանը Փաստահավաք խմբում տված իր բացատրություններում հայտնել է. ««ձկան խանութի» կողքի ձախ մայթի դալանից դուրս են եկել մարդիկ, քարեր շարտել իրենց ուղղությամբ, եւ նա հրաման է տվել կրակել «Չերյոմուխա-7»»՝ եզրահանգելով, որ վերջինս խախտել է թիվ 127 հրամանի պահանջը:

Բագրատ Խաչատրյանը նման հրաման չի արձակել և փաստահավաք խմբում նման բացատրություն չի տվել:

- Փաստաթղթում արձանագրված է. **«Բացի այդ, Բ. Խաչատրյանը Փաստահավաք խմբին հայտնեց, որ Լեռնի եւ Պարոնյան փողոցների**

*խաչմերուկում իրենց ուղղությամբ շարժվելիս է եղել բեռնատար մեքենա, եւ որ ինքը հրաման է տվել Ավետիք Աթաբեկյանին՝ «Չերյոմուխա-7» կրակել բեռնատարի դիմապակույն՝ վարորդի կողքի նստատեղի ուղղությամբ, սակայն չկարողացավ բացատրել, թե ինչպես պատահեց, որ նույնատիպ եւ գործով դեռեւս չպարզված բեռնատարի կողքին «Չերյոմուխա-7»-ից ստացած մարմնական վնասվածքից մահացել է Տիգրան Խաչատրյանը, այն էլ՝ գլխից եւ հետեւի կողմից ստացած վնասվածքից»:*

Անհասկանալի է, թե Սեդա Սաֆարյանը եւ Անդրանիկ Քոչարյանն ինչ նկատի ունեն՝ ասելով «նմանատիպ», սակայն գործով չբացահայտված բեռնատար, քանզի, եթե այն դեռեւս բացահայտված չէ, ապա որտեղից են ենթադրել, որ այն նմանատիպ է:

Տիգրան Խաչատրյանի մահվան կապակցությամբ կատարված քննությամբ պարզվել է, որ նա զանգվածային անկարգությունների մի խումբ մասնակիցների հետ գնացել է Պարոնյան և Լեոյի փողոցների խաչմերուկում գտնվող դալանի մոտ, որտեղ էլ, քննությամբ դեռևս չպարզված հանգամանքերում վիրավորվել ու մահացել է:

Իսկ եթե հիմք ընդունենք փաստահավաք խմբի՝ վերը նշված անդամների տրամաբանությունը և ընդունենք, որ Տիգրան Խաչատրյանը գտնվել է բեռնատար ավտոմեքենայի խցիկում (վարորդի կամ ուղևորի նստատեղում), որը փորձել է խոյահարել ՌԶ ստորբաժանումների զինձառայողներին, ապա նույնիսկ վառ երեսակայություն ունենալու պայմաններում դժվար է պատկերացնել դիմահար կրակոցի դեպքում ծոծրակի շրջանում վնասվածք ստանալու հանգամանքը: Քանզի, ինչպես արձանագրել են փաստահավաք խմբի անդամներն իրենց իսկ կազմած փաստաթղթում, Բ.Խաչատրյանը *«հրաման է տվել Ավետիք Աթաբեկյանին՝ «Չերյոմուխա-7» կրակել բեռնատարի դիմապակույն՝ վարորդի կողքի նստատեղի ուղղությամբ»:*

- Փաստաթղթում ճիշտ չէ արձանագրված, թե իբր ՀՀ ՌԶ ՀՆ ջոկատի հրամանատարի տեղակալ Մարտիրոս Դավրանյանը Փաստահավաք խմբում տված իր բացատրություններում հայտնել է. «իրենք «Չերյոմուխա-4»-ը և



«Չերյոմուխա-7»-ը կրակել են ամբոխի ուղղությամբ, սակայն դրանք չեն ազդել ժողովրդի վրա»:

Ինչպես վերն արդեն նշվել է, ոչ Մարտիրոս Գավրանյանը, և ոչ էլ ոստիկանության զորքերի որևէ զինձառայող ցուցմունքներում կամ փաստահավաք խմբում տրված բացատրություններում երբևէ ոչինչ չի ասել ցուցարարների կամ ամբոխի ուղղությամբ կրակելու մասին:

- Փաստահավաք խումբ հրավիրված Արմեն Անտոնյանին հարցեր տալիս Սեդա Սաֆարյանը, ակնհայտ կեղծելով նախաքննական մարմնի կողմից խմբին տրամադրված Արմեն Անտոնյանի ցուցմունքը, հարցում նշում է, թե իբր վերջինս ցուցմունք է տվել, որ զորամասում առկա բոլոր 6 հատ ԿՍ-23 տեսակի կարաբինները 2008թ. մարտի 1-ին օգտագործվել են, այն դեպքում, երբ ցուցմունքում արձանագրված է, որ 6 կարաբինները դուրս են բերվել զորամասից, սակայն փաստացի օգտագործվել են 2-ը: Չնայած նրան, որ Փաստահավաք խմբում Արմեն Անտոնյանը պնդել և հաստատել է իր նախաքննական ցուցմունքները, Փաստաթղթում արձանագրված է նույն կեղծիքը, թե՛ Արմեն Անտոնյանն իր ցուցմունքում հայտնել է, որ զորամասում առկա բոլոր 6 հատ ԿՍ-23 տեսակի կարաբինները 2008թ. մարտի 1-ին օգտագործվել են:

Ընդ որում, փաստահավաք խումբ հրավիրված անձանց բացատրությունների տեսագրություններն ուսումնասիրելիս ակնհայտ է, որ բոլոր դեպքերում խմբի նույն երկու անդամներն ամեն կերպ խեղաթյուրում, կեղծում են դեպքերի փաստական հանգամանքերը, փաստաթղթային տվյալները, փորձագետների եզրակացությունները, փորձում են ընդհուպ վիրավորանքեր հասցնելու և ճնշումներ գործադրելու միջոցով բացատրություններ տվող անձանցից ստանալ իրենց ցանկալի պատասխաններ կամ էլ ստացած պատասխանը վերաձևակերպում և շարադրում են այլ մեկնաբանմամբ, որն էլ հետագայում օգտագործել են փաստաթղթում և քաղաքական շահարկումների համար:

- Ուշագրավ է, որ խեղաթյուրվել է նաև հատուկ միջոցների կիրառման կարգի վերաբերյալ ունեցած տեղեկատվությունը, եւ դրանք կիրառած անձանց բացատրությունները փաստաթղթի սկզբնամասում արձանագրում են, որ

«Չերյոմուխա-7» գազային նռնակը կիրառելի է միայն փակ տարածքների համար, իսկ հետագայում, զարգացնելով իրենց եզրահանգումները, արդեն արձանագրում են, որ այն արգելվում է կիրառել բաց տարածքներում՝ անտեսելով, որ մեթոդական ձեռնարկում որևէ տեղ ասված չէ, որ այն նախատեսված է միայն փակ տարածքների համար կամ արգելվում է կիրառել բաց տարածքներում: Ավելին, մեթոդական ձեռնարկի 2-րդ գլխի 2.4 կետում ասված է. « հատուկ միջոցի տեսակը և դրա կիրառման հաճախականությունը որոշվում է ստեղծված իրավիճակը, իրավախախտման բնույթը և իրավախախտի անձը, ինչպես նաև հատուկ միջոցի տակտիկա-տեխնիկական բնութագիրը հաշվի առնելով»: Խմբի անդամները, յուրովի մեկնաբանելով մեթոդական ձեռնարկը, «Չերյոմուխա» տեսակի հատուկ միջոցի նպատակային նշանակության հարցը վերլուծելիս հստակ սահմանել են, թե հատուկ միջոցի որ տեսակը երբ է կիրառելի՝ վկայակոչելով մեթոդական ձեռնարկի 5-րդ գլխի 5.3-րդ կետը: Մինչդեռ, ձեռնարկի 5-րդ գլխի 5.3-րդ կետում՝ բնակավայրերում հակահասարակական դրսևորումները կանխելու նպատակով հատուկ միջոցի տեսակի ընտրության կապակցությամբ օգտագործված է «նպատակահարմար է» տերմինը, որը խորհրդատվական, այլ ոչ թե իմպերատիվ բնույթի է:

Հղում անելով ձեռնարկի 5.7-րդ կետին և արձանագրելով, որ փակ տարածքներում իրավախախտներին վնասազերծելու համար կիրառվում է միայն «Չերյոմուխա-7» գազային նռնակը՝ խմբի վերոհիշյալ անդամներն անտեսել են 5.7-րդ կետը՝ համաձայն որի փակ տարածքներում իրավախախտներին վնասազերծելու համար կարելի է կիրառել նաև «Չերյոմուխա-6» տեսակի հատուկ միջոցը:

Փաստաթղթում ոչինչ ասված չի հատուկ միջոցներն արտադրող ՌԴ ՆԳՆ «Հատուկ տեխնիկա և կապ» ԳԱՄ ՊՀ ՀՏԳՀ ինստիտուտում անցկացված փորձաքննության եզրակացության մասին, որտեղ հստակ արձանագրված է. «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակով փամփուշտների կիրառումը բաց տարածության մեջ չի արգելվում:

«Չերյոմուխա-7» («Չերյոմուխա-7Մ») տեսակի գազային նռնակով փամփուշտների կիրառման ժամանակ արգելվում է անմիջապես մարդու վրա

կրակը: Կրակը կարող է արձակվել իրավախախտների մոտ գտնվող տեղանքի կամ օբյեկտների վրա, ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել իրավախախտների վրա գազային ամպի տեղափոխումն ապահովող քանու ուղղությունը»:

Փաստաթղթում ճիշտ չէ արձանագրված նաև, թե իբր ըստ Սկրտիչ Դարիբյանի՝ «Չերյոմուխա-7» հատուկ միջոցը կրակել է նաև Լեոյի փողոցում գտնվող դալանի մեջ, որտեղ հավաքված են եղել ցուցարարներ: Փաստահավաք խմբում տված իր բացատրություններում և նախաքննական ցուցմունքներով Մ.Դարիբյանը նման բան չի հայտնել:

- Փաստաթղթում արձանագրված է, որ փաստահավաք խմբին պարզ չդարձավ, թե որոնք են գազային նոնակների նույնացման համար անհրաժեշտ հատկանիշները: Այն դեպքում, երբ փաստահավաք խումբ հրավիրված փորձագետը խմբի անդամներին պարզաբանել է նույնացման համար անհրաժեշտ հատկանիշների բնույթը, տեսակը, համեմատական հետազոտման կարգը:

- Ինչ վերաբերում է հատուկ միջոցից վնասվածք ստացած Խաչիկ Դավթյանի նկատմամբ խոշտանգման կիրառմանը, ապա Խաչիկ Դավթյանի հիշյալ հայտարարություններն իրականությանը չեն համապատասխանում:

Այսպես.

2008թ. մարտի 4-ին որպես վկա հարցաքննվելիս Խաչիկ Դավթյանը փորձելով թաքցնել 2008թ. մարտի 1-ին Երևանում տեղի ունեցած զանգվածային անկարգություններին իր անմիջականորեն մասնակցելու և այդ ընթացքում մարմնական վնասվածք ստանալու հանգամանքը, սուտ ցուցմունք է տվել, թե հիշյալ մարմնական վնասվածքն ստացել է պատահաբար, երբ իր ծանոթ Նորայր Գևորգյանի հետ 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 19-ից 20-ի սահմաններում, փորձել է տաքսի ծառայության ավտոմեքենայով հեռանալ վերջինիս ընկերոջ տան մոտից, որը գտնվում է Մ.Մաշտոցի պողոտայի մոտակայքում, և հիշյալ վնասվածքն ստանալուն ներկա է եղել նաև Նորայր Գևորգյանը: Վերը նշված շինծու և իրականությանը չհամապատասխանող ցուցմունքից Խաչիկ Դավթյանը հրաժարվել և ընդունել է զանգվածային անկարգություններին անմիջականորեն մասնակցելու փաստը, միայն այն ժամանակ, երբ նախաքննության ընթացքում

Նորայր Գևորգյանը ցուցմունքով հայտնել է, որ Խաչիկ Դավթյանը ստում է, նրա մարմնական վնասվածք ստանալուն ականատես չի եղել և նշված պահին նրա կողքին չի գտնվել:

2008թ. մայիսի 16-ին Խաչիկ Դավթյանը, նախաքննական մարմնին ներկայացնելով դեպքերի իրական պատկերը և խոստովանելով զանգվածային անկարգություններին անմիջականորեն մասնակցելու, իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքը, հետագայում փաստահավաք խմբում, ինչպես նաև «Հայկական Ժամանակ» օրաթերթի լրագրողին հայտնել է, թե իբր 2008թ. մայիսի 16-ի ցուցմունքը, չնայած այն բանի, որ գրվել է իր կողմից, իր ձեռքով, իրականությանը չի համապատասխանում, քանզի այն կորզվել է քննիչների կիրառած բռնության և ճնշումների գործադրման հետևանքով:

Խաչիկ Դավթյանի հիշյալ հայտարարությունները հերքվել են նախաքննության ընթացքում վերջինիս տված լրացուցիչ ցուցմունքներով, մասնավորապես՝ նրա անտրամաբանական և անհասկանալի պատասխաններով, փաստահավաք խմբում արված հայտարարությունների և նախաքննության ընթացքում տված ցուցմունքների միջև առկա հակասություններով, ինչպես նաև՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական խմբի քննիչ Աշոտ Խաչատրյանի հետ առերես հարցաքննությամբ:

### **Այսպես.**

1. Փաստահավաք խմբին հայտնել է, որ ականատես է եղել մի երիտասարդի վիրավորվելու դեպքին, մինչդեռ 2008թ. մայիսի 16-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում Ա.Խաչատրյանի կողմից որպես վկա հարցաքննվելիս Խ.Դավթյանն իր կողմից գրված ցուցմունքում վիրավորված երիտասարդի վերաբերյալ որևէ տեղեկություն չի հայտնել:

2. Խ.Դավթյանը փաստահավաք խմբում, ինչպես նաև 2009թ. մայիսի 13-ի «Հայկական Ժամանակ» օրաթերթին հայտնել է, որ հիշյալ երիտասարդի վիրավորվելու վայրում տեսել է տարբեր տրամաչափի պարկուճներ, այդ թվում՝

«Սնայաերի», մինչդեռ 2009թ. հունիսի 19-ի հարցաքննության ժամանակ հայտնել է, որ այդ ամենը ենթադրություն է եղել:

3. Խ.Դավթյանը չի տեսել և չի հայտնել, թե այդ կրակոցը, որի հետևանքով վիրավորվել է հիշյալ երիտասարդը, որ կողմից է եղել:

4. Փաստահավաք խմբում հայտնել է, որ երբ հիշյալ երիտասարդը վայր է ընկել, այդ ընթացքում արդեն օգտագործվում էր արցունքաբեր գազ, մինչդեռ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարցաքննվելիս այդ մասին ոչինչ չի հայտնել:

5. Փաստահավաք խմբում նշել է, որ վիրավորված երիտասարդի հագին եղել է սև «պիջակ», իսկ 2009թ. մայիսի 25-ի հարցաքննության ժամանակ նշել է, որ հիշյալ երիտասարդի հագին եղել է մուգ տաքատ, վերևի հագուստի գույնը չի տպավորվել:

6. Փաստահավաք խմբին և «Հայկական Ժամանակ» օրաթերթին հայտնել է, որ վիրավորվածը երիտասարդ է եղել, մինչդեռ ցուցմունքում նշել է, որ երիտասարդի դեմքը չի տեսել, սակայն ենթադրել է, որ վիրավորվածը երիտասարդ է:

7. 2009թ. օգոստոսի 17-ին առերես հարցաքննվելիս քննիչ Ա.Խաչատրյանը հերքել է Խ.Դավթյանի այն հայտարարությունը, թե իբր 2008թ. մայիսի 16-ի հարցաքննության ժամանակ բռնություն և ճնշում է գործադրվել վերջինիս նկատմամբ, որի արդյունքում ցուցմունք է կորզվել: Բացի այդ, հերքել է այն փաստը, որ նույն հարցաքննության ժամանակ չի թույլատրվել արձանագրել Խ.Դավթյանի նշած՝ հիշյալ երիտասարդի մարմնական վնասվածքներ ստանալու դեպքի հանգամանքները, որը անտրամաբանական է, քանի որ Խ.Դավթյանը կանչվել է հարցաքննության 2008թ. մարտի 1-ին և 2-ին Երևանի կենտրոնական փողոցներում տեղի ունեցած զանգվածային անկարգություններին մասնակցելու և քրեական գործով իրեն հայտնի այլ հանգամանքներ պարզելու կապակցությամբ:

Փաստահավաք խմբին հայտնել է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ.Հովակիմյանը 2009թ. ապրիլի 27-ին իրեն կանչել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն և ցուցմունք է վերցրել, ապա ասել, որ որևէ մեկին, այդ թվում նաև փաստահավաք խմբին, չհայտնի ՀՀ հատուկ քննչական ծառայություն

գալու մասին: Խ.Դավթյանի հիշյալ հայտարարությունը նույնպես մտացածին է և անտրամաբանական, քանի որ հարցաքննության արձանագրության մեջ հստակ նշվել է հարցաքննող քննիչի տվյալները, հարցաքննության օրը, վայրը, ժամը, բացի այդ, ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչական շենքի անցագրային կետում առկա է Խ.Դավթյանի անվամբ լրացված՝ շենք մուտք գործելու անցագիր՝ ՀԿԳ քննիչ Գ.Հովակիմյանի ստորագրությամբ, որպիսի պայմաններում Գ.Հովակիմյանը ցանկության դեպքում չէր կարող թաքցնել Խ.Դավթյանի՝ 2009թ. ապրիլի 27-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչական շենք մուտք գործելու հանգամանքը:

.....

2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունները Հայաստանի Հանրապետությունում նախադեպը չունեցող հանցագործություն էր, ինչը նկատի ունենալով՝ ՀՀ գլխավոր դատախազը դեռևս նախաքննության սկզբնական փուլում գրավոր դիմել է միջազգային կառույցներին՝ ԵԱՀԿ Երեսնյան գրասենյակին, ՄԱԿ-ի հայաստանյան ներկայացուցչությանը, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մոնիտորինգի հանձնաժողովի համագեկուցողներին, Մարդու իրավունքների հանձնակատարին, ԱՄՆ դեսպանատանը՝ խնդրելով տրամադրել համապատասխան փորձագետներ, ովքեր իրենց մասնագիտական գիտելիքներով և փորձառությամբ կարող են նպաստել գործի քննությանը: Սակայն նման փորձառություն ունեցող փորձագետների և համագործակցության պրակտիկայի բացակայության պատճառաբանությամբ մասնագետներ չտրամադրվեցին:

**Հայաստանի Հանրապետության Նախագահի հանձնարականը  
և քրեական գործի ընթացքը**

2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների և տասն անձանց մահվան դեպքերի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է, ինչի կապակցությամբ ՀՀ Նախագահը հանձնարական է տվել իրավապահներին առավել ակտիվացնել քննությունը՝ մասնավորապես տասն անձանց մահվան հանգամանքները բացահայտելու ուղղությամբ, վերանայել նախկինում ձեռք բերված ապացույցները, քննարկել հնարավոր բոլոր տարբերակները դեպքերը բացահայտելու համար:

ՀՀ Նախագահի հանձնարարականի պահանջները կատարելու կապակցությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում՝ քննչական խմբի մասնակցությամբ հրավիրվել է խորհրդակցություն, պլանավորվել են կատարվելիք նոր և լրացուցիչ աշխատանքները, քննչական խմբին հանձնարարվել է վերանայել քրեական գործով ձեռք բերված ապացույցները, մեկ անգամ եւս ստուգել դրանց աղբյուրները, վերանայել քրեական գործով տուժողների իրավահաջորդների, տուժողների, վկաների ցուցմունքները, մանրագնին հետազոտել բոլոր փորձաքննությունների եզրակացությունները, անհրաժեշտության դեպքում նշանակել լրացուցիչ կամ նոր փորձաքննություններ, օպերատիվ ծառայություններին տալ նոր հանձնարարականներ՝ դեպքերի բացահայտման ուղղությամբ:

Հանձնարարականի ներքո քննչական խումբը համալրվել է կրկին բարձր մասնագիտական գիտելիքներով, կարևոր և բարդություն ներկայացնող գործերի քննության փորձառություն ունեցող նոր քննիչներով:

Նրանց կողմից ուսումնասիրվել և վերանայվել են մի քանի հարյուր հատոր կազմող եւ 100.000 թերթը գերազանցող քրեական գործի նյութերը, հարյուրավոր

փորձագիտական եզրակացություններ, մի քանի տասնյակ ժամ տևողությամբ տեսանյութեր և գործի այլ ապացույցներ:

Ուսումնասիրության արդյունքները պարբերաբար ենթարկվել են քննարկման, լրամշակվել է քննչական պլանը: Քննչական խմբի կազմում վերաձեւավորվել են ենթախմբեր՝ ըստ կատարված հանցագործությունների տեսակների, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց գույքի վնասում, քաղաքացիական անձանց եւ ոստիկանության ծառայողներին թեթեւ, միջին, ծանր եւ կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածքների պատճառում եւ այլն: Հանցագործության յուրաքանչյուր տեսակ ուսումնասիրվել է ըստ դրվագների՝ համադրելով ձեռք բերված ապացույցները:

Դրանց հիման վրա հարցաքննվել են 500-ից ավել նոր վկաներ, կատարվել են շուրջ 150 լրացուցիչ հարցաքննություններ, նշանակվել են տեսաձայնագրային 4, տեսաձայնագրային և դատաձգաբանական համալիր փորձաքննություններ: Տրվել են տարբեր օպերատիվ-որոնողական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ մեկ տասնյակից ավելի հանձնարարականներ՝ մասնավորապես արձանագրված 10 մահվան դեպքերի առանձին հանգամանքներ պարզելու ուղղությամբ: Տեսագրությունների եւ լուսանկարների ուսումնասիրության արդյունքում հանձնարարվել է պարզել մի շարք անձանց ինքնությունը, ովքեր հնարավոր է՝ ականատես են եղել կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածքները պատճառելուն, գտնվել են դեպքի վայրում, եւ նրանց ներկայացնել քննությանը: Միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ շուրջ 20 հեռախոսահամարներից կատարված հեռախոսազանգերի վերծանումներ ստանալու խնդրանքով, եւ դատարանների թույլտվությամբ ստացվել են նշված հեռախոսահամարների վերծանումները, կատարվել դրանց ուսումնասիրություն և մշակում: Կատարված գործողությունների արդյունքում նախատեսվում է լրացուցիչ հարցաքննել ավելի քան 500 անձ:

Նախաքննության ընթացքում ՀՀ հատուկ քննչական ծառայությունը բազմիցս հայտարարություններ է տարածել զանգվածային լրատվամիջոցներով՝ 2008թ. մարտի 1-ից 2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային



անկարգությունների ընթացքում կատարված հանցագործությունների, առավելապես տասն անձանց մահվան հանգամանքների վերաբերյալ տեղեկատվություն ունեցող անձանց ՀՀ հատուկ քննչական ծառայություն ներկայանալու խնդրանքով, սակայն մինչ օրս նախաքննական մարմինը որևէ արձագանք, այդ թվում նաև տուժողների իրավահաջորդների ներկայացուցչներից՝ նախաքննությունը լրացնելու միջնորդություն չի ստացել:

2011թ. մայիսի 23-ին ինտերնետային youtube.com կայքում «martimek2008» անվամբ գրանցված կայքի բաժանորդը տեղադրել է 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունները պատկերող տեսաձայնագրության հատված՝ «ահա՛, թե ինչպես են կրակում 2008թ. մարտի 1-ին ...» վերնագրով, որտեղ՝ ըստ մամուլի հրապարակումների՝ պատկերված է, թե ինչպես է ոստիկանության աշխատակիցը կրակոցներ արձակում զանգվածային անկարգության մասնակիցների ուղղությամբ:

Տեսանյութերում մոնտաժման կամ համակարգչային մշակման հետքերի առկայությունը պարզելու, տեսագրություններում առկա պատկերները հնարավորինս պարզեցնելու և առկա պատկերների նույնականացման հարցը որոշելու նպատակով նշանակվել է դատահամակարգչային փորձաքննություն, որի եզրակացության համաձայն տեսագրումը կատարվել է հեռու տարածությունից, բարձր անկյան տակ, գիշերային ժամին, վատ լուսավորության պայմաններում: Նման տեսագրությունից ստացված տեսապատկերները պիտանի չեն համակարգչային ավտոմատացված եղանակով նույնականացման համար:

Տեսանյութում պատկերված՝ ոստիկանության համազգեստով անձի կիրառած զինատեսակը պարզելու նպատակով նշանակվել է տեսաձայնագրային և դատաձգաբանական համալիր փորձաքննություն, որի շրջանակներում, փորձագետի միջնորդության հիման վրա քննչական խմբի կողմից, փորձագետների և համապատասխան մասնագետների մասնակցությամբ կատարվել է քննչական փորձարարություն, որի ընթացքում փորձարարական կրակոցներ են կատարվել 2008թ. մարտի 1-ին Երևան քաղաքի Պարոնյան փողոցի հատվածում ծառայություն կատարած անձանց տրամադրված՝ քննությամբ պարզված զինատեսակներով և

փամփուշտներով: Զննչական փորձարարության ընթացքը տեսագրվել է համապատասխան տեխնիկայով և տրամադրվել է փորձագետներին:

Փորձաքննության եզրակացությամբ արձանագրվել է. «տրամադրված «maritimek2008» տեսագրությունում ուստիկանական համազգեստով անձի կողմից ընդհատումներով կատարված հավանական երկու կրակոցները հնարավոր է՝ կատարված լինեն «ԱԿՍՈՒ» ինքնաձիգից անզնդակ փամփուշտներով»: Միաժամանակ արձանագրվել է, որ տեսանյութում առկա տվյալները չեն պարունակում հատկանիշների այնպիսի համակցություն, որով հնարավոր լինեք պարզել կրակոցի փաստը կոնկրետ զենքից, կոնկրետ փամփուշտներով, այն բավարարում է միայն հավանական հետևություն կատարելուն, քանի որ տեսանյութը նկարահանված է հեռվից, արհեստական լուսավորության պայմաններում, չի ապահովում տեսապատկերների հստակություն, և տվյալ անձի մոտ որևիցե զենքի նմանվող պատկեր չի նշմարվում:

Նկատի ունենալով, որ կատարված փորձաքննություններով գործի համար նշանակություն ունեցող մի շարք հարցերին փորձագետները սպառնիչ պատասխաններ չեն տվել, ուստի դրանք ստանալու համար համապատասխան փորձագետներ ներգրավելու խնդրանքով ՀՀ գլխավոր դատախազը ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով դիմել է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսին, Հայաստանի Հանրապետությունում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Սիլվիա Ջեհեյին, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մոնիտորինգի հանձնաժողովի համազեկուցողներ Ջոն Պրեսկոտինին և Աքսել Ֆիշերին, Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ղեկավար Դաֆինա Գերչևային, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգին՝ երաշխավորելով ապահովել փորձագետների աշխատանքների իրականացման համար բոլոր անհրաժեշտ պայմանները՝ փորձաքննությունն ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում անցկացնելու համար: Որոշ միջազգային կազմակերպությունների

կողմից նման փորձառություն ունեցող փորձագետների և համագործակցության պրակտիկայի բացակայության պատճառաբանությամբ մասնագետներ չտրամադրվեցին:

Հարցի կապակցությամբ պարզաբանումներ են տրվել Մարդու իրավունքների հանձնակատարին: Վերջինիս խնդրանքով ուղարկվել են լրացուցիչ տվյալներ՝ պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ:

2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքի կենտրոնական փողոցներում զանգվածային անկարգությունների և սպանությունների դեպքերի առթիվ հարուցված և ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող քրեական գործով հանրային իրազեկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի մայիսի 16-ի հանձնարարականով քննչական խմբի ղեկավարն ու քրեական գործով դատավարական ղեկավարումն իրականացնող դատախազները ամիսը երկու անգամ հանդիպել են զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ: 2011 թվականի սեպտեմբերից հանդիպումների կազմակերպման հաճախականությունը փոփոխվել է՝ նկատի ունենալով, որ լրատվամիջոցների հետաքրքրությունը նվազել էր: Ներկայումս հանդիպումները լրագրողների հետ կազմակերպվում են ըստ անհրաժեշտության՝ հիմք ընդունելով նրանցից ստացվող հարցումների ծավալը: Կազմակերպվում են նաև առանձին հարցազրույցներ, գրավոր հարցումներին տրվում են գրավոր պատասխաններ, մեկնաբանություններ:

Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր քննչական գործողությունները, օպերատիվ-որոնողական միջոցառումները հանցագործություն կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ: ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարել է նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազներին՝ ստուգել նաև իրականացվող օպերատիվ-որոնողական միջոցառումները:

### **ՀՀ հատուկ քննչական ծառայություն**

